



Ակտիվացում աղքատության կրճատման համար

Հայաստանի սոցիալական
ապահովության համակարգի
ներուծի օգտագործումը

Մեպտեմբեր 2014 թվական

Սոցիալական պաշտպանության և աշխատուժի

համաշխարհային պրակտիկա



WORLD BANK GROUP

Երախտիքի խոսք

Սույն փաստաթուղթը պատրաստել է Մատեո Մորգանդիի գլխավորած աշխատանքային խումբը, որի կազմում ընդգրկված էին Ժոզեֆինա Պոսադասը և Թոմաս Դամերաուն՝ Քսիմենա Դել Կարպիոյի և Ռեբեկա Գրունի ղեկավարությամբ և օգնությամբ (աշխատաշուկայի և սոցիալական ներառվածության գծով տեխնիկական օգնության P132514 աշխատանքային խմբի ղեկավարներ): Սուլեդադ Ջարդիլին, Լիզա Օբերլանդերը և Լաուրա Սիննը վերլուծական և հետազոտական աջակցություն են ցույց տվել:

Փաստաթղթի տեղեկատվական նյութերը պատրաստել են Դենիս Նիկիտինը (նպաստների բանաձևի վերլուծություն), Սուսաննա Կարապետյանը (սոցիալական նպաստների ամփոփում), Պոլա Նագլերը («ԳՈՐԾ» վարչական տվյալների վերլուծություն), Լիզա Օբերլանդերը (ՏՀԶԿ-ի հարկերի և նպաստների մոդելը Հայաստանի համար): Փաստաթղթի մշակման տարբեր փուլերում խորհրդատվական մեծ աջակցություն են ցույց տվել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմը, խմբագրողներ Ալին Կուդելը, Քեթի Լինդերտը և Նիսթա Սինհան, ինչպես նաև տարբեր գործընկերներ, այդ թվում՝ Բորիանա Գոչևան, Այլին Իսիկ Դիկմելիքը, Ալեքսան Հովհաննիսյանը, ոլորտի և պրակտիկ աշխատանքների ղեկավար Օմար Արիասը և Էնդի Մեյսոնը: Լաուրա Ս. Շերերն իրականացրել է փաստաթղթի համապարփակ մասնագիտական խմբագրումը: Սուջանի Էլին և Սաթիկ Նաիրյանը տրամադրել են վարչական օժանդակություն:

Հղումների դեպքում նշել՝ Morgandi M., J. Posadas and T. Damerau. 2014. “Activation for Poverty Reduction. Realizing the Potential of Armenia’s Social Safety Nets”. Social Protection and Labor Global Practice, the World Bank, Washington DC.

Սույն զեկույցը կազմել է Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի / Համաշխարհային բանկի աշխատակազմը: Սույն հատորում ներկայացված արդյունքները, մեկնաբանությունները և եզրակացությունները պարտադիր չէ, որ արտացոլեն Համաշխարհային բանկի Գործադիր տնօրենների կամ նրանց ներկայացրած կառավարությունների տեսակետը:

Բովանդակություն

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ	6
ՈՊՂԳ ՈՉ ՊԱՅՄԱՆԱՅԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՓՈԽԱՆՑՈՒՄ	7
ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ	8
ՆԱԽԱԲԱՆ.....	8
ՈՒՄ ՀԱՄԱՐ Է ՆԱԽԱՏԵՄՎԱԾ ԱԿՏԻՎԱՑՈՒՄԸ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԽՈՑԵԼԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԻՔԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ	9
ԱԿՏԻՎ ՆԵՐԱՌՄԱՆ ԸՆԴԱՌԱՋ. ԱՐԴՅՈՔ ՆԵՐԿԱ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՊԱՏՐԱ՞ՍՏ Է ԱԿՏԻՎԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ	12
ՆՈՐ ԱԿՏԻՎԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՌԱՋԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	15
ԳԼՈՒԽ 1. ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱԿՏԻՎԱՑՄԱՆ ՀԱՍՑԵԱՏԵՐԵՐԻ ՊԱՏԿԵՐԸ.....	21
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՑԵԼԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊՐՈՑԵՍԸ.....	25
ԻՆՉՈ՞Վ ԿԱՐԵԼԻ Է ԲԱՑԱՏՐԵԼ ԱՂՔԱՏՆԵՐԻ և ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՎԵԼԻ ՑԱԾՐ ՄԱԿԱՐԴԱԿԸ.....	35
ԳԼՈՒԽ 2. ԱՐԴՅՈՔ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՊԱՏՐԱ՞ՍՏ Է ԱԿՏԻՎԱՑՄԱՆԸ.....	43
ԱՅՐ ՄԱՀՄԱՆԱԾՈՎ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՄԱԿԱՎԱԹՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ԾՊՏՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ԲԱՐԵԼԱՎԵԼ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՊՐՈՑԵՍԸ.....	45
ՆԱԽԱԲԱՆ.....	46
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ և ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԸ.....	48
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՐԴՅՈՒՆՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ԿՐՃԱՏՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ.....	54
ԸՆՏԱՆԵԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ԱԿՏԻՎԱՑՄԱՆ ՏԵՄԱՆԿՑՈՒՆԻՑ.....	63
ՈՐՔԱ՞Ն ՄԵԾ Է ԸՆՏԱՆԵԿԱՆ ՆՊԱՍՏԻ ԾՐԱԳՐԻ ԱԿՏԻՎԱՑՄԱՆ ՆԵՐՈՒԺԸ.....	63
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՇԱՐԺՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ և ԾՐԱԳՐԻՑ ԴՈՒՐՄ ՄՆԱԼՈՒ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ.....	66
ԿԱՐՈ՞Ղ ԵՆ ԱՐԴՅՈՔ ԱԿՏԻՎԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ՆՊԱՍՏԵԼ ԾՐԱԳՐԻՑ	77
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՀԵՌԱՑՄԱՆԸ.....	77
ԳԼՈՒԽ 3. ՆՈՐ ԱԿՏԻՎԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՌԱՋԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	81
ՎԵՐԱՓՈԽԵԼ ՀԱՍՑԵԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԾԱԾԿՈՒՑԹԻ ՊԱԿԱՄԻ ԿՐՃԱՏՄԱՆ և ԿՈՈՐԴԻՆԱՑՄԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՀԱՄԱՐ.....	84
ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾԵԼ ԾՐԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ՈՐԸ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԿՏԱ ԲԱՐԵԼԱՎԵԼՈՒ ԱՇԽԱՏՈՒՆԱԿ ԱՆՁԱՆՑ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ և ԱՊԱԳԱ ԱՇԽԱՏՈՒԺԻ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼԸ.....	89

ԱԿՏԻՎԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԱՇԽԱՏՈՒՆԱԿ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻՆ ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱՅՈՒՄ ՆԵՐԳՐԱՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ.....	92
ԱՊԱԳԱ ՍԵՐՆԻ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼԻ ԿՈՒՏԱԿՄԱՆԸ ՆՊԱՍՏԵԼՈՒ ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ.....	98
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.....	106
ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՎԱՐՎԵԼԱԿԵՐՊԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ և ՆՊԱՍՏՆԵՐԻ ԳԾՈՎ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԸ ՏՀԶԿ և ԱՐԽԵԼՅԱՆ ԵՎՐՈՊԱՅԻ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ	111
ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՀԱՐԿԵՐԻ և ՆՊԱՍՏՆԵՐԻ ՄՈՂԵԼ. ԼՐԱՑՈՒՑԻՉ ՀԱՇՎԱՐԿՆԵՐ.....	129

Հապավումներ

ԱՇԱԾ	աշխատաշուկայի ակտիվ ծրագրեր
ՄԱ	միջին աշխատավարձ
ԴՊՓ	պայմանային դրամական փոխանցում
ՀՌԿԿ	Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն
ԱԵԿ	Աշխատանքի և եկամտի կենտրոն
ԵԿԱ	Եվրոպա և Կենտրոնական Ասիա
ԵՄ	Եվրոպական Միություն
ԸՆԾ	ընտանեկան նպաստի ծրագիր
ՀՆԱ	համախառն ներքին արդյունք
ՏՏԿԱՀ	Տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտություն
ՆԴՓ	նպատակային դրամական փոխանցում
ԵԺԳ	երկարաժամկետ գործազրկություն
ԱՇ	աշխատաշուկա
ՍԱՊԾ	Սոցիալական անապահովության կրճատման ծրագիր
ԿՏՀ	կառավարման տեղեկատվական համակարգ
ԱՍՀՆ	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
ՆԱ	նվազագույն աշխատավարձ
ՏՀԶԿ	Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն
ՀԶԾ	հանրային զբաղվածության ծառայություններ
ԱՄՄԳ	անապահովության միավորի անուղղակի գնահատում
ՍԱ	սոցիալական աջակցություն

ԶՊԾԳ	«Զբաղվածության պետական ծառայություն» գործակալություն
ՍԱՊ	սոցիալական ապահովագրություն
ՍՊ	սոցիալական պաշտպանություն
ԲՄՓՀ	Բժշկասոցիալական փորձաքննության հանձնաժողով
ՍՊԿԾ	Սոցիալական պաշտպանության ոլորտի կառավարման ծրագիր
ՍԱՊՀ	սոցիալական ապահովության պետական համակարգ
ՍԱՑ	սոցիալական ապահովության ցանց
ՍԱՊԾ	Սոցիալական ապահովության պետական ծառայություն
ՄՕՏԿ	սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոն
ՈՊԴՓ	ոչ պայմանային դրամական փոխանցում

Համառոտագիր

Նախաբան

Տնտեսական ճգնաժամի գագաթնակետը հատելուց հետո Հայաստանում կրկին արձանագրվել է աղքատության մակարդակի որոշակի կրճատում, և 2009 թ. 34 տոկոսի համեմատ՝ 2012 թ. այն կազմել է 32 տոկոս: Դրան գուզահեռ՝ նույնպիսի սահմանափակ աշխուժացում նկատվել է նաև աշխատաշուկայում, մասնավորապես՝ նոր աշխատատեղերի ստեղծման առումով: Ինչպես կներկայացվի սույն ուսումնասիրության հետագա բաժիններում, գործազրկությունն ու աղքատությունը Հայաստանում սերտորեն փոխկապակցված են: 2013 թ. բնակչության շուրջ 36 տոկոսն աշխատում էր գյուղատնտեսության բնագավառում, ընդ որում աշխատանք ունեցողների մոտ կեսի աշխատավարձը ոչ ֆորմալ աղբյուրներից էր:

Նման պայմաններն ընդգծում են ամուր հիմքերի վրա դրված սոցիալական պաշտպանության (ՄՊ) համակարգի առկայության անհրաժեշտությունը, որը ոչ միայն բավարար պաշտպանություն կապահովի աղքատ բնակչության համար, այլև կարող է խթանել մարդկային կապիտալի զագացումը, որն իր հերթին կնպաստի երկրի բնակչության տնտեսական հնարավորությունների ընդլայնմանը:

ՀՀ կառավարության տեսլականը նախատեսում է ինտեգրված սոցիալական քաղաքականության իրականացում, որի հիմքում անհատի կարիքների բավարարմանը միտված միջամտությունն է, ընդ որում կառավարությունը ձգտում է լուծել աղքատության շեմին հայտնված մարդկանց առաջնահերթ սոցիալական խնդիրները ոչ միայն դրամական նպաստներ հատկացնելու միջոցով:


Սույն վերլուծական փաստաթուղթը հետապնդում է երկու նպատակ: Առաջին՝ այն ներկայացնում է սոցիալապես խոցելի և աշխատունակ բնակչության կարիքներին միտված սոցիալական պաշտպանության համակարգի ակնկալվող համապատկերը՝ նպատակ ունենալով բացահայտել դրա արդյունավետությանը նպաստող առանցքային գործոնները, որոնք հնարավորություն կտան ավելի բարձր արդյունքներ արձանագրելու աղքատության հաղթահարման գործընթացում: Երկրորդ՝ զեկույցում ուրվագծվում են քաղաքականության և բարեփոխումների մի քանի տարբերակներ, որոնք կարող են դիտարկվել ՀՀ կառավարության կողմից աղքատության հաղթահարման ռազմավարության ուժեղացման համատեքստում: Կարևոր է նշել, որ սույն փաստաթղթի առանցքը սոցիալապես անապահով բնակչության սոցիալական աջակցության և զբաղվածության ապահովման քաղաքականությունն է: Սոցիալական պաշտպանության մյուս կարևոր տարրերը՝ կենսաթոշակներն ու անաշխատունակության նպաստները, աշխատանքի օրենսդրական կարգավորումը, ինչպես նաև գործող աշխատաշուկայի ընդհանուր համակարգն այս զեկույցում չեն դիտարկվում,

քանի որ այդ ուղղությամբ արդեն իսկ բազմաթիվ այլ ծավալուն վերլուծական աշխատանքներ են կատարվել:

Ու՞մ համար է նախատեսված ակտիվացումը. Հայաստանի սոցիալապես խոցելի աշխատանքային տարիքի բնակչության բնութագիրը


Ակտիվացումը քաղաքականության համակարգված «փաթեթ» է, որ ներառում է լծակներ, ծրագրեր և ֆինանսական աջակցություն սոցիալապես խոցելի բնակչությանն աշխատաշուկայում ներառելու համար՝ որպես աղքատության հետևողական հաղթահարման գրավական: Հետևաբար ակտիվացման քաղաքականությունը տարածվում է աշխատունակ անձանց վրա, ընդ որում ուշադրությունն ավանդաբար ուղղված է եղել սոցիալական ապահովության համակարգի (ՍԱՀ) շահառուներին: Իրականացված հետազոտության տվյալները վկայում են, որ Հայաստանի բնակչության 61 տոկոսը կարող է համարվել աշխատունակ: Խոսքն այն անձանց մասին է, որոնք դպրոց չեն հաճախում, աշխատունակ են և աշխատանքային տարիքի են (պատկեր Ա): Անապահով բնակչության շարքերում սոցիալական ծրագրերում չներառված աղքատ անձանց ժողովրդագրական պատկերը չի տարբերվում ընդհանուր բնակչության բնութագրից, մինչդեռ ՍԱՀ-ի շահառու տնային տնտեսությունների այն անդամների թիվը, որոնց աշխատելը հավանական չէ, ամբողջ բնակչության միջին ցուցանիշից շատ ավելի բարձր է: Դա պայմանավորված է նպաստների բաշխման ներկա համակարգի առանձնահատկություններով:

Պատկեր Ա. Բնակչության տարբեր խմբերի ժողովրդագրական կառուցվածքը



Աղբյուրը՝ Տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտություն (SSԿԱՀ), 2011 թ.

Պատկեր Բ. Աշխատունակ բնակչության մասնակցության մակարդակը՝ ըստ խմբերի



Աղբյուրը՝ ՏՏԿԱՀ 2011 թ.
Նշում: Միայն աշխատունակ բնակչություն:


Չնայած համեմատաբար բարենպաստ ժողովրդագրական իրավիճակին՝ յուրաքանչյուր 10 աշխատունակ անձանցից միայն 6-ը գործնականում աշխատանք ունեն։ Զբաղվածության տեսանկյունից իրավիճակը բնակչության խոցելի խմբերում զգալիորեն ավելի անբարենպաստ է։ Թեև աշխատուժի մասնակցության մակարդակն աղքատ և ընդհանուր բնակչության շրջանում գրեթե նույնն է, աղքատ բնակչության շրջանում զբաղվածությունը 10 տոկոսային կետով ցածր է (պատկեր Բ)։ Այդ փաստը ցույց է տալիս Հայաստանում գործազրկության և աղքատության սերտ կապը։ Սոցիալական ապահովության համակարգի, հատկապես՝ ԸՆԾ-ի շահառուներն ավելի շատ են տուժում գործազրկության բարձր մակարդակից (նրանց 51 տոկոսը գործազուրկ է), ինչն այս դեպքում պայմանավորված է աշխատուժում նրանց չափազանց ցածր մասնակցության մակարդակով։ Վերլուծությունը ցույց է տալիս, որ մասնակցությունը չափազանց ցածր է սոցիալական ցանցի կին շահառուների շրջանում։ Դա կարելի է բացատրել «հուսահատության» բարձր աստիճանով, որը սահմանվում է որպես աշխատանք ունենալու շահագրգռության պարագայում աշխատանք չփնտրել։

Ինչ վերաբերում է այն անձանց, որոնք աշխատանք ունեն, հարկ է նշել, որ *սոցիալական ծրագրերում չներառված* աշխատանք ունեցող աղքատ բնակչության աշխատանքի որակը բնութագրող առանցքային ցուցանիշներից շատերը չեն տարբերվում ընդհանուր բնակչության միջին ցուցանիշներից։ Դա մասնավորապես վերաբերում է աշխատանքի ոլորտներին (պատկեր Գ), ինչպես նաև մեկ ժամվա համար վարձատրությանը. նույնիսկ ոչ ֆորմալ աշխատանք ունենալու հավանականությունը աշխատող աղքատ բնակչության շրջանում ընդամենը 6 տոկոսային կետով է զիջում բնակչության մնացած մասի համապատասխան ցուցանիշին (պատկեր Դ)։ Այս փաստերը վկայում են, որ «աշխատանքի ցածր ինտենսիվությունը», այն է՝ տնային տնտեսության կազմում աշխատանք ունեցող անդամների ցածր տոկոսը, տնային տնտեսությունների աղքատության պատճառների շարքում ավելի կարևոր է, քան ցածր աշխատավարձը¹։

Մյուս կողմից՝ ԸՆԾ-ի շահառուներն առանձնանում են ոչ ֆորմալ աշխատանք ունենալու շատ ավելի բարձր հավանականության առումով (պատկեր Դ), հատկապես՝ գյուղատնտեսության ոլորտում, բացի այդ, այլ աղքատ բնակչության համեմատ, շատ ավելի քիչ գումար են վաստակում։ Սոցիալական ապահովության ցանցի նման անհամաչափ բաշխումը՝ հոգուտ ոչ պաշտոնական և ցածր վարձատրվող աշխատանքի, մասամբ պայմանավորված է ծրագրում նպաստների բաշխման մոտեցումներով։


¹ Կենսամակարդակի աստիճանը որոշվում է՝ տնային տնտեսության ամսական սպառումը բաժանելով տնային տնտեսության անդամների թվի վրա (չափահասի համարժեքով հաշվարկված), ուստի շատ ավելի մեծ է հավանականությունը, որ միայն մեկ աշխատող չափահաս անդամ ունեցող խոշոր տնային տնտեսությունների կենսամակարդակը աղքատության գծից ցածր կլինի, եթե նույնիսկ այդ աշխատողի վարձատրությունը միջին մակարդակի է։

Պատկեր Գ. Զբաղվածության ոլորտը՝ ըստ խմբերի



Աղբյուրը՝ ՏՏԿԱՀ 2011 թ.

Պատկեր Դ. Զբաղված բնակչության շրջանում ցածր վարձատրվող աշխատանք ունեցող անձանց տոկոսը




Աղբյուրը՝ ՏՏԿԱՀ 2011 թ.

Այդ ամենից հետևում է, որ Հայաստանում զբաղվածության մակարդակի բարձրացումը աղքատության շարունակական կրճատման գրավականն է: ՄԱՀ-ի շահառուների աղքատ լինելը և ընդհանուր բնակչության համեմատ՝ զբաղվածության ավելի վատ արդյունքները կարելի է բացատրել երեք հիմնական գործոններով: Առաջինն *աշխատունակությունն է՝* անձին աշխատանքի համար պիտանի դարձնող գործոնների համադրությունը (հմտություններն ու անձնական հատկանիշները), երկրորդը՝ *աշխատուժի առաջարկի սահմանափակումները* (ընտանիքում տնային խնամքի պարտականությունների բաշխումը, աշխատելու մասին որոշում կայացնելու հնարավորությունը, նախընտրությունները և շարժունությունը) և երրորդը՝ *ֆորմալ աշխատանք ունենալու լծակները*, հատկապես՝ սոցիալական աջակցության շահառուների դեպքում (այդ մասին կխոսվի հաջորդ բաժնում):

Աշխատունակության առումով խոցելի բնակչության բազային ժողովրդագրական պատկերը՝ տարիքային և գենդերային բաշխվածությունը, էապես չի տարբերվում ընդհանուր պատկերից: Մասնավորապես, աշխատունակ սոցիալապես խոցելի խմբերում բարձրագույն կրթություն ունեցող անձանց տեսակարար կշիռն ավելի փոքր է (պատկեր Գ), սակայն գրեթե բոլոր աշխատունակ շահառուներն առնվազն միջնակարգ կրթություն ունեն: Ուստի, ի տարբերություն Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի (ԵԿԱ) այլ երկրների, որտեղ, բնակչության մյուս խավերի համեմատ, աղքատ բնակչության կրթական մակարդակն էապես ավելի ցածր է, Հայաստանի տնային տնտեսությունների հետազոտության մեջ չարտացոլված սոցիալապես խոցելի բնակչության հմտությունների առումով առկա խոչընդոտների մասին պատկերացում կազմելու համար լրացուցիչ վերլուծություն է անհրաժեշտ:


Մյուս կողմից՝ սոցիալապես խոցելի խմբերն առանձնանում են աշխատաշուկայում ընդգրկվելու հարցում լուրջ խոչընդոտների առջև կանգնելու առումով: Մասնավորապես աղքատ և ՄԱՀ-ի շահառու հանդիսացող տնային տնտեսությունների կառուցվածքն ու խնամարկյալների թիվն էապես տարբերվում են ընդհանուր բնակչության ցուցանիշներից (պատկեր Զ): Դա էապես ազդում է որոշ աշխատունակ խմբերի, հատկապես՝ կանանց աշխատանքային ակտիվության վրա, քանի որ կանայք են ավանդաբար կրում տնային խնամքի բեռը: Ավելին, ԸՆԾ-ի շահառուների 41 տոկոսն ապրում է կնոջ գլխավորությամբ տնային տնտեսություններում, ընդ որում այդ ցուցանիշը մոտ երկու անգամ ավելի բարձր է, քան ընդհանուր բնակչության շրջանում:

Պատկեր Ե. Աշխատունակ բնակչության կրթական մակարդակը՝ ըստ խմբերի



Աղբյուրը՝ Հեղինակների հաշվարկները 2011 թ. ՏՏԿԱՀ-ի հիման վրա:
Նշում. միայն աշխատունակ բնակչություն:

Պատկեր Զ. 0–15 տարեկան երկու կամ ավելի երեխա ունեցող տնային տնտեսությունների կշիռը՝ ըստ խմբերի



Աղբյուրը՝ Հեղինակների հաշվարկները 2011 թ. ՏՏԿԱՀ-ի հիման վրա:

Ակտիվ ներառմանն ընդառաջ. արդյոք ներկա նպաստների համակարգը պատրաստ է ակտիվացման համար

Հայաստանում, տարածաշրջանի այլ երկրների համեմատ, սոցիալական պաշտպանության ֆինանսավորման կշիռը ՀՆԱ-ում չափազանց ցածր է, ընդ որում այն գրեթե ամբողջությամբ հասցեագրված է անաշխատունակ բնակչությանը՝ նպաստների տեսքով²: Աշխատունակ

² 2012 թ. սոցիալական ապահովագրության ծախսերը կազմել են Հայաստանի ՀՆԱ-ի 5.4 տոկոսը, սոցիալական աջակցությունը՝ 1.7 տոկոսը, իսկ պետական զբաղվածության ծրագրերը՝ շուրջ 0.1


բնակչությանն անմիջականորեն հասցեագրված ծրագրերի թվում առաջին հերթին կարելի է նշել աշխատաշուկայի ակտիվ ծրագրերը (ԱՇԱԾ), մասամբ նաև՝ աշխատող բնակչությանը հատկացվող ՄԾ նպաստները, այդ թվում ԸՆԾ-ն, որոնց ընդհանուր կշիռը սոցիալական պաշտպանության ընդհանուր ծախսի ընդամենը 6 տոկոսն է: Արդյունքում սոցիալապես խոցելի աշխատունակ բնակչության սահմանափակ սոցիալական պաշտպանությունը կարող է անուղղակիորեն դրդել նրանց նախընտրելու ոչ ակտիվ ծրագրերը, օրինակ՝ հաշմանդամության նպաստները կամ հնարավորինս արագ թոշակի անցնելը:

ԸՆԾ-ն աղքատների պաշտպանության առաջնային համակարգ է, որում ընդգրկված են շուրջ 102,000 տնային տնտեսություններ, ընդ որում 2012 թ. սոցիալական աջակցության ընդհանուր ծախսի մեջ նրա մասնաբաժինը կազմել է 76 տոկոս: Բացի այդ, ևս շուրջ 15 հազար տնային տնտեսությունների, որոնք չեն հատում անապահովության շեմը, հատկացվում է հրատապ դրամական օգնություն: 2012 թ. ԸՆԾ-ի նպաստ է ստացել աղքատության գծից ցածր գտնվող տնային տնտեսությունների նվազ, քան մեկ քառորդը: Թերծածկույթը պայմանավորված չէ իրազեկության պակասով, քանի որ վերջին հարցման արդյունքների համաձայն՝ բնակչության 97 տոկոսը ծանոթ է ծրագրին, և դիմողների մեծ մասն ընդհանուր առմամբ պատկերացնում է իրավունակության չափանիշները: Հիմնական պատճառն այն է, որ ծրագրի կառուցվածքով նախատեսվում է միայն առավել աղքատ բնակչության ընդգրկումը: Թեև ծրագիրն ընդհանուր առմամբ միտված է աղքատների կարիքների բավարարմանը, վարչական սխալներով պայմանավորված՝ ոչ աղքատ բնակչության ընդգրկման ցուցանիշները 2011 թ. հետո շարունակաբար աճում են՝ վկայելով գործակիցները աղքատ տնային տնտեսությունների նոր տնտեսական կառուցվածքին համապատասխանեցնելու կարևորության մասին:

Պաշտոնական տվյալների շտեմարանի համաձայն՝ բնակչության 49 տոկոսը կամ շուրջ 200,000 մարդ կարող է համարվել աշխատունակ, այսինքն՝ լինել աշխատանքային տարիքի (15–64 տարեկան) և գրանցված չլինել ԸՆ-ի ռեգիստրում որպես հաշմանդամ կամ ուսանող: Այդ ցուցանիշը գրեթե ամբողջությամբ համընկնում է 2011 թ. «Տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտություն» հաշվետվության տնային տնտեսություններում աշխատունակ անձանց տեսակարար կշռի հաշվարկի հետ (46 տոկոս): Տնային տնտեսությունների ավելի քան 70 տոկոսն առնվազն մեկ աշխատունակ անդամ ունի, որը աշխատանքի անցնելու հնարավորություն ունի, նաև՝ տնային տնտեսության խնամքի հետ կապված հոգսերի պարագայում (պատկեր Ը):


տոկոսը, մինչդեռ Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրներում դրանք միջինը կազմում են, համապատասխանաբար, 8, 2 և 0.5 տոկոս:

Պատկեր Է. ԸՆԾ-ի շահառու տնային տնտեսությունների տեսակները



Աղբյուրը՝ Հեղինակների հաշվարկները ՏՏԿԱՀ 2013 թ. հիման վրա:

Պատկեր Ը. Ծրագրից հեռացվելու հավանականությունը՝ ըստ ընդգրկման պահին հաշվարկված միավորի



Աղբյուրը՝ Հեղինակների հաշվարկները ՏՏԿԱՀ 2013 թ. հիման վրա:

Չնայած նշված բարձր ներուժին՝ նպաստի հաշվարկի ներկա բանաձևը սահմանափակ հնարավորություններ է ընձեռում այն շահառուների համար, որոնց աշխատանք գտնելու հնարավորությունը ֆորմալ շուկայում ավելի բարձր է: Իրականում սահմանային 30 միավոր ստանալու հավանականությունը առնվազն մեկ աշխատունակ անդամ ունեցող և առանց խնամարկյալների տնային տնտեսությունների համար շատ ավելի մեծ է, քան որևէ այլ խմբի համար: Հակառակ դրան, եկամուտ վաստակող մեկ անդամ և բազմաթիվ խնամարկյալներ ունեցող տնային տնտեսությունները, առանց ծրագրից հեռացվելու, ֆորմալ եկամուտ վաստակելու ավելի մեծ հնարավորություն ունեն, սակայն նրանց աշխատանքի անցնելու հավանականությունն է փոքր:

ՏՀԶԿ-ի «հարկային արտոնությունների մոդելը» լրացուցիչ պարզություն է մտցնում ԸՆԾ-ի բանաձևի կիրառման արդյունքում առաջացող լծակների վերաբերյալ: Վերլուծությունը ցույց է տալիս, որ երկու աշխատունակ անդամ ունեցող տնային տնտեսության գործազուրկ անդամը նվազագույն աշխատավարձով ֆորմալ աշխատանքի անցնելու դեպքում առաջացող հարկերի վճարման և նախկին նպաստների կորստի հետևանքով կկորցնի նոր եկամտի մեծ մասը: Նվազագույն աշխատավարձի վերջին բարձրացման շնորհիվ (ներկայումս այն մոտ 1.7 անգամ գերազանցում է ընտանեկան նպաստը) նշված բացասական գործոնների ազդեցությունը նվազել է:

Շահառուների ծրագրից հեռացման դեպքերը հազվադեպ են, ընդ որում դրանք հիմնականում կապված են ընդգրկման պահին նրանց անապահովության միավորով և միշտ չէ, որ պայմանավորված են տնային տնտեսության կենսամակարդակի զգալի բարելավմամբ:

Վարչական տվյալների վերլուծության արդյունքները³ վկայում են, որ մինչև 16-րդ ամիսը տնային տնտեսությունների մեկ քառորդը ծրագրից հեռացվում է առնվազն 4 ամսով: Ինչպես երևում է պատկեր Է-ից, ծրագիրը լքելու հավանականությունը հիմնականում պայմանավորված է ծրագրում ընդգրկվելու պահին տնային տնտեսության միավորի չափով, ոչ թե կենսամակարդակի փոփոխությամբ: Ծրագրից հեռացվելուց հետո տնային տնտեսությունների միջին եկամուտը մեկ շնչի հաշվով ավելի բարձր է, քան ծրագրում ընդգրկված լինելու ընթացքում, սակայն տարբերությունը համեմատաբար փոքր է և ամսական կտրվածքով կազմում է մոտ 5,000 ՀՀ դրամ (մոտ 12 ԱՄՆ դոլար): Դա վկայում է ծրագրից հեռացվելու ավելի բարձր շեմ սահմանելու նպատակահարմարության մասին, որպեսզի տնային տնտեսության անդամները ձգտեն հասնելու այդ կենսամակարդակին:

Նոր ակտիվացման համակարգի առաջնահերթությունները


Երկրորդ սերնդի միասնական սոցիալական ապահովության ցանցի ստեղծման տեսանկյունից Հայաստանի նպաստների համակարգը ծրագրերի, ենթակառուցվածքների և ռեսուրսների առումով արդեն իսկ բավական մեծ ներուժ է դրսևորում: Սակայն ծրագրային և համակարգային բարելավումների միջոցով կարելի է էլ ավելի բարձրացնել աղքատության կրճատման և ներառման ավելացմանը միտված ՄՕ ներդրումների արդյունավետությունը: Պատկեր Թ-ն ներկայացնում է ընդհանուր առաջակությունների համառոտ ցուցակը: Մույն գլխի հաջորդ մասերում ուշադրությունը կսևեռվի միայն գերակա ուղղությունների, մասնավորապես՝ նպաստների բաշխման համակարգի բարեփոխման, նորարարական կառուցվածքի և շահառուների պրոֆիլավորման վրա: Կան նաև զարգացման այլ կարևոր ուղղություններ, այդ թվում՝ նոր ԱՇԱՕ-ների մշակումը, ինտեգրացման մոդելները և անհատական գործերի վարման սկզբունքները, որոնք սույն ուսումնասիրությունում չեն դիտարկվում:

Այս բաժնում նաև հատուկ անդրադարձ կարվի այն առաջնային ուղղությունների վրա, որոնք կարող են մեծացնել ներկայիս նպաստների համակարգի ակտիվացման ներուժը, մասնավորապես՝ շահառուների ընտրության համակարգի բարեփոխման, չափահաս անձանց և ապագա աշխատող մատաղ սերնդի նպաստների հատկացման պայմանների սահմանման, ինչպես նաև որոշակի առաջարկություններ կտրվեն շահառուների պրոֆիլավորման և նրանց առաջնահերթության իրավունքը հաշվի առնելու ուղղությամբ: Կան նաև զարգացմանը նպաստող այլ կարևոր գործոններ, այդ թվում՝ միասնական տեղեկատվական համակարգի և նոր ԱՇԱՕ-ների մշակումը, ինտեգրման մոդելները և

³ Հաշվարկվել է ծրագրում առաջին անգամ 2012 թ. հունվարին գրանցված 2,131 տնային տնտեսություններին 20 ամիս հետևելու արդյունքում: 20 ամիսների ընթացքում տնային տնտեսությունների մշտադիտարկման տարբերակը պայմանավորված էր տվյալների սակավությամբ:

անհատական գործերի կառավարման մոտեցումները, որոնք սույն փաստաթղթում չեն դիտարկվում, սակայն չափազանց կարևոր են⁴:

Պատկեր Թ. Գլխավոր առաջարկությունների դիտարկում



Աղբյուրը՝ հեղինակներ:

Նախ՝ ԸՆԾ-ի բանաձևի վերանայումը կարող է միաժամանակ լուծել մի շարք խնդիրներ և հիմք դառնալ ավելի միասնականացված սոցիալական պաշտպանության համակարգի համար: Ներկա բանաձևը մինչ այժմ լավ է ծառայել ծրագրի նպատակներին, սակայն ակտիվացման լծակների բարելավման և աղքատ տնային տնտեսությունների աստիճանաբար փոփոխվող բնութագրին հարմարվելու նպատակով այն ներկայումս վերանայման կարիք ունի: ՏՏԿԱՀ-ի տվյալների հիման վրա անցկացված վերլուծությունները ցույց են տալիս, որ Հայաստանում անապահովության միավորի անուղղակի գնահատման բանաձևի կիրառումը (ԱՄԱԳ) կարող է 10 տոկոսային կետով ավելացնել աղքատների ընդգրկումը՝ առանց լրացուցչ միջոցների անհրաժեշտության: Միաժամանակ տնային տնտեսությունների աղքատության մակարդակը կանխատեսող նոր ԱՄԱԳ-ի բանաձևը կնպաստի նպաստների գծով իրավունակության տարբերակմանը՝ ըստ տարբեր եկամտային շեմերի, որոնց մի մասը միտված է կենսամակարդակի ապահովմանը, իսկ մյուս մասը՝ անհրաժեշտության դեպքում շահառուին ծրագրից հեռացնելուն: Նպաստների տրամադրման դադարեցումն աստիճանաբար կատարելու դեպքում կնվազեն շահառուների ծրագրից հեռանալու հետևանքով առաջացող անուղղակի ծախսերը: Անցումը նոր բանաձևին կարող է

⁴ Այդ խնդիրներից շատերին անդրադառնում է Համաշխարհային բանկի նոր՝ Սոցիալական պաշտպանության ոլորտի կառավարման երկրորդ ծրագիրը, ինչպես նաև նախորդ ծրագիրը:

կատարվել փուլային սկզբունքով և նախատեսել երաշխիքներ բնակչության այն խմբերի համար, որոնք, չլինելով աղքատ, սոցիալապես խոցելի են (օրինակ՝ երկկողմանի ծնողագուրկ երեխաներ և հաշմանդամներ): Միաժամանակ սոցիալապես խոցելի խմբերի համար կարելի է սահմանել իրավունակության ավելի բարձր շեմ:

Երկրորդ՝ նպաստների ազդեցությունը աղքատության կրճատման վրա կարելի է ուժեղացնել՝ պայմանավորելով դրանց հասկացումը շահառուների կողմից այնպիսի պարտավորությունների կատարմամբ, որոնք ապացուցել են իրենց կենսունակությունը:

Թեև ակտիվացման միջոցառումները զգալիորեն տարբերվում են միմյանցից՝ ըստ սահմանված նպատակների, սակայն ընդհանուր առմամբ դրանք կարելի է բաժանել երկու խմբի. (i) տնային տնտեսությունների գործազուրկ աշխատունակ անդամներին աշխատանքի անցնելը իթանող միջոցառումներ և (ii) ապագա աշխատուժը կազմող երիտասարդ սերնդի մարդկային կապիտալի զարգացմանը միտված միջոցառումներ: Մասնավորապես, սոցիալական աջակցության ծրագրերի նախապայմանները կարող են նպաստների արդյունավետությունը հասցնել առավելագույնի, եթե դրանց արդյունքում ավելանա այն ծառայությունների յուրացումը, որոնք անմիջականորեն կամ ապագայում կնպաստեն աղքատության հաղթահարմանը: Փոխադարձ պարտավորությունների յուրաքանչյուր ծրագիր շահառուների համար կիրարկելի և արդարացի լինելու համար պահանջում է տեղական մակարդակով ծառայությունների պատշաճ մատուցում: Բացի այդ, որոշ հանգամանքների պարագայում նախապայմանների առկայությունը կարող է նպաստել, որ նպաստներից հրաժարվեն դրանց իրական կարիքը չունեցող անձինք:

Աշխատունակ անձանց համար ակտիվացման ծրագրերը կպահանջեն աշխատաշուկայի ծառայությունների և անհատական գործերի ակտիվ կառավարման համադրություն:

Ներկայումս զբաղվածության պետական ծառայություններում (ԶՊԾ) գրանցված աշխատունակ շահառուների թիվը չնչին է: Սահմանափակ աշխատատեղերի և ԱՇԱԾ-ների պայմաններում ԶՊԾ համակարգում ներկայումս բացակայում են նույնիսկ յուրաքանչյուր տնային տնտեսության մեկ աշխատունակ անդամին ակտիվ ծրագիր առաջարկելու հնարավորությունները: Հետևաբար բոլոր աշխատունակ անձանց համար ակտիվացման նախապայմանների կիրառումը նախ և առաջ կպահանջի տարաբնույթ համակարգային բարելավումներ, մասնավորապես 1) առկա ծառայություններից օգտվելու լծակների ուժեղացում (օրինակ՝ պարտադիր այցելություն զբաղվածության ծառայություն), 2) ԶՊԾ-ների՝ աշխատունակ շահառուների սպասարկման գծով կարողությունների հետագա զարգացում՝ ինչպես թափուր աշխատատեղերի առաջարկի ավելացման, այնպես էլ ԱՇԱԾ-ների մասին տեղեկացման առումով, 3) ֆորմալ աշխատանքի կամ ԱՇԱԾ-ներին մասնակցության ապախթանիչների վերացման նպատակով իրավունակության բանաձևի կատարելագործում և 4) նախապայմանների կատարումը վերահսկելու նպատակով տեղեկատվական համակարգերի միասնականացում:


Բյուջետային սահմանափակ հնարավորությունների ներկայիս պայմաններում աշխատունակ շահառուների պրոֆիլավորման ժամանակակից համակարգի կիրառումը կարող է նպաստել ԶՊԾ-ի ծառայություններից օգտվելու առավել մեծ կարիք ունեցող շահառուների ընտրությանը: Կարճ ժամկետում բոլոր աշխատունակ շահառուների պարտադիր ակտիվացման ծրագրի կիրառումն իրագործելի չէ: Այդ նկատառումից ելնելով՝ կարելի է դիտարկել Հայաստանում վիճակագրական պրոֆիլավորման համակարգի կիրառման հնարավորությունը, որը թույլ կտա դասակարգել ԱՇԱԾ-ներում ընդգրկվելիք տնային տնտեսությունները՝ ըստ առաջնահերթության: Իռլանդիայի, Շվեդիայի և Ավստրալիայի օրինակները ցույց են տալիս, որ վարչական տվյալների օգնությամբ հնարավոր է կազմել ԶՊԾ-ներում կիրառելու համար դյուրին վիճակագրական մոդելներ, որոնք հնարավորություն կտան, գրանցման օրվանից սկսած, հաշվարկել գործազուրկ անձի գործազրկության հավանական տևողությունը:

Արդյունքում հնարավոր կլինի արագորեն բացահայտել այն աշխատանք փնտրող անձանց, որոնք առավել խոցելի են, և առաջնահերթ ուշադրություն դարձնել նրանց անհատական գործերի մասնագիտական ուսումնասիրմանը կամ ավելի շատ ակտիվ աշխատանքի առաջարկներ հղել նրանց: Այդպիսի համակարգը հնարավորություն կտա համալիր սոցիալական ծառայությունների կենտրոններին հաջողությամբ կառավարելու շահառուների մեծ հոսքը և դասակարգելու նրանց՝ ըստ առաջնահերթության: Նույնպիսի մոդել կարելի է կիրառել ժամանակի ընթացքում ԸՆԾ-ից հեռանալու նվազագույն հավանականություն ունեցող տնային տնտեսությունների բնութագիրը կազմելու համար:

Անչափահաս անդամներ ունեցող տնային տնտեսություններին ԸՆԾ-ում ընդգրկելու նախապայման կարող է լինել պարտավորությունների կատարումը նրանց երեխաների մոտ վաղ տարիքից կուտակված առողջապահական ծառայությունների, սննդի և կրթության պակասի վերացման ուղղությամբ: Գոյություն ունեն մի շարք նախապայմաններ, որոնց միջոցով կարելի է ընտանեկան նպաստ ստանալը պայմանավորել տարբեր տարիքի երեխաների զարգացման համար հույժ կարևոր ծառայություններից օգտվելով: Օրինակ՝ 5 տարեկանից փոքր երեխաների շրջանում թերսնման ցուցանիշը մտահոգության տեղիք է տալիս, զգալի չափերի է հասնում տարբերությունը միջնակարգ դպրոցն ավարտող կարիքավոր և ոչ կարիքավոր ընտանիքների երեխաների միջև, որը վերջերս ավելի է մեծացել: Նման նախապայմաններ կարող են կիրառվել մոր և մանկան առողջության պահպանման ծառայություններից և թերսնման խնդրի լուծման համար կարևոր տեղեկատվական և նյութական հոսքից օգտվելու գործընթացի բարելավման համար, որը լայն տարածում է գտել հատկապես Լատինական Ամերիկայի երկրներում, կամ Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի այլ երկրների օրինակով նպաստ ստանալու նախապայման կարող է դառնալ դպրոցական տարիքի երեխաների դպրոց հաճախելը: Դպրոց հաճախելու բավարար ցուցանիշն ապահովող այդ նախապայմանի հետևողական կիրառումը կնպաստի միաժամանակ երկու խնդրի լուծմանը՝ կանանց ներգրավմանը աշխատաշուկայում և

երեխաների շարունակական կրթական զարգացմանը: Նշված նախապայմանները կյանքի կոչելու համար անհրաժեշտ է միջգերատեսչական համագործակցություն, արդյունավետ մոնիթորինգի համակարգ, անհրաժեշտ տարածքների առկայություն և մեծ ուշադրություն մատուցվող ծառայությունների որակի վրա:

Պատկեր Ժ. Նախապայմանների կիրառմամբ ԸՆԾ-ի ծածկույթի ավելացմանը կողմ և դեմ արտահայտվածների տոկոսը



Աղբյուրը՝ Նետագոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն, «Հարավկովկասյան բարոմետր» հետազոտություն, 2013 թ. :
Նշում: Պատկերում ներկայացված է հետևյալ հարցի պատասխանը. «Հայաստանի համեմատ` այլ երկրներում սոցիալական նպաստները տրվում են բնակչության ավելի մեծ տոկոսին, փոխարենը` այն ստացողները պարտավոր են ապահովել մի շարք նախապայմաններ, օրինակ` աշխատանք փնտրել կամ ապահովել երեխաների դպրոց հաճախելը: Արդյոք համաձայն եք, որ ԸՆԾ-ի նպաստները հատկացվեն ավելի մեծ թվով կարիքավոր ընտանիքների, որի փոխարեն նրանք կկատարեն նշված նախապայմանները»:

Քաղաքական առումով` վերջին հարցումները վկայում են, որ նախապայմանները կնպաստեն, որպեսզի հանրությունը սատարի սոցիալական աջակցության ծրագրերի ընդլայնմանը: «Հարավկովկասյան բա

րոմետր» կազմակերպության հարցման համաձայն` ներկա տեսքով ԸՆԾ-ի ծածկույթի ընդլայնման օգտին կարտահայտվի Հայաստանի բնակչության նվազ, քան կեսը: Սակայն, ինչպես ներկայացված է պատկեր Ժ-ում, եթե անփոփոխ բյուջետային պայմաններում նպաստները հատկացվեն որոշ նախապայմանների դիմաց, օրինակ` երեխաներին դպրոց ուղարկելու կամ աշխատանք փնտրելու, հանրությունը ավելի դրականորեն կվերաբերվի սոցիալական աջակցության ցանցի ընդլայնմանը:

Վերջապես, նշենք, որ համակարգային մակարդակով Հայաստանում անհրաժեշտ է ուժեղացնել տարբեր գործառույթների կոորդինացումը համալիր սոցիալական ծառայությունների ձևավորման համատեքստում: Հայաստանն արդեն իսկ զգալի ջանքեր է գործադրել այդ ծառայությունները «մեկ պատուհանի» սկզբունքով համախմբելու ուղղությամբ, որի հիման վրա կկատարելագործվեն ՄՊ-ի բոլոր գործառույթները: Սոցիալական պաշտպանության ոլորտի կառավարման առաջին ծրագրի (ՄՊԿԾ) և այն շարունակող ՄՊԿԾ II ծրագրի շրջանակներում ՀՀ կառավարությունը ներդրում է կատարել

ողջ երկրում սոցիալական պաշտպանության ոլորտի ծառայությունների նոր արդիական պայմաններով, կառավարման տեղեկատվական համակարգերով հագեցած տարածքներում համախմբման, անհատական հիմքերով գործերի կառավարման համակարգի ներդրման և գործունեության նորարարական սկզբունքների ներդրման ուղղությամբ: Որպես հաջորդ քայլ ՀՀ կառավարությունը պետք է ապահովի տարբեր ծրագրերի լծակների և կառուցվածքի միասնական ազդեցության ներուժն ու համադրելիությունը: Անկախ սահմանված ակտիվացման օրակարգից՝ փոխադարձ պարտավորությունների ծրագրի իրականացման համար անհրաժեշտ կլինեն վերապատրաստված սոցիալական աշխատողներ, ինչպես նաև՝ տնային տնտեսությունների պրոֆիլավորման պատշաճ համակարգ, որը հնարավորություն կտա բացահայտելու կարիքները և համապատասխանեցնելու դրանք մատուցվող ծառայություններին: Այս գործիքակազմն առանցքային է արդյունավետ սոցիալական աջակցության համակարգ կերտելու համար, որը հավուր պատշաճի կօգտագործի առկա միջոցները:

Գլուխ 1. Հայաստանում ակտիվացման հասցեատերերի պատկերը

Հիմնական ուղերձները

Ակտիվացումը աշխատաշուկայի ներառումը խթանող քաղաքականության և ծրագրերի փաթեթ է:

- Ակտիվացումը քաղաքականության «փաթեթ» է, որում ներառված լծակների, ծրագրերի և ֆինանսական օժանդակության նպատակն է նպաստել աշխատունակ խոցելի բնակչության ընդգրկմանը աշխատաշուկայում՝ ապահովելով աղքատության շարունակական կրճատում:
- Այս գեկույցում ներկայացվում են ակտիվացման քաղաքականության թիրախները՝ սոցիալական ապահովության ցանցի շահառուները, մասնավորապես՝ ԸՆԾ-ի, և այն կարիքավորները, որոնք ներառված չեն սոցիալական ապահովության ծրագրերում:
- Միայն ՄԱՑ-ի աշխատունակ շահառուների վրա կենտրոնանալը չի կարող էապես բարելավել կարիքավոր բնակչության ընդգրկումը աշխատաշուկայում, քանի որ նրանց զգալի մասը ՄԱՑ-ից դուրս են:

Աշխատունակ անձանց, հատկապես՝ սոցիալապես անապահով խմբերի զգալի մասն աշխատանք չունի:

- Բնակչության շուրջ 60 տոկոսը կարող է աշխատունակ համարվել, և չնայած այդ հսկայական ներուժի առկայությանը, գործնականում աշխատանք ունեն յուրաքանչյուր 10 աշխատունակ անձանցից միայն 6-ը: Ինչ վերաբերում է սոցիալապես անապահով խմբերին, ապա իրավիճակն ավելի անմխիթար է:
- Սոցիալական ծրագրերում չընդգրկված անապահով բնակչության ոլորտային, վարձատրության և զբաղվածության ցուցանիշները էապես չեն տարբերվում միջին բնակչության ցուցանիշներից, քանի որ աշխատաշուկային բնորոշ են ցածր աշխատավարձերը: Սակայն այս խմբում աղքատության հիմնական պատճառը կարող է լինել տնային տնտեսություններում աշխատանք չունեցող անդամների մեծ թիվը:
- Միաժամանակ, այլ կարիքավոր բնակչության համեմատ, աշխատանք ունեցող ԸՆԾ շահառուների համար բնորոշ է ոչ ֆորմալ աշխատանքի մեծ կշիռը և ցածր վարձատրվող աշխատանքը:
- Նման անհամաչափ բաշխման հիմնական պատճառ կարող է լինել ԸՆԾ-ի իրավունակության որոշման եղանակը:

Սոցիալապես անապահով խմբերը ներկայացնող տնային տնտեսություններում ցածր է աշխատաշուկայում ընդգրկված անձանց տոկոսը:

- Աշխատաշուկայում ընդգրկվածության ցուցանիշը հատկապես ցածր է աշխատունակ կարիքավորների և ընտանեկան նպաստի շահառուների մոտ, ինչը պայմանավորված է նրանց տնային տնտեսությունների կառուցվածքով: Միջին հաշվով ԸՆԾ-ի շահառու հանդիսացող տնային տնտեսություններում յուրաքանչյուր աշխատունակ անձի

դիմաց մեկ խնամարկյալ կա, որը երկու անգամ գերազանցում է ընդհանուր բնակչության նույն ցուցանիշը: ԸՆԾ-ի շահառուների շուրջ 41 տոկոսն ապրում է մեկ ծնող ունեցող տնային տնտեսություններում, իսկ նրանց մեկ չորրորդը՝ փոքր երեխա ունեցող տնային տնտեսություններում: Շատ կանանց համար խոչընդոտ են նաև մշակութային նորմերն ու տնային տնտեսությունում դերերի բաշխումը, ինչի պատճառով ընտանիքի մյուս անդամները հաճախ թույլ չեն տալիս նրանց աշխատել:

- Բացի այդ, սոցիալական անապահովության ծրագրերի շահառուներն այդ ծրագրերի իրավունակության որոշման ներկա բանաձևի պարագայում կարող են շահագրգռված չլինել ֆորմալ աշխատանք ունենալու հարցում:
- Անապահով բնակչության և ԸՆԾ-ի շահառուների մեծ մասը միջնակարգ կրթություն ունի, ընդ որում մեկ երրորդից ավելին՝ նաև բարձրագույն կրթություն: Ուստի կրթության որակը և ձեռք բերված հմտությունների համապատասխանությունը աշխատաշուկայի պահանջներին նույնպես կարող է կարևոր դեր խաղալ աշխատաշուկայի ներկա իրավիճակում. այդ հարցը լրացուցիչ ուսումնասիրություն է պահանջում:

Նախաբան


Հայաստանում աղքատության հիմնական պատճառներն են գործազրկության բարձր մակարդակը և աշխատանքի ցածր վարձատրությունը: Վերջին վերլուծությ ան մեջ (Rutkowski, 2012) ներկայացվել են Հայաստանի աշխատաշուկայի հիմնական մարտահրավերները և դրանց կապը աղքատության հետ: Հայաստանի աշխատաշուկային բնորոշ է զբաղվածության ցածր մակարդակը՝ ըստ միջազգային չափանիշների: 2011 թ. աշխատանքային տարիքի բնակչության ընդամենը 54 տոկոսն ուներ աշխատանք. դա զիջում է ԵՄ-ի կամ Հարավային Կովկասի և Կենտրոնական Ասիայի որևէ այլ երկրի ցուցանիշին (Arias et al., 2014): Ցածր զբաղվածության հիմքում երկու հիմնական գործոն է ընկած. (1) գործազրկության բարձր մակարդակը, մասնավորապես՝ երիտասարդների շրջանում, ինչը վկայում է կրթական հաստատությունից աշխատանքի անցման գործընթացի բարդության մասին, և (2) կանանց սահմանափակ ընդգրկվածությունը աշխատուժում: Աղքատության մակարդակը բարձր է հատկապես գործազուրկների շրջանում (54 տոկոս), այն որոշակիորեն ավելի ցածր, այսուհանդերձ նշանակալի է նաև ցածր վարձատրվող և ոչ աշխատատար աշխատանքի դեպքում (28 տոկոս 2011 թ.):

Զբաղվածության ցածր մակարդակը կարող է պայմանավորված լինել զբաղվածության ցածր հնարավորություններով, թեև խոցելի խմբերը կանգնած են լրացուցիչ մարտահրավերների առջև, ինչը նրանց ոչ շահեկան վիճակում է դնում աշխատաշուկայում: Հայաստանում վերականգնումը 2009 թ. ֆինանսական ճգնաժամից զուգորդվեց նոր աշխատատեղերի ստեղծման համեմատաբար ցածր մակարդակով (աշխատաշուկայի պահանջարկի վերլուծությունը ներկայացված է Համաշխարհային բանկի 2013 թ. ուսումնասիրությունում): Աշխատուժի թերօգտագործումը սահմանափակում է աշխատուժի նոր կամ ավելի որակյալ աշխատանք գտնելու հնարավորությունները: Մակայն Հայաստանում արդյունավետ աշխատանք գտնելու հավանականությունը կախված է նաև մի շարք սոցիալ-ժողովրդագրական գործոններից՝ տարիքից, կրթական մակարդակից և աշխատանքային փորձից, ինչն ընդգծում է խոցելի բնակչության զբաղվածության հնարավորությունների բարելավմանն ուղղված քաղաքականության կարևորությունը:

Ուսումնասիրությունում ներկայացվում են խոցելի բնակչությանն աշխատաշուկայում ներառելու («ակտիվացնելու») ուղղությամբ սոցիալական քաղաքականության հիմնադրույթները, որոնք կապահովեն բնակչության պաշտպանությունն աղքատությունից: Այն կարող է ռազմավարական ուղեցույց ծառայել ՀՀ կառավարության համար աշխատաշուկայում ներառման և աշխատանքային արտադրողականության բարելավման շնորհիվ իրականացվելիք համալիր սոցիալական քաղաքականության մշակման գործում: Առաջարկվող գործողությունների փաթեթը, որին տրվել է «ակտիվացում» ընդհանուր անվանումը, առաջին հերթին ուղղված է աշխատունակ բնակչությանը, մասնավորապես՝ այն ստվար զանգվածին, որը գործազուրկ է կամ ցածր արտադրողական աշխատանք է կատարում:

Սոցիալական ապահովության համակարգի (ՄԱՀ) շահառուները, լինելով սոցիալապես անապահով, ակտիվացման քաղաքականության կարևորագույն հասցեատերն են, սակայն աղքատության գծից ցածր գտնվող ոչ շահառու անձանց ավելի մեծ զանգվածը հանդիսանում է ակտիվացման առաջնային թիրախը: Պատկեր 1-ը ներկայացնում է Հայաստանի բնակչության բաշխվածությունը՝ ըստ աշխատունակության և ՄԱՀ-ի շահառու լինելու հանգամանքի: ՄԱՀ-ի շահառուները կազմում են Հայաստանի բնակչության ընդամենը 6 տոկոսը (ընդհանուր աշխատունակ բնակչության 10 տոկոսը): Ավելին, նույնիսկ աղքատության գծից ցածր գտնվող բնակչությունն ընդգրկելու դեպքում (33 տոկոս 2011 թ.) աշխատունակ բնակչության միայն կեսն է ընդգրկված որևէ ՄԱՀ ծրագրում, և դրանց միայն մեկ քառորդը՝ ընտանեկան նպաստի ծրագրում (ԸՆԾ), որը սոցիալական ապահովության հիմնական ծրագիրն է: Քանի որ Հայաստանում աղքատության մակարադակը կայուն բարձր է և ընդհանուր բնակչության մեջ ՄԱՀ-ի շահառուների կշիռը շատ փոքր է, ինքնաբավության խթանմանը միտված ցանկացած ակտիվացման քաղաքականության ազդեցությունը, աղքատ բնակչության ավելի խոշոր խմբերին միտված չլինելու պարագայում, աղքատության կրճատման և աշխատաշուկայում մասնակցության առումով սահմանափակ կլինի:

Պատկեր 1. Բնակչության բաշխումը՝ ըստ աշխատունակության և ՄԱՀ-ի շահառու լինելու կարգավիճակի



Աղբյուրը՝ հեղինակների հաշվարկները 2011 թ. ՏՏԿԱՀ-ի հիման վրա:

Առաջին խումբը ներկայացնում է աշխատանք չունեցող անձանց պրոֆիլը հանդիսանում են շուկայում

աղքատների, ՄԱ շահառուների և այլ աշխատաշուկայում, քանի որ վերջիններս ակտիվացման միջոցառումների հիմնական

հասցեատերը: ՏՏԿԱՀ 2011 թ. տվյալների հիման վրա ⁵ կազմվել է ակտիվացման միջոցառումների օգտատեր բնակչության պրոֆիլը՝ ըստ երեք հիմնական խմբերի. (1) սոցիալական ապահովության ցանցի շահառուներ, հատկապես՝ հիմնական սոցիալական աջակցության ծրագրում ընդգրկված (ԸՆԾ), (2) ազգային գծից ցածր գտնվող ոչ շահառուներ և (3) աշխատանք չունեցող ոչ կարիքավոր բնակչություն: Այսպիսի դասակարգում է արվել՝ ելնելով քաղաքականության պլանավորման նպատակներից, հաշվի առնելով այն, որ կառավարությունը ձգտում է այդ բնակչության յուրաքանչյուր խումբը սպասարկել միջոցառումների առանձին փաթեթի միջոցով, ըստ նրանց կարիքների և առանձնահատկությունների: Առաջին բաժնում ներկայացվում է խոցելի բնակչության պրոֆիլը աշխատաշուկայում՝ նպատակ հետապնդելով բացահայտել այդ ոլորտում նրանց խնդիրները:


Հայաստանի խոցելի բնակչության պրոֆիլը

Հայաստանում բարձր է աշխատունակ անձանց կշիռը: 3.1 միլիոն բնակչության շուրջ 60 տոկոսը (1.9 միլիոն) կարող է համարվել աշխատունակ: Սույն ուսումնասիրության նպատակների համար անձն աշխատունակ է համարվում, եթե աշխատանքային տարիքի է (15–64), ներգրավված չէ ցերեկային կրթական ծրագրում և աշխատելու առումով որևէ սահմանափակում չունի ⁶ (տե՛ս պատկեր 2):

⁵ Այս վերլուծությունը կենտրոնանում է բնակչության հատուկ ենթախմբերի վրա, ինչպիսիք են ԱՄԾ-ի նպաստառուները, որոնք ներկայացնում են բնակչության մոտ 12 տոկոսը: Վիճակագրական տվյալների արժանահավատության նպատակով որպես վերլուծության աղբյուր օգտագործվել է 2011 թ. ՏՏԿԱՀ-ն՝ հաշվի առնելով, 2011 թ. համեմատ, 2012 թ. ընտրանքի մեծության զգալի կրճատումը. Համապատասխանաբար՝ , 7,872 և 5,184 տնային տնտեսություններ:

⁶ Այս սահմանումը չի ենթադրում, որ Հայաստանում հաշմանդամություն ունեցող անձինք չպետք է աշխատաշուկայի քաղաքականության թիրախ հանդիսանան , սակայն սույն զեկույցում բնակչության այդ խմբի համար հատուկ քաղաքականություն ու ծրագրեր չեն դիտարկվում:


Պատկեր 2. Հայաստանում բնակչության աշխատունակությունը և զբաղվածության կարգավիճակը, 2011 թ.



Աղբյուրը՝ հեղինակների հաշվարկները 2011 թ. ՏՏԿԱՀ-ի հիման վրա:

Աղքատներին բնորոշ են նույն ժողովրդագրական միտումները, ինչ մնացած բնակչությանը, թեև սոցիալական աջակցության նպաստներ ստացող տնային տնտեսություններում, միջին հաշվով, ոչ աշխատունակ անդամների թիվը շատ ավելի մեծ է: Պատկեր 3-ից երևում է, որ աղքատ և ընդհանուր բնակչության ժողովրդագրական կառուցվածքներն էապես չեն տարբերվում: Դա մասամբ կարելի է բացատրել Հայաստանում աղքատության բարձր մակարդակով բոլոր տարիքային խմբերում: Ի տարբերություն՝ ոչ աշխատունակ անձանց կշիռն ավելի մեծ է ՍՍՀ շահառուների շրջանում և հատկապես ԸՆԾ-ի շահառու տնային տնտեսություններում, որտեղ երեխաների և հաշմանդամների թիվն ավելի մեծ է:


Պատկեր 3. Ժողովրդագրական կառուցվածքը՝ ըստ բնակչության տարբեր խմբերի




Աղբյուրը՝ հեղինակների հաշվարկները 2011 թ. ՏՏԿԱՀ-ի հիման վրա:

Բնակչության, այդ թվում ՄԱՀ-ի շահառուների զգալի մասը չի աշխատում: Հայաստանում 10 աշխատունակ անձանցից աշխատանք ունեն միայն 6-ը, երկրում «ակտիվության պակասորդ» կա: Աշխատունակ բնակչության 25 տոկոսը ընդգրկված չէ աշխատուծում: Գործազուրկների տոկոսը հատկապես բարձր է աղքատ բնակչության շրջանում (30 տոկոս) և գազաթակետին է հասնում ԸՆԾ-ի շահառուների շրջանում (33 տոկոս): Գործազրկությունը բարձր է նաև աշխատունակ կարիքավոր շահառուների շրջանում: Գործազուրկների շուրջ կեսն առաջին անգամ է աշխատանք փնտրում, ինչը վկայում է ուսումնական հաստատությունից աշխատանքի անցնելու դանդաղ գործընթացի մասին (տե՛ս պատկեր 5), և գործազուրկների կեսը աշխատանք է փնտրում ավելի քան երկու տարի:

Պատկեր 4. Աշխատուծի մասնակցությունը և զբաղվածության մակարդակը



Պատկեր 5. Գործազուրկների բնութագիրը




Աղբյուրը՝ հեղինակների հաշվարկները 2011 թ. ՏՏԿԱՀ-ի հիման վրա:

Զարմանալիորեն աղքատ բնակչության զբաղվածության որակը չի տարբերվում ընդհանուր բնակչության միջին ցուցանիշից, թեև նույնը չի կարելի ասել ԸՆԾ-ի աշխատանք ունեցող շահառուների մասին: Պատկեր 6-ը ներկայացում է մեր կողմից վերլուծված բնակչության տարբեր խմբերի զբաղվածության որակի որոշ ցուցանիշներ: Առաջին զարմանալի փաստն այն է, որ ընտանեկան նպաստ չստացող աղքատների և ընդհանուր բնակչության զբաղվածության բնութագրերը շատ նման են՝ ինչպես ոչ ֆորմալ⁷, այնպես էլ սեզոնային աշխատանքի առումով: Միաժամանակ ԸՆԾ-ի շահառուների զբաղվածությունն ավելի մեծ հավանականությամբ կարող է ցածրորակ և ցածր վարձատրվող լինել. նրանց 87 տոկոսն աշխատում է առանց որևէ պայմանագրի, նրանք նաև ավելի շատ են ներգրավված սեզոնային բնույթի աշխատանքներում (43 տոկոս՝ ոչ շահառու աղքատների 31 տոկոսի և ընդհանուր

⁷ Ոչ ֆորմալի սահմանումները չափազանց տարբեր են: Այս դեպքում մենք հիմք են ընդունում Rutkovski 2012-ը և ոչ ֆորմալը սահմանում ենք որպես պայմանագիր և նվազագույն պարտադիր սոցիալական փաթեթ (մասնավորապես հիվանդության արձակուրդ) չունեցող ինքնազբաղված և աշխատանք ունեցող անձինք:


բնակչության 28 տոկոսի համեմատ) և շաբաթական ավելի քիչ ժամ են աշխատում: Ամենայն հավանականությամբ ԸՆԾ-ի անհավասար բաշխվածությունը՝ հոգուտ ոչ ֆորմալ աշխատողների, պայմանավորված է ծրագրի իրավունակության չափանիշներով, որոնք ավելի խտրական են ֆորմալ աշխատանքային եկամտի նկատմամբ (տե՛ս բաժին 2):

Պատկեր 6. Ցածրորակ աշխատանք ունեցող զբաղված բնակչության պատկերը



Աղբյուրը՝ հեղինակների հաշվարկները 2011 թ. SS4ԱՀ-ի հիման վրա:
 Նշում: Աշխատատեղի որակի ցուցանիշներն իրարամերժ չեն:

Պատկեր 7. Բնակչության եկամտի բաշխումը՝ մեկ ժամի հաշվով. ըստ ֆորմալ աշխատանքի, և գյուղատնտեսության ոլորտում



Աղբյուրը՝ հեղինակների հաշվարկները 2011 թ. SS4ԱՀ-ի հիման վրա:

Ոչ ֆորմալ աշխատանքը ենթադրում է ավելի ցածր վարձատրություն, հատկապես՝ գյուղատնտեսության ոլորտում:


Հայաստանում աշխատավարձերի ցրվածության համեմատաբար բարձր մակարդակը ներկայացվել է ավելի վաղ կատարված վերլուծությունում (Rutkowski, 2012): Ակտիվացման ուսումնասիրության համար նպատակահարմար է նաև գնահատել, թե որքանով է տարբերվում ֆորմալ աշխատանքի եկամտաբերությունը ոչ ֆորմալից, թեև այդ հարցի ամբողջական վերլուծություն սույն հետազոտությամբ չի արվում: Պատկեր 7-ում ներկայացված են որոշակի դիտարկումներ՝ համեմատելով ժամավճարը գյուղատնտեսության և այլ ոչ ֆորմալ ոլորտներում: Գծապատկերից երևում է, որ գյուղատնտեսական աշխատանքի վարձատրությունն էապես ավելի ցածր է, քան տնտեսության որևէ այլ ոլորտում: Մյուս կողմից, թեև այլ ոլորտներում նույնպես ֆորմալ և ոչ ֆորմալ զբաղվածության միջև տարբերություն կա, դա այնքան էլ ցայտուն չէ⁸: Այդուհանդերձ, քանի որ ոչ ֆորմալ ոլորտում լրացուցիչ փոխհատուցում չկա

⁸ Ըստ վերջին հաշվարկների (ԱՎԾ 2013 թ.)՝ տնտեսության ոչ ֆորմալ հատվածում 2012 թ. միջին ամսական եկամուտը կազմում է ֆորմալ հատվածի եկամտի 82%-ը հարկումից հետո: Մի շարք ոլորտներում, այդ թվում՝ առևտրի և սննդի ծառայությունների, տարբերությունն ավելի զգալի է, իսկ


(վճարովի տարեկան և հիվանդության արձակուրդ, գրավոր պայմանագիր), ֆորմալ աշխատանքը կարող է ընդհանուր առմամբ ավելի բարձր որակի համարվել և, ինչպես երևում է հետագա գնահատականից (պատկեր 13), աղքատության ռիսկն այդ դեպքում ավելի ցածր է:

Գոյություն ունի անուղղակի ապացույց, որ ոչ ակտիվ աշխատունակ բնակչության և ոչ ֆորմալ սեզոնային աշխատանքով զբաղվածների մեծ մասը հնարավորության դեպքում կնախընտրեր ֆորմալ աշխատանք: Պատկեր 8-ից երևում է, որ աշխատանք ունեցող բնակչության մոտ կեսը կցանկանար փոխել աշխատանքը, ընդ որում այդ առումով առանձնանում են ՄԱ-ի (53 տոկոս) և հատկապես ԸՆԾ-ի շահառուները (63 տոկոս): Դա կարող է ուղղակիորեն պայմանավորված լինել այն հանգամանքով, որ ի տարբերություն ընդհանուր բնակչության մեկ երրորդի՝ մշտական աշխատանք չի կարող գտնել ԸՆԾ-ի շահառուների կեսից ավելին (պատկեր 9): Քանի որ ոչ ֆորմալ աշխատանքը հնարավորություն է տալիս չվճարելու հարկերը և պարտադիր սոցիալական վճարները, հաճախ վիճաբանության առարկա է դառնում այն հարցը, թե արդյոք ոչ ֆորմալ աշխատանքը անձի ցանկության արդյո՞ւնք է (գործատուի հետ պայմանավորվածությամբ, եթե խոսքը աշխատավարձ նախատեսող աշխատանքի մասին է), թե՞ անձը չի կարող խուսափել դրանից: Ըստ էության, գործազուրկներից շատերը պատրաստ են անցնելու կայուն աշխատավարձով աշխատանքի (հավանաբար ֆորմալ), եթե նրանց ընձեռվեր այդ հնարավորությունը:

Պատկեր 8. Ցանկանում է փոխել ներկա աշխատանքը



Պատկեր 9. Մշտական աշխատանք չունենալու պատճառները




Աղբյուրը՝ հեղինակների հաշվարկները 2011 թ. ՏՏԿԱՀ-ի հիման վրա:


որոշ այլ ոլորտներում, օրինակ՝ շինարարության, արդյունաբերության և գյուղատնտեսության, այն 20%-ից ցածր է: Թեև մեկ ժամվա եկամտի հիման վրա մեր կողմից կատարված հաշվարկներն այս դեպքում ուղղակի համեմատելի չեն, հանգեցնում են նույնպիսի եզրակացությունների: Անկասկած, այս տեղեկատվության հիման վրա դժվար է դատել՝ արդյոք ոչ ֆորմալ ոլորտում զբաղված անձանց որակավորումը նո՞ւյնն է, ինչ նույն աշխատանքը ֆորմալ ոլորտում կատարող անձանց:

Աշխատանքի ցածր ինտենսիվությունն աղքատությունը հիմնավորող գլխավոր պատճառն է, բայց ոչ ԸՆԾ-ի շահառուների, որոնց վարձատրությունը, որպես կանոն, շատ ավելի ցածր է, քան ցանկացած այլ խմբինը: Պատկերներ 10, 11 և 12-ը ցուցադրում են վերլուծության ենթարկված տարբեր խմբերում աշխատավարձի միջին բաշխվածությունը՝ ըստ մեկ ժամի և մեկ ամսվա: Միջինում անապահով անձանց աշխատանքի վարձատրությունը միայն փոքր փոքր չափով է ավելի ցածր, քան մնացած բնակչությանը, և այդ փաստը վկայում է, որ աղքատ և ոչ աղքատ տնային տնտեսությունների միջև եղած տարբերությունը չպետք է հիմնականում վերագրել վարձատրության տարբերությանը: Մյուս կողմից՝ տնային տնտեսություններում աշխատանք չունեցող անդամների առկայությունն աղքատությունը բնորոշող շատ ավելի կարևոր գործոն է (տես՝ պատկեր 13), որով պայմանավորված՝ ընտանիքը կարող է աղքատ լինել կամ չլինել: Իրավիճակը միանգամայն այլ է ԸՆԾ-ի աշխատանք ունեցող շահառուների պարագայում, որոնց մեկ ժամվա վարձատրությունը, համապատասխաբար նաև ամսական վաստակած գումարը զգալիորեն ավելի ցածր են, քան մնացած աղքատ բնակչությանը (պատկերներ 10, 11): Գործնականում աշխատանքային եկամուտը կազմում է ԸՆԾ-ի շահառուների ընդհանուր սպառման ընդամենը 28 տոկոսը, միջդեռ այլ աղքատների շրջանում այն գերազանցում է 70 տոկոսը (տե՛ս հավելված 2): Ինչպես կքննարկվի հաջորդ բաժիններում, զգալիորեն ավելի ցածր եկամուտը կարելի է վերագրել ԸՆԾ-ի շահառու տնային տնտեսությունների կազմին, ինչպես նաև ծրագրի՝ ոչ ֆորմալ հատվածում աշխատանք փնտրելու լծակներին:


Պատկեր 10. Աշխատանքային եկամտի բաշխումը մեկ ժամի հաշվով




Պատկեր 11. Աշխատավարձի քվինտիլային բաշխումը՝ ըստ բնակչության խմբերի



Պատկեր 12. Ամսական եկամտի բաշխումը



Պատկեր 13. Աշխատունակ բնակչության աղքատության մակարդակը՝ ըստ զբաղվածության կարգավիճակի




Աղբյուրը՝ հեղինակների հաշվարկները 2011 թ. ՏՏԿԱՀ-ի հիման վրա :


Թեև Հայաստանում զբաղված, այդ թվում կարիքավոր անձանց մեծ մասը աշխատավարձ է ստանում, ԸՆԾ-ի շահառուներն առանձնանում են ինքնազբաղվածության կամ չվարձատրվող ընտանեկան աշխատանքի մեջ ավելի շատ ներգրավման առումով: Ինչպես արդեն իսկ նշվել է եկամուտների քննարկման ժամանակ, ընտանեկան նպաստ չստացող աղքատների և ընդհանուր բնակչության զբաղվածության ոլորտային կառուցվածքները քիչ են տարբերվում: Այդպես՝ նույնիսկ աշխատանք ունեցող կարիքավորների շարքերում ԸՆԾ-ում չընդգրկված անձանց զգալի մասը (22 տոկոս) աշխատում է պետական հատվածում: Միաժամանակ ընտանեկան նպաստ ստացողներն առանձնանում են նրանով, որ գրեթե բոլորն ինքնազբաղված են (պատկեր 15): Այդ առանձնահատկությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ ԸՆԾ-ի շահառուների շարքերում շատերն են աշխատում

գյուղատնտեսության ոլորտում, որտեղ արտադրողականության և աշխատավարձերի մակարդակն ամենացածրն է (պատկեր 15):

Պատկեր 14. Զբաղվածության կարգավիճակի բաշխվածությունը




Պատկեր 15. Զբաղվածության ոլորտը՝ ըստ բնակչության խմբերի



Նշում: «Այլ զբաղվածներ» հիմնականում նշանակում է չվարձատրվող ընտանեկան աշխատանք:

Սոցիալապես անապահով անհատների որակյալ աշխատանք ունենալու հավանականությունը պայմանավորված է սեռի, տարիքի և աշխարհագրական դիրքի գործոններով: Պատկեր 16-ը ցուցադրում է տարբեր սոցիալ-ժողովրդագրական խմբերի կարգավիճակը՝ ըստ որակյալ զբաղվածության: Առաջին տեղում ֆորմալ հատավածի աշխատանքներն են, որոնք, համաձայն նախորդ վերլուծության, ընդհանուր առմամբ ավելի որակյալ են: Դրանց հետևում է ոչ ֆորմալ զբաղվածությունը (այն ներառում է գյուղատնտեսական աշխատանքը), կարճատև և երկարատև գործազրկությունը և, ի վերջո, անգործությունը (հանգամանքներով պայմանավորված թերահավատությունն ու կամավոր “անգործություն”): Աշխատաշուկայում կարգավիճակի նման պատկերը կարող է որոշ չափով հիմք դառնալ շուկայի հատուկ մարտահրավերների լուծմանը միտված միջամտությունների լայն շրջայի ուրվագծման համար:

Պատկեր 16. Աղքատության գծից ցածր գտնվող աշխատունակ անձանց աշխատանքային կարգավիճակը



Աղբյուրը՝ ՏՏԿԱՀ 2011 թ.:

Նշում: Աշխատունակ են համարվում աշխատանքային տարիքի, աշխատունակ և ամբողջական ուսումնական ծրագրերում չընդգրկված անձինք: ST = կարճաժամկետ, LT = երկարաժամկետ՝ ավելի, քան 12 ամիս:

Աշխատունակ աղքատ անձանցից կանայք և քաղաքներում բնակվող երիտասարդներն ավելի շատ են տուժում կամավոր «անգործությունից», որը նույնիսկ ավելի է տարածված, քան ակնհայտ գործազրկությունը:


Այլ աշխատունակ աղքատների համեմատ՝ չաշխատող աշխատունակ անձանց կշիռն առանձնապես մեծ է 15–24 տարեկան երիտասարդների (72 տոկոսն աշխատանք չունի և չի սովորում) և կանանց շրջանում (պատկեր 16): Նշենք, որ այդ երկու խմբերում «քողարկված» գործազուրկների կշիռը (որոնք չեն աշխատում, որովհետև չեն հավատում, որ աշխատանք կգտնեն) նույնիսկ ավելի բարձր է, քան աշխատանք փնտրողների շարքերում: Այլ կերպ ասած՝ աշխատուժում ցածր մասնակցության հիմնական պատճառը համապատասխան աշխատանքային հնարավորությունների բացակայությունն է:

Գործնականում, աղքատ տղամարդկանց համեմատ, աղքատ կանանց ավելի մեծ տոկոսն է անգործունակ կամ հուսալքված: Աղքատ կանանց 40 տոկոսն աշխատանք չունի և չի էլ փնտրում, մինչդեռ աղքատ տղամարդկանց դեպքում այդ ցուցանիշը 22 տոկոս է կազմում: Միաժամանակ, աշխատող տղամարդկանց համեմատ, աշխատող կանանց ավելի մեծ տոկոսն է զբաղված ոչ պաշտոնական ոլորտում:

Գյուղական աղքատ բնակչությունն ընդհանուր առմամբ աշխատանք ունի, սակայն այն ցածր արտադրողական է կամ ոչ լրիվ դրույքով: Հակառակ դրան գյուղական աղքատներին, հատկապես՝ տղամարդկանց և տարեց աշխատողներին, բնորոշ է ոչ ֆորմալ ցածր արտադրողականությամբ զբաղվածություն: Ուշագրավ է, որ կրթական մակարդակն ուղղակիորեն չի կապվում գործազրկության ռիսկի աստիճանի հետ, թեև բարձրագույն կրթություն ունեցող երիտասարդներն ավելի մեծ հավանականությամբ կարող են ֆորմալ

աշխատանք գտնել: Դա վկայում է, որ ծրագրի հասցեականությունը կարող է ավելի արդյունավետ լինել սեռի, տարիքի, աշխարհագրական շրջանի, քան զուտ հմտությունների առումով:

Պատկեր 17. ԸՆԾ-ի շահառու աշխատունակ անձանց զբաղվածության կարգաիճակը



Աղբյուրը՝ SS4U2 2011 թ.:

Նշում: Աշխատունակ են համարվում աշխատանքային տարիքի, աշխատելու ունակ և ամբողջական ուսումնական ծրագրերում չընդգրկված անձինք: ST = կարճաժամկետ, LT = երկարաժամկետ՝ ավելի, քան 12 ամիս:

Նույնպիսի միտումներ կան ԸՆԾ-ի շահառու աշխատունակ բնակչության շրջանում, ընդ որում դրանք ավելի ընդգծված բնույթ ունեն. գործազրկությունը հասնում է ծայրահեղ մակարդակների քաղաքաբնակների (70 տոկոս) և երիտասարդների շրջանում (80 տոկոս):

Այլ աշխատունակ աղքատների և ԸՆԾ-ի շահառու չհանդիսացող երիտասարդների համեմատ՝ գործազրկությունը չափազանց բարձր է 25 տարեկանից ցածր ԸՆԾ-ի շահառուների շրջանում: Ինչպես երևում է պատկեր 17-ից, ուսումնական հաստատություն չհաճախող երիտասարդների 65 տոկոսը զբաղվածության առումով ակտիվ չէ կամ հուսահատված է: Այդ խումբը համապատասխանում է «չսովորող, չաշխատող, չվերապատրաստվող» խմբի չափանիշներին: Իսկ աղքատ բնակչության շրջանում գերակայում է ոչ ֆորմալ, ցածր արտադրողականությամբ զբաղվածությունը, որը հատկապես բնորոշ է գյուղաբնակ աղքատներին, հատկապես տղամարդկանց և տարեց աշխատողներին: Ջարմանալի չէ, որ ԸՆԾ-ի շահառուների շարքերում ֆորմալ աշխատանք ունեցողների կշիռը աղքատ բնակչության կշռի կեսից փոքր է:

Ինչո՞վ կարելի է բացատրել աղքատների և սոցիալական աջակցության շահառուների զբաղվածության ավելի ցածր մակարդակը


Սոցիալապես խոցելի խմբերի և ընդհանուր բնակչության ժողովրդագրական բնութագրերն էապես չեն տարբերվում: Թեև սոցիալապես խոցելի խմբերի և ընդհանուր բնակչության զբաղվածության և բարօրության մակարդակները չափազանց տարբեր են, ժողովրդագրական կազմը՝ ըստ տարիքային, աշխարհագրական և սեռային կառուցվածքի, էապես չի տարբերվում: Այսպես, ավանդաբար ավելի խոցելի տարիքային խմբերի կշիռը աշխատաշուկայում գրեթե չի տարբերվում. ԸՆԾ-ի շահառուների 15 տոկոսը և ընդհանուր բնակչության 17 տոկոսը երիտասարդ են (15–24 տարեկան) և դպրոց չեն հաճախում, ընդ որում նախաթոշակային տարիքի (55–64 տարեկան) կարիքավոր անձանց կշիռը աշխատաշուկայում նույնպես մոտ է ընդհանուր բնակչության միջին ցուցանիշին (16 տոկոս): Սոցիալական ծառայություններից օգտվող աշխատունակ կանանց կշիռը աղքատների բոլոր խմբերի և ընդհանուր բնակչության մոտ գրեթե չի տարբերվում (մոտ 53 տոկոս, տե՛ս հավելված 2): Նույնիսկ աշխարհագրական բաշխվածության տեսանկյունից աշխատունակ բնակչության մեկ երրորդը (34 տոկոս) ապրում է գյուղաբնակ վայրերում, և աղքատ բնակչության համար բնորոշ է նույն համաչափությունը: Կարևոր բացառություն են կազմում ԸՆԾ-ի շահառուները, որոնց կշիռը գյուղաբնակ վայրերում զգալիորեն ավելի բարձր է (41 տոկոս, տե՛ս հավելված 2):

Ներդիր 1. Զբաղվածության խոչընդոտների վերացումը

Զբաղվածությունը կարելի է բնութագրել որպես երևույթ, որը «բարձրացնում է անձի՝ գործազրկությունից աշխատանքի անցնելու հնարավորությունը և նվազեցնում աշխատանքից գործազրկության անցնելու հնարավորությունը» (Card et al., 2011): Այդ գործոնների թվում են աշխատանքի արտադրողականության վրա ազդող անհատական բնութագրերը (օրինակ՝ հմտությունները, վկայականները և հատկանիշները), աշխատուժին միանալու կարողության և ցանկության վրա ազդող անձնական գործոնները (աշխատանքի կուլտուրան, տնային տնտեսության կազմը, աշխատանքի տեղավորվելու մասին որոշման ընդունման կարողությունը) և շուկայական գործոնները (օրինակ՝ աշխատուժի պահանջարկը) (McQuaid, 2006; Rutkowski, 2012): Սոցիալական աջակցության շահառուների պարագայում առկա է նաև նպաստի գործոնը: Ակտիվության անբավարարությունը, որի մասին խոսվել է վերը, կարող է ուղղակիորեն բխել նշված գործոններից որևէ մեկից կամ ավելի մեծ հավանականությամբ՝ դրանց փոխազդեցության արդյունքը լինել:

Պատկեր 18. Արդյունավետ զբաղվածության առաջարկի խոչընդոտների վերլուծական շրջանակը

- Կրթություն/լիազորագիր
- Աշխատանքին բնորոշ կարողություններ
- Հատուկ կարողություններ
- Վարվելակերպի գծով կարողություններ




- Ֆորմալ աշխատանքի ապախթանիչներ հարկային և նպաստների համատեղ ազդեցության հետևանքով
- Տան խնամքի պարտականություններ
- Իրավունքի պակաս
- Հեռավորություն շուկաներից
- Տեղեկատվության պակաս


Աղբյուրը՝ Համաշխարհային բանկ:

Կրթական մակարդակի առումով աղքատների ու ՄԱՀ-ի շահառուների և ընդհանուր բնակչության պրոֆիլները նույնպես էապես չեն տարբերվում: Պատկեր 20-ից երևում է, որ բոլոր խմբերում ընդգրկված անձանց ավելի քան 90 տոկոսն ավարտել է միջնակարգ դպրոցը, ԸՆԾ-ի շահառուների գրեթե մեկ երրորդը և աղքատների մոտ 40 տոկոսը բարձրագույն կրթություն ունեն, որը միջազգային չափորոշիչներով բավականին բարձր ցուցանիշ է:

Պատկեր 19. Տարիքային բաշխվածությունը՝ ըստ բնակչության հատվածի



Պատկեր 20. Կրթական մակարդակը՝ ըստ բնակչության հատվածի



Խոցելի բնակչության՝ աշխատաշուկայի մասնակցության ցուցանիշների հիմքում կարող են լինել ճանաչողական և վարքային հմտությունների չուսումնասիրված տարբերությունները: Թեև բնակչության տարբեր խմբերի կրթական մակարդակի ցուցանիշը շատ մոտ է, զբաղվածության հարցում նշված տարբերությունների պատճառներից մեկը կարող է լինել ոչ թե ֆորմալ կրթության վկայականի բացակայությունը, այլ փաստացի գիտելիքների և հմտությունների տարբերությունը: Համաաշխարհային բանկի կողմից Հայաստանում վերջերս անցկացված գիտելիքների և հմտությունների ուսումնասիրությունը, որը շուտով կհրապարակվի, վկայում է, որ նույնիսկ կրթական և ժողովրդագրական բնութագրերի համընկման պարագայում դպրոցական տարիքում ավելի ցածր սոցիալ-տնտեսական կարգավիճակ ունեցող ընտանիքներում ապրող երեխաները մեծ տարիքում ցուցաբերել են ավելի ցածր ճանաչողական և սոցիալ-զգացմունքային հմտություններ⁹: Դա հատկապես կարևոր է Հայաստանի համար, որտեղ աշխատաշուկայում ավելի շատ արժևորվում են անձանց համապատասխան աշխատանքային հմտությունները, ոչ թե վկայագրերը: Օրինակ՝ կրթության յուրաքանչյուր լրացուցիչ տարին ավելացնում է մեկ ժամվա վարձատրությունը 4.7 տոկոսային կետով, սակայն «նման եկամտաբերության տոկոսը գործնականում վերանում է հմտությունների տարբեր տեսակները հաշվի առնելիս»: Մյուս կողմից՝ հուսադրող հանգամանքն այն է, որ նման կարողությունները որոշ չափով կարող են յուրացվել ֆորմալ կրթության շրջանակներից դուրս, օրինակ՝ պատշաճ կազմված աշխատաշուկայի ակտիվ ծրագրերի միջոցով:


Բացի այդ, աղքատ տնային տնտեսություններում ապրող կանայք չափազանց մեծ կախվածության մեջ են տնային տնտեսության խնդիրներից, քանի որ ընդհանուր

⁹ Ճանաչողական հմտությունները ներառում են գրագիտությունը և թվաբանությունը, ինչպես նաև վերացական խնդիրները լուծելու կարողությունը, իսկ սոցիալ-զգացմունքային հմտությունները ընդգրկում են բազմակի տիրույթներ (սոցիալական, հուզական, անհատի վարվելակերպի, վերաբերմունքի և այլն):

բնակչության համեմատ՝ ավելի շատ խնամարկյալներ ունեն: Պատկերներ 21–24-ից երևում է, որ ԸՆԾ-ի շահառուները ներկայացնում են բնակչության այն խումբը, որտեղ առավել մեծ է միակողմանի ծնողագուրկ երեխա ունեցող տնային տնտեսությունների կշիռը: ԸՆԾ-ի շահառուների շրջանում նաև ամենաբարձր կշիռն ունեն կին գլխավորով տնտեսությունները (30 տոկոս), թեև այդ ցուցանիշը միջին հաշվով բարձր է նաև ամբողջ բնակչության շրջանում: Սոցիալական ծրագրերում չընդգրկված, այդ թվում անապահով բնակչության համեմատ ԸՆԾ-ի շահառու հանիսացող տնային տնտեսություններում խնամարկյալների անհամաչափ մեծ կշիռը վկայում է իրավունակության որոշման հարցում գործող իրավունակության բանաձևի և նրա սոցիալական խոցելիության բաղադրիչի զգալի ազդեցության մասին (այն ավելի մանրամասն քննարկվում է 2-րդ գլխում):



Պատկեր 21. Միակողմանի ծնողագուրկ երեխա ունեցող տնային տնտեսութ.

Պատկեր 22. 0–15 տարեկան 2 կամ ավելի երեխա ունեցող տնային տնտեսությունները



Պատկեր 23. 0–2 տարեկան 1 կամ ավելի երեխա ունեցող տնային տնտեսութ.

Պատկեր 24. Խնամարկյալներ ունեցող տնային տնտեսությունները



Նշում: Գործակիցը որոշվում է որպես տնային տնտեսությունում ոչ աշխատունակ և աշխատունակ անձանց հարաբերություն:

Աղբյուրը՝ հեղինակների հաշվարկները 2011 թ. SSԿԱՀ-ի հիման վրա:

Վերլուծության արդյունքները վկայում են, որ կանանց համար աշխատանք գտնելու հարցում մեծ արգելք է որոշում կայացնելու անբավարար իրավունքը: Աշխատանք ունեցող և գործազուրկ տղամարդկանց և կանանց, ինչպես նաև բոլոր աշխատող անձանց շրջանում անցկացված ուսումնասիրության արդյունքում պարզվել է (տե՛ս ներդիր 2), որ տնային տնտեսությունում կնոջ դերի մասին պատկերացումները կարևոր գործոն են, որոնք խոչընդոտում են կանանց աշխատանքի անցնելը: Հարցազրույցների ընթացքում կանայք հայտնել են, որ աշխատելու մասին որոշում կայացնելու իրենց իրավունքներն անտեսված են, քանզի ամուսինն ու սկեսուրը ստիպում են, որ իրենք մնան տանը: Կանայք նաև ասում են, որ տնային հոգսերը՝ երեխաների և տարեցների խնամքն իրենց վրա վերցնելով՝ արժանանում են շրջապատի հարգանքին: Ուշագրավ է, որ սոցիալական նորմերն ազդում են նաև տղամարդկանց զբաղվածության մոտեցումների վրա, թեև այլ դրսևորմամբ՝ տղամարդիկ ասում են, որ ցածր վարձատրվող կամ ոչ որակյալ աշխատանք կատարելն իրենց շրջապատում նվաստացուցիչ է համարվում:

Ներդիր 2. Կանանց աշխատանքի շուկա մուտք գործելու խոչընդոտները

Կանանց և տղամարդկանց աշխատանքի շուկա մուտք գործելու խոչընդոտների մասին ավելի լավ պատկերացում կազմելու նպատակով կատարվել է ուսումնասիրություն: Այն կազմակերպվել է Երևանում և մի քանի մարզերում աշխատանք ունեցող և գործազուրկ տղամարդկանց ու կանանց թիրախային խմբերում անցկացված քննարկումների, ինչպես նաև գործատուների, քաղաքականության համար պատասխանատու տարբեր պաշտոնյաների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ հարցազրույցների միջոցով:

Սոցիալական նորմերից բխող խոչընդոտները: Տղամարդիկ և կանայք աշխատանքի առումով առնչվում են տարբեր խնդիրների հետ: Կանայք գանգատվում են, որ ամուսիններն ու սկեսուրները ստիպում են իրենց չաշխատել. «Իմ ամուսինը ինձ թույլ չի տալիս աշխատել, և ես ոչինչ չեմ կարող անել, թեև ցանկանում եմ աշխատել, բայց նա ընտանիքի գլխավորն է, և նրա խոսքն օրենք է», - ասում է Գեղարքունիքից մի չաշխատող կին: Սակայն կանայք նաև սոցիալական նորմերի ազդեցությամբ պայմանավորված գտնում են, որ տանը մնալն իրենց շրջապատի հարգանքը վայելելու ամենալավ ճանապարհն է: «Այն կանայք, որոնք ցանկանում են առաջխաղացում ունենալ իրենց աշխատանքում և ակտիվ են, միշտ քննադատության են արժանանում, և ոչ բոլորն են պատրաստ ընդունելու այն և արժանանալու հասարակության բացասական վերաբերմունքին», - ասել է մի չաշխատող կին: Մեկ այլ չաշխատող կին Գեղարքունիքից նշել է. «Ես մեր ընտանիքում ամենահարգված հարսն եմ և այդ պատճառով որոշեցի տանը մնալ և ամեն ինչ կազմակերպել: Խնամել երեխաներին, հիվանդ սկեսուրիս, կատարել տան աշխատանքը և հիմա ես ինձ շատ երջանիկ եմ զգում, որ այդպես որոշեցի, ընտանիքում բոլորն ինձ շատ հարգում և ընդունում են»:

Տղամարդիկ, մյուս կողմից, մեծ ճնշման են ենթարկվում աշխատանք գտնելու առումով, սակայն այդ աշխատանքը պետք է նաև լինի բարձր վարձատրվող: «Տղամարդիկ երագում են միայն մեծ փողերի մասին, սակայն դրա փոխարեն շատ ավելի լավ կլիներ բազմոցից վեր կենալ և գործնականում ինչ -որ աշխատանք կատարել փող վաստակելու համար», - ասել է Արագածոտնից աշխատանք ունեցող մի կին: Երևանից մեկ այլ գործազուրկ կին նշել է, որ «գործազուրկ տղամարդիկ ավելի անշահեկան վիճակում են հիմա, քան գործազուրկ կանայք, որովհետև կնոջ փոխարեն տղամարդը պետք է իր վրա վերցնի ողջ պատասխանատվությունը և ապահովի ընտանիքը»:

Տնային տնտեսությունում պարտականություններից բխող խոչընդոտներ: Կանայք պատասխանատու են տան մի շարք հոգսերի համար, օրինակ՝ երեխաների, տան և տարեցների խնամքի, ինչի հետևանքով նրանք աշխատելու ժամանակ չունեն: Ինչպես նշեց Երևանից մեկ գործազուրկ կին. «Ես տանն այնքան բան ունեմ անելու, որ հնարավոր չէ համատեղել ընտանեկան և աշխատանքային պարտականությունները»: Երեխաների խնամքը թանկ է, և կանայք ստիպված են ամբողջ վաստակած գումարը ծախսել դրա վրա: Լոռու մարզից մի գործազուրկ կին ասել է. «Աշխատելը անիմաստ է, որովհետև ամբողջ վաստակած գումարը ծախսում ես տրանսպորտի և մանկապարտեզի վրա»:

Սոցիալական նորմերը և տնային տնտեսությունների պարտականությունները ներագրում են կանանց նկատմամբ գործատուների պատկերացումների և մոտեցումների վրա: Գործատուների մեծ մասը տղամարդիկ են, և թեպետ նրանք ընդունում են, որ շատ աշխատանքների համար կանանց հմտություններն ավելի բարձր են, քան տղամարդկանց, սակայն նախընտրում են կանանց աշխատանքի չընդունել, որովհետև համարում են, որ նրանց տեղը տանն է կամ նրանց տնային պարտականությունները կարող են խանգարել աշխատանքին: Ինչպես նշել է մի գործատու. «Գրեթե ամեն օր կանանցից որևէ մեկն ասում է, որ պետք է այսօր շուտ տուն գնա, երեխային մանկապարտեզից վերցնելու համար, կամ վաղը ուշ կգա, որովհետև երեխային դպրոց պետք է տանի, պետք է ծնողական ժողովի գնա և այլն»: Բացի այդ, տանը մնալու պատճառով կանայք դժվարանում են աշխատանք գտնել: «40 տարին հասած մարդիկ, հատկապես այն կանայք, որոնք զբաղված են երեխաների խնամքով, ստացել են խորհրդային շրջանի կրթություն, որը հիմա այլևս անմրցունակ է, գրեթե համակարգչային հմտություններ չունեն և մեծ մասամբ չեն տիրապետում անգլերենին», ասել է գործատուներից մեկը: «Ես գիտակցում եմ, որ դա լավ չէ, որ

Ես խտրականություն եմ ցուցաբերում, սակայն ես նույնիսկ չեմ ծանոթանում 1965–70 թթ. ծնված դիմողների ինքնակենսագրությանը»:

Մոցիալական նորմերն ազդում են մարդկանց աշխատանքի, աշխատավարձի և աշխատանք գտնելու

գործընթացների վրա: Այդպիսի պատկերացումներից ելնելով՝ տղամարդիկ կարող են դժկամությամբ ընդունել աշխատանքի առաջարկները կամ ակտիվորեն չփնտրել այն: «Հույս չունեմ աշխատանք գտնել, նույնիսկ չեմ էլ փնտրում այն,- ասել է Երևանից մեկ գործազուրկ տղամարդ:- Բոլոր դեպքերում պետք է շատ ազդեցիկ կապեր ունենաս կամ էլ կաշառք վճարես աշխատանք գտնելու համար, էլ ինչո՞ւ պետք է ես հոգս տանեմ»: Կամ. «Ինչպե՞ս տղամարդը քարտուղար կարող է աշխատել, քարտուղարներն իրենց ղեկավարի համար սուրճ են պատրաստում»:

Աղբյուրը՝ Կանանց աշխատանքի շուկա մուտք գործելու խոչընդոտների դիտարկում

Տնտեսական գործոնները, այդ թվում՝ երեխաների խնամքի ծառայությունների բարձր գինն ու սակավությունը, ինչպես նաև աշխատավարձի հարցում զգալի գենդերային ճեղքվածքը նպաստում են տնային տնտեսությունում աշխատանքի ավանդական բաշխմանը:

Սոցիալական նորմերից զատ, թիրախային խմբի մասնակիցները նշում են, որ երեխաների մասնավոր խնամքի բարձր գինը և ավելի էժան տարբերակների պակասն ավելի է դժվարացնում աշխատանք փնտրելու իմաստավորումը: Դա հատկապես վերաբերում է այն կանանց, որոնց վարձատրության միջին մակարդակն ավելի ցածր է¹⁰: Փաստացի ուսումնասիրության եզրահանգումները համընկնում են տեսական վերլուծության արդյունքների հետ (ՏՀԶԿ-ի հարկերի և նպաստների մոդել), որն առավել մանրամասն կներկայացվի հաջորդ գլխում: Մոդելից երևում է, որ կանանցից շատերը չեն կարող իրենց թույլ տալ ցածր վարձատրությամբ աշխատանքի անցնել՝ հաշվի առնելով տնային հոգսերի մեծ բեռը և երեխայի խնամքի հետ կապված մեծ ծախսը:

Այս բաժնում ներկայացված բնութագրերը կարևոր ազդեցություն են թողնում սոցիալապես անապահով անձանց աշխատաշուկայի ակտիվ ծրագրերում ընդգրկելու հասցեականության և կառուցվածքի վրա, որն ավելի մանրամասն կդիտարկվի 3-րդ գլխում:

¹⁰ Ինչպես նշվում է Rutkowski 2012-ում, Հայաստանում աշխատավարձերի գենդերային ճեղքվածքը չափազանց մեծ է, այդ պատճառով ցածր վարձատրությամբ աշխատանքի հավանականությունը կանանց շրջանում զգալիորեն ավելի բարձր է, քան տղամարդկանց շրջանում:

Գլուխ 2. Արդյոք սոցիալական պաշտպանության համակարգը պատրաստ է ակտիվացմանը

Հիմնական ուղերձները

ՄՊ-ի գծով ծախսերը Հայաստանում զիջում են տարածաշրջանի այլ երկրների ցուցանիշներին և գրեթե լիովին հասցեագրված են անաշխատունակ համարվող անձանց:

- 2012 թ. Հայաստանի ՀՆԱ-ի 5.4 տոկոսը կազմում է սոցիալական ապահովագրության, 1.7 տոկոսը՝ սոցիալական աջակցության և շուրջ 0.1 տոկոսը՝ զբաղվածության ծրագրերի գծով ծախսը՝ Միջին Եվրոպայի կամ Կենտրոնական Ասիայի երկրների, համապատասխանաբար, մոտ 8, 2 և 0.7 տոկոսի համեմատ: ԸՆԾ-ն աղքատների պաշտպանության գծով հիմնական սոցիալական աջակցության մեխանիզմն է:
- Աշխատունակ բնակչության աջակցության բյուջեն կազմում է ՄՊ ընդհանուր ծախսի ընդամենը 6 տոկոսը: Սոցիալապես անապահով աշխատունակ անձանց անբավարար սոցիալական պաշտպանությունը կարող է անուղղակիորեն նրանց նախընտրել ոչ ակտիվ ծրագրերը, օրինակ՝ հաշմանդամության թոշակը:

Հասցեականության համակարգի հիմքում փորձառության և պրակտիկայի ամուր հիմքերն են, սակայն այն կարելի է ավելի ուժեղացնել՝ աղքատների ծածկույթն առավելագույնի հասցնելու համար:

- ԸՆԾ-ն բարձր արդյունքներ է արձանագրում նպաստների վարչարարության, իրավունակության որոշման և հանրայնացման առումով: Մակայն նպաստներից դեռևս օգտվում է աղքատության վերին գծից բարձր գտնվող տնային տնտեսությունների միայն մոտ մեկ քառորդը: Դա պայմանավորված է իրավունակության բանաձևի խիստ պահանջներով, որը ձգտում է ծրագրում ընդգրկել հիմնականում շատ խնամարկյալներ ունեցող տնային տնտեսությունները:
- Բանաձևը կարելի է բարելավել և համապատասխանեցնել տարաշաճի ասպառողական աղքատության ծածկույթի ապահովմանը միտված լավագույն չափորոշիչներին՝ հաշվի առնելով երկրում առկա բարձր ներուժը:
- Բնակչության անապահով զանգվածի եկամտի չափազանց ցածր մակարդակը և սպառողական անհավասարությունն ավելի են դժվարացնում նպաստների արդյունավետ հասցեագրումը: Հայաստանում աղքատ բնակչությանը բացահայտելու համար եկամտի փոխարեն ավելի նպատակային կարող է գործել սպառողական աղքատության մոտարկման բանաձևը:

Աջակցության ծառայությունների պատշաճ մակարդակի ապահովման դեպքում ներկայումս ԸՆԾ-ում ընդգրկված տնային տնտեսությունների հիմնական մասը կարող է ունենալ ակտիվացման միջոցառումներին մասնակցող առնվազն մեկ անդամ:

- Ակտիվացման տեսանկյունից ԸՆԾ-ի շահառու հանդիսացող անձանց շուրջ կեսը կարող է համարվել աշխատունակ, թեև նրանցից շատերը, հատկապես՝ կանայք, տնային խնամքի գծով բավական մեծ պարտականություններ ունեն: Այդուհանդերձ, նույնիսկ հաշվի առնելով խնամքի պարտականությունները, ԸՆԾ-ի շահառուների մեծ մասը աշխատելու համար ժամանակ կունենա:
- Գործող տեղեկատվական համակարգը հնարավորություն չի տալիս բացահայտելու, թե աշխատունակ անձինք ներկայումս որքանով արդեն արդյունավետ զբաղված: Վարչական տվյալների համաձայն՝ նրանց շարքերում աշխատունակ անձանց միայն 7 տոկոսն է գրանցված որպես աշխատանք ունեցող: Դա հակասում է ՏՏԿԱՀ-ի ցուցանիշներին, որոնցից հետևում է, որ ԸՆԾ-ում ընդգրկված աշխատունակ բնակչության շուրջ կեսն աշխատում է:

Սակայն հարկերի և նպաստի բանաձևի համակցությունը կարող է խոչընդոտ հանդիսանալ ցածր վարձատրվող ֆորմալ աշխատանքի անցնելու հարցում:

- Վարչական տվյալներից երևում է, որ ԸՆԾ-ում առաջին անգամ ընդգրկված անձանց դեպքում մոտ 16 ամիս անց այն լքելու հավանականությունը կազմում է շուրջ 25 տոկոս, ընդ որում ծրագիրը լքող տնային տնտեսությունների մեծ մասի անապահովության միավորը շատ մոտ է իրավունակության շեմին մուտքի պահին, և հեռացումը նրանց ֆինանսական պայմանների էական բարելավմամբ չի պայմանավորված:
- Շահառուների ֆորմալ աշխատանքի անցնելու կամ այն փոխելու շարժունակությունը նվազագույն է: Դա համընկնում է այն փաստի հետ, որ մինչև 2013 թվականը նպաստների բանաձևը սահմանափակ հնարավորություններ էր ընձեռում աշխատունակ շահառուներին, առանց ծրագրից արագորեն հեռացվելու մտավախության, աշխատունակ շուկա վերադառնալու փորձեր կատարելու համար:
- Բանաձևի վերջին փոփոխությունները (2014 թ. բանաձևից հանվեց ԱՇԱԾ-ներից ստացվող եկամուտը) կարևոր քայլեր են աշխատանքային ակտիվացմանը նպաստելու ուղղությամբ, որոնց արդյունքները պետք է շարունակաբար դիտարկվեն փորձառության համար:

Բացի այդ, անհատների ակտիվացման ծրագրերը սահմանափակ են այն պահանջարկի համեմատ, որը կառաջացնեն համատեղ պարտավորությունների կիրառումը:

- Որպես աշխատանք ունեցող չգրանցված շահառուներից շատ քչերն են գրանցված ԶՊԾ-ում: Ներկա բանաձևը ստեղծում է որոշ սահմանափակ լծակներ, սակայն, ի տարբերություն տարածաշրջանի երկրների մեծ մասի, չի պարտավորեցնում գրանցվել տնային տնտեսությունների անդամներին:
- Թեև ԶՊԾ-ի հետ կոորդինացման բարելավումը ցանկալի է, թափուր աշխատատեղերի և ԱՇԱԾ-ների ցածր թվի պատճառով համակարգը ներկայումս չի կարող ապահովել ակտիվացման ծառայություններ նույնիսկ յուրաքանչյուր տնային տնտեսության մեկ անդամի համար:

Այդ սահմանափակ կարողությունների պայմաններում առաջարկվող սակավաթիվ
ծառայություններից առավելագույնը օգտվելու համար անհրաժեշտ է բարելավել
շահառուների պրոֆիլավորումը:

Նախաբան

Այս գլխի նպատակը գնահատելն է, թե ինչ աստիճանի է Հայաստանի նպաստների համակարգը միտված աղքատության կրճատմանը, ինչպես նաև խոցելի բնակչության ակտիվ ընդգրկմանը աշխատաշուկայում: Վերլուծությունը կատարվում է երեք բաժիններով: Բաժին 1-ում ներկայացվում է Հայաստանի նպաստների համակարգի ընդհանուր պատկերը և դիտարկվում է, թե որքանով են բյուջեի սոցիալական ծախսերը նպատակաուղղված այդ նպատակին: Բաժին 2-ում դիտարկվում է համակարգի արդյունավետությունը աղքատության կրճատման տեսանկյունից: Վերջապես, բաժին 3-ում վարչական տվյալների հիման վրա տրվում է ակտիվացման ներուժը սոցիալական ապահովության համակարգի շահառուների համար, ինչպես նաև գնահատվում է պատրաստականությունը համակարգի ակտիվացման համար: Մասնավորապես մենք ուսումնասիրում ենք, թե որքանով է ԸՆԾ-ն նպաստում աշխատաշուկայում շահառուների ընդգրկմանը, կատարելով շահառուների համակարգից հեռացման պատճառների մի շարք էմպիրիկ վերլուծություններ և նպաստների իրավունակության բանաձևի արդյունքում առաջացող լծակների մոդելավորում: Ի վերջո, ամփոփվում է ներկա աշխատաշուկայի ակտիվ քաղաքականությունը և այն, թե որքանով է դա կոորդինացված սոցիալական աջակցության հետ:

Ընդհանուր առմամբ վերլուծությունից երևում է, որ Հայաստանի նպաստների համակարգը հիմնականում միտված է ոչ աշխատունակների պաշտպանությանը, ինչը բնորոշ է ամբողջ տարածաշրջանին: Բյուջետային ֆինանսավորման հիմնական ուղղությունները ծերության և հաշմանդամության կենսաթոշակներն են: Աշխատունակ անձանց աղքատությունից պաշտպանելուն, ինչպես նաև նրանց մուտքը աշխատաշուկա խթանելուն ուղղված նպաստները սահմանափակ են այն նպաստների համեմատ, որոնք տրվում են ոչ ակտիվացման սկզբունքով, օրինակ՝ հաշմանդամներին: ԸՆԾ-ն ներկայացնում է Հայաստանում աղքատների եկամտի պաշտպանության հիմնական գործիքը և կարևոր դեր է խաղում աշխատունակների աղքատության կրճատման առումով: Սակայն ժամանակի ընթացքում ծրագրի հասցեականությունը որոշակիորեն նվազել է, և ներկայիս նպաստի բանաձևի կառուցվածքը նախատեսում է կարևոր բացառող ֆիլտրեր, որոնք ծածկույթի մակարդակը ցածր են պահում և գործում են անհավասար սկզբունքով՝ հօգուտ տնային տնտեսությունների որոշ խմբերի:

Թեև ՄԾ-ի շահառուներն ակտիվացման որոշակի ներուժ ունեն, նպաստի կառուցվածքը չի խթանում ծրագրից հեռանալը, հատկապես՝ առավել բարձր ներուժ ունեցողների պարագայում: Երբ տնային տնտեսությունն ընդգրկվում է ԸՆԾ-ի համակարգում, հավանականությունը, որ ժամանակի ընթացքում այն կլքի այդ համակարգը բավականին ցածր է, ընդ որում աղքատությունը հաղթահարելու պատճառով այդ համակարգից հեռացող տնային տնտեսությունների թիվը նույնիսկ ավելի փոքր է: Թեև, ըստ տարածաշրջանային

չափանիշների, ծրագրի ծավալը (շռայլությունը) այնքան էլ մեծ չէ¹¹, բանաձևի կառուցվածքը կարելի է բարելավել՝ նվազեցնելով ցածր վարձատրվող *ֆորմալ* աշխատանքի անցնելու ապախթանիչները և խրախուսելով մասնակցությունը ակտիվացման միջոցառումներին: ԶՊԾԳ-ն ներկայումս իրականացնում են մի շարք ԱՇԱԾ-ներ, որոնք արդյունավետ են գործազրկության կրճատման տեսանկյունից, սակայն դրանց ծավալն ու մասնավոր ոլորտում առկա թափուր տեղերի քանակը իրական պահանջարկին չեն համապատասխանում:


¹¹ ԸՆԾ-ն կազմում է ամենաաղքատ քվինտիլի շահառուների հետտրանսֆերտային ընդհանուր սպառման շուրջ 33 տոկոսը: Մոցիլակյան անապահովության ծրագրերի ծավալը ԵԿԱ տարածաշրջանում տատանվում է 8 տոկոսից (Ռումինիա 2011 թ.) մինչև 45 տոկոս (Վրաստան 2011 թ.) (ECA SPeED, 2014):

Հայաստանի սոցիալական աջակցության և գործազրկության նպաստների համակարգի հիմնական բնութագրերը

Տարածաշրջանի այլ երկրների համեմատ՝ Հայաստանում սոցիալական պաշտպանության ծախսի մասնաբաժինը ՀՆԱ-ում ցածր է: Ինչպես Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների մեծ մասում, Հայաստանում ՄԱ համակարգը բաղկացած է երեք հիմնական բաղադրիչներից, դրանք են՝ սոցիալական ապահովագրություն, աշխատաշուկա և սոցիալական աջակցություն¹²: ԵԿԱ երկրները սոցիալական ապահովագրության գծով միջինը ծախսում են ՀՆԱ-ի մոտ 8 տոկոսը, սոցիալական աջակցության գծով՝ 2 տոկոսը և աշխատաշուկայի ծրագրերի գծով՝ մոտ 0.5-1 տոկոսը (ինչպես ակտիվ միջոցառումների, այնպես էլ գործազրկության նպաստների գծով), իսկ Հայաստանում այդ ցուցանիշները 2012 թ. կազմում էին, համապատասխանաբար, է 5.4, 1.7 և մոտ 0.1 տոկոս (պատկեր 25): Այդուհանդերձ Հայաստանում այդ երեք բաղադրիչների գծով ընդհանուր ծախսը կազմում է կենտրոնական կառավարության բյուջեի զգալի մասը: Ակնկալվում է, որ 2014 թ. բյուջեում սոցիալական պաշտպանության ծախսը կկազմի 7.6 տոկոս՝ 2013 թ. ՀՆԱ-ի 6.7 տոկոսի համեմատ: Այդուսակ 1-ում ներկայացված է Հայաստանում սոցիալական պաշտպանության ծրագրերի մանրամասն բացվածքը, ինչպես նաև բերվում են ՀՆԱ-ում սոցիալական ծախսերի կշիռների և շահառուների թվի 2012 թ. ցուցանիշները:

¹² Սոցիալական ապահովագրության ծրագրերը նախատեսված են եկամտի անսպասելի և կտրուկ կրճատման դեպքում տնային տնտեսություններին օգնելու համար: Սոցիալական աջակցության ծրագրերը ոչ համաֆինանսավորվող տրանսֆերտային ծրագրեր են, որոնք հասցեագրված են հիմնականում աղքատության և տնտեսական ցնցումների նկատմամբ խոցելի բնակչությանը: Աշխատաշուկայի ծրագրերն ընդգրկում են ինչպես կարողությունների, զբաղվածության և մասնակիցների երկարաժամկետ եկամուտ վաստակելու ունակությունների բարելավմանը միտված ակտիվ ծրագրերը, այնպես էլ պասիվ ծրագրերը, որոնք եկամտային օժանդկություն են ապահովում գործազրկության դեպքում:

Պատկեր 25. Սոցիալական պաշտպանության ծախսը Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրներում և Հայաստանում



Աղբյուրը՝ ECA SPeED (2014). վերջին տարվա հասանելի տվյալներ:

Աղյուսակ 1. Սոցիալական պաշտպանության հիմնական ծրագրերը, 2012 թ.

Կատեգորիա	Ծրագրեր	Հասցեագրված է աշխատունակ բնակչությանը	ՀՆԱ, %	ՄԱ, %	Ուղղակի շահառու	Աղքատների ծածկույթ, %
Սոցիալական ապահովագրություն	Ընդամենը սոց. ապահովագրության ծրագրեր		4.4	70.7	00a	59.3
	Կենսաթոշակ	Ոչ	4	01	459,000	59.3
	Այլ սոց. ապահովագրություն (օրինակ՝ հիվանդության արձակուրդ, մայրության արձակուրդ)	Ոչ	0.16	2.7	64,678	-
Աշխատաշուկա	Բոլոր ԱՇ ծրագրեր		0.07	1.2	-	1 (հաշվ.)
	Մասնագիտական ուսուցում*	այո	0.01	0.2	1,477	-
	Նյութական խրախուսում/սուբսիդիաներ**				596	
	Փոխհատուցում ընկերությանը հաշմանժամ անձին աշխատանքի ընդունելու դիմաց				32	
	Ընկերության մեկնարկի համար գումարային աջակցություն				147	
	Գործազրկության նպաստներ			0.06	1	12,818
Սոցիալական աջակցություն	Ընդամենը սոց. աջակցության ծրագրեր		1.5	25.1	-	20.7
	ԸՆԾ և հրատապ օգնություն	Տարբեր (45% աշխատունակ)	0.8	14	97,500	21.6
	Սոցիալական կենսաթոշակ	Ոչ	0.23	4.2	42,045	-
	- տարիքային		0.01	0.2	(հաշվ.)	-
	- հաշմանդամության		0.18	3.2	9,820	-
	- նվազագույն		0.05	0.8	(այլ)	-
	Ընտանեկան նպաստներ	Ոչ	0.18	3.2		
	- ծննդաբերության նպաստ		0.11	1.9	43,449	1.5
	- երեխայի խնամքի նպաստ		0.07	1.3	11,299	
	Այլ սոցիալական աջակցության նպաստներ		0.21	3.8		
	- հուղարկավորության նպաստ	-	0.11	1.9	23,275	-
- առողջապահության նպաստ	Տարբեր (45% աշխատունակ)	0.1	1.8	97,500	-	
Ընդամենը		Ուղղակի նպաստների 8% Բոլոր ծախսերի 6%	6.70	100		69.1

Աղբյուրը՝ ECA SPeED (2014).

Նշում: Տոկոսների գումարը կարող է չհամընկնել գումարեկների կլորացման պատճառով:

*Մասնագիտական ուսուցման ծրագրերը նախատեսված են ռիսկային խմբերի, արտոնյալ կենսաթոշակառուների, ոչ բավարար փոխհատուցում ստացող հաշմանդամների և երկարաժամկետ գործազուրկների համար:

**Ներառում է աշխատավարձի մասնակի սուբսիդավորումը/աշխատանքը փոխելու համար նպաստը: Աշխատանքային պրակտիկա գործազուրկների և մասնագիտական որակավորում ունեցող, սակայն մինչ այդ չաշխատած հաշմանդամ անձանց համար:

Սոցիալական աջակցության ծախսի հիմնական մասը կազմում է Հայաստանի աղքատության հաղթահարման ծրագրի հիմնապայուսը՝ ԸՆԾ-ն և դրանից բացի մի շարք նպաստներ, որոնց բաշխումն անապահովության միավորի հիման վրա չի իրականացվում: 2012 թ. Հայաստանի

ՀՆԱ-ի շուրջ 0.79 տոկոսը կազմել է ԸՆԾ-ն, ընդ որում անապահովության միավորի հիման վրա չբաշխվող նպաստների ծախսը կազմել է ՀՆԱ-ի մոտ 0,63 տոկոսը: Այլ ծրագրերի թվում են տարբեր չափերի նպաստները՝ կախված հաշմանդամության աստիճանից, տարիքային և նվազագույն կենսաթոշակը (կուտակային համակարգում չներառված անձանց համար), ընտանեկան նպաստները, այդ թվում՝ աշխատող մայրերի համար երեխայի խնամքի նպաստը մինչ երեխայի 2 տարին լրանալը, միջնակարգ դպրոցի առաջին դասարան ընդունվելու նպաստը, ծննդաբերության նոր խոշոր չափի դրամաշնորհը, ինչպես նաև հուղարկավորության նպաստը:

Վերջին տասը տարիներին Հայաստանում իրականացվել են տարբեր բարեփոխումներ, մեծ ուշադրություն է հատկացվել ակտիվ աջակցության միջոցառումներին: Սոցիալական պաշտպանության և գործազրկության ծրագրերի մեծ մասն այդ ժամանակաշրջանում զգալի բարեփոխման է ենթարկել: Հայաստանում պետական ծախսերի վերջին ուսումնասիրությամբ (World Bank, 2014b) խորությամբ դիտարկվել է այդ հարցը: ԱՄՀՆ-ն ՀԲ-ի օժանդակությամբ կարևոր քայլեր է ձեռնարկել սոցիալական պաշտպանության ծառայությունների հետագա ինտեգրացման ուղղությամբ՝ համախմբելով դրանք համալիր սոցիալական ծառայությունների կենտրոններում: Նորաստեղծ կենտրոններում գործում են միասնական ընդունարանները, որտեղ դիմումները մուտքագրվում և հետագա ընթացք են ստանում: Շուտով կգործի նաև սոցիալական աշխատողների համակարգը: Աշխատաշուկայի ոլորտում 2013-ից այլևս չի հատկացվում գործազրկության նպաստը (այն գործում էր 2005 թվականից), դրան պետք է փոխարինի աշխատանք փնտրող անձանց նպաստը, որի համար սահմանված են ավելի խիստ նախապայմաններ: Նախատեսվում է նաև ավելացնել պետական զբաղվածության ծրագրերի ֆինանսավորումը: Բացի այդ, 2014 թ. պետական նպաստների բարեփոխումը կնախատեսի խոշոր չափի դրամաշնորհներ բազմազավակ ընտանիքներին երեխայի ծննդաբերության համար:

Չնայած այդ փոփոխություններին՝ ակտիվ և աշխատունակ բնակչության աշխատանքային ակտիվացմանն ուղղված սոցիալական պաշտպանության ծախսը կազմում է ընդհանուր ՄՊ ծախսի շատ փոքր մասնաբաժինը: Այն միտված է աշխատունակ բնակչության կարիքների բավարարմանը, ընդ որում հիմնական ծրագրերն են ԱՇԱԾ-ները, պասիվ աշխատանքային եկամտի օժանդակության ծրագրերը և որոշ չափով սոցիալական աջակցության նպաստները, որոնք հատկացվում են նաև աշխատող բնակչությանը, օրինակ՝ ընտանեկան նպաստները: Կենսաթոշակներից, հաշմանդամության նպաստներից և երեխայի խնամքի նպաստներից անուղղակիորեն կարող են օգտվել նաև տնային տնտեսությունների աշխատունակ անդամները, սակայն դրանց հիմնական նպատակը ոչ ինքնաբավ քաղաքացիների համար եկամտի աղբյուր դառնալն է, ընդ որում դրանք չեն խթանում (կամ արգելում) մասնակցությունը աշխատաշուկայում: Ինչպես ներկայացված է աղյուսակ 1-ում, աշխատաշուկայում ակտիվ կամ ոչ ակտիվ բնակչության ֆինանսական օգնության կամ ծառայությունների տեսքով հասցեագրված ՄԾ-ի բյուջեն կազմում է ընդհանուր ՄԾ ծախսի


ընդամենը 6 տոկոսը: Ավելի խոշոր՝ ծննդաբերության դրամաշնորհը նույնպես միտված չէ աշխատունակ բնակչության ակտիվացմանը, այն նույնպես անապահովության միավորի հիման վրա չի հատկացվում: Թեև սոցիալական ծառայությունների ինտեգրացումը պետք է խթանի բնակչության ակտիվ ներառումը աշխատաշուկայում և նպաստի աղքատության աղբյուրների վերացմանը, անհրաժեշտ է էապես ավելացնել ակտիվ նպաստների ֆինանսավորումը, որը հնարավորություն կտա ավելի մեծ թվով անձանց ներառել նոր ծրագրերում:

Աշխատաշուկայի քաղաքականության գծով ընդհանուր ֆինանսավորումը, կազմելով ՀՆԱ-ի 0.07 տոկոսը, տարածաշրջանային չափանիշներով ցածր է և 2010 թ. Մկսած՝ նվազում է, թեև գործազրկության նպաստի դադարեցումը կավելացնի ակտիվ միջոցառումների բացարձակ ֆինանսավորումը: Պատկեր 26-ը ցուցադրում է աշխատաշուկայի քաղաքականության գծով ծախսերի դինամիկան՝ ըստ կատեգորիաների: 2000-ական թթ. կեսերից ԱՇԱԾ-ների (հիմնականում մասնագիտական ուսուցման) և գործազրկության նպաստների բյուջետային ծախսը Հայաստանում զգալիորեն աճել է: Մակայն թե՛ ակտիվ, թե՛ պասիվ ծրագրերի շահառուների թիվը նվազել է: Ծրագրի փակմանը նախորդող երկու տարիների ընթացքում գործազրկության նպաստի շահառուների թիվը կրճատվել է գրեթե կեսով, կրճատվել է նաև ընդհանուր ծախսը: Դա մասամբ պայմանավորված էր գործազրկության մակարդակի նվազմամբ, սակայն աջակցության մակարդակը հնարավորություն չի տալիս զգալի չափով բավարարելու գործազուրկ բնակչության կարիքները: ԱՇԱԾ-ների ծախսի կրճատումը պայմանավորված է աշխատավարձերի սուբսիդավորման և հանրային աշխատանքների ֆինանսավորման կրճատմամբ:

Մեկ շահառուի հաշվով ծախսը նույնպես հիմնականում զիջում է այլ ոչ ակտիվ նպաստների չափերին, այդ թվում՝ ընտանեկան նպաստին և գործազրկության նպաստին: Մեկ շահառուի հաշվով ծախսն էապես տարբեր է՝ ըստ ԱՇԱԾ-ի տեսակի և տատանվում է 2012 թ. մասնագիտական ուսուցման համար հատկացված 122 հազար դրամից (մոտ 300 դոլար) մինչև սոցիալապես խոցելի խմբերի աշխատավարձերի սուբսիդավորման 287 հազար դրամը (718 դոլար): Համեմատության համար հարկ է նշել, որ գործազրկության նպաստների միջին ծախսը՝ մեկ շահառուի հաշվով, 2012 թ. տարեկան կազմում էր շուրջ 190,000 ՀՀ դրամ (մոտ 470 դոլար), իսկ ընտանեկան նպաստի միջին տարեկան գումարը կազմում էր 352,000 դրամ (815 դոլար): Թեև այդ գումարը շարունակում է զիջել տնային տնտեսության նվազագույն կենսամակարդակի ապահովման համար անհրաժեշտ գումարին (աղքատության գծի սահմաններում), 2012 թ. այդ նպաստներն այլ ցուցանիշների, օրինակ՝ նվազագույն աշխատավարձի համեմատ (ամսական 32,000 դրամ կամ տարեկան 390,000 դրամ), շարունակում էին կարևոր դեր խաղալ: Մակայն պասիվ նպաստների և նվազագույն աշխատավարձի տարբերությունը վերջերս մեծացավ՝ չնայած նվազագույն աշխատավարձի պարբերական բարձրացումներին (2014 թ. այն հասավ 50,000 դրամի) և այն փաստին, որ

գործազրկության նպաստ այլևս չի տրամադրվում, իսկ ընտանեկան նպաստի չափը իրական արտահայտությամբ չի ավելացել:

Պատկեր 26. Զբաղվածության ծրագրերի ծախսերը



Աղբյուրը՝ ECA SPeeD (2014): Ցուցանիշները ՀՀ դրամով են, տարեկան արտահայտությամբ:
 Նշում: 2005 թ. տվյալները բացակայում են:


Սոցիալական աջակցության համակարգի արդյունավետությունը աղքատության կրճատման հարցում

ԸՆԾ համակարգն աշխատունակ անձանց և նրանց ընտանիքների պաշտպանության առանցքային կառուցակարգն է: Սոցիալական աջակցության բոլոր նպաստներից ԸՆԾ-ն ամենախոշորն ու առավել հասցեականն է: Ի տարբերություն ԵԿԱ երկրների նվազագույն եկամտի այլ ծրագրերի՝ ԸՆԾ-ն համարվում է վերջին հանգրվանի սոցիալական աջակցություն՝ հասցեագրված է այն քաղաքացիներին, որոնք աղքատ և սոցիալապես խոցելի են: ԸՆԾ-ի իրավունակությունը որոշվում է բազմապատկման բանաձևի միջոցով, որը հաշվի է առնում ընտանիքի անդամների եկամուտը, աղքատության մի քանի չափանիշները և «սոցիալական խոցելիությունը» (տե՛ս ներդիր 3): Իրավունակության գնահատման նվազագույն՝ 30 միավոր ստանալու համար տնային տնտեսության սոցիալական խոցելիությունը պետք է բարձր մակարդակ ունենա, և նրա եկամուտը չպետք է գերազանցի սահմանված շեմը: 0 միավոր տրվում է այն տնային տնտեսություններին, որոնց ֆորմալ եկամուտը շատ բարձր մակարդակ ունի կամ որոնց սեփականությունը հանդիսացող ակտիվները հնարավորություն չեն տալիս ներառելու նրանց ծրագրում:

ԸՆԾ-ի իրավունակության շեմից ցածր գտնվող տնային տնտեսությունների համար նախատեսված է ավելի փոքր չափի միանվագ դրամական օգնություն: 0-ից բարձր և 30-ից ցածր միավոր ունեցող տնային տնտեսությունները ԸՆԾ-ում չեն կարող ընդգրկվել, սակայն սոցիալական կենտրոնի որոշմամբ կարող են ստանալ միանվագ դրամական նպաստ: Այդ նպաստը հատկացվում է ընդամենը 9000 տնային տնտեսության կամ ԸՆԾ ընտանիքների մոտ 10 տոկոսին: Այդ ընտանիքների եկամուտը՝ մեկ շնչի հաշվով, զգալիորեն գերազանցում է ԸՆԾ-ի շահառուների գրանցված եկամուտը (տե՛ս աղյուսակ 2): Ինչպես երևում է պատկեր 27-ից, 0 միավոր ունեցող բոլոր տնային տնտեսությունները շահառու չեն հանդիսանում, ինչը վկայում է բանաձևի ինքնաշխատ գոտիների օբյեկտիվության աստիճանի ստուգման կարևորության մասին:

Ներդիր 3. ԸՆԾ-ի իրավունակության բանաձևը

ԸՆԾ-ում ընդգրկվելու իրավունքը հաշվարկվում է բազմապատկվող միավորների բանաձևով, ընդ որում շեմը կազմում է 30 միավոր: Նպաստի մեծությունը կախված է տնային տնտեսության համար հաշվարկված միավորից, ընտանիքում անչափահասների թվից և աշխարհագրական տեղանքից: Բանաձևը հաշվի է առնում երեք հիմնական գործոն. (1) տնային տնտեսության բոլոր անդամների կենսամակարդակը (2) տնային տնտեսության փաստացի և պայմանականորեն հաշվարկված եկամուտները, (3) սոցիալական անապահովության այլ ցուցանիշները: Բանաձևի առաջին չափանիշը տնային տնտեսության միջին սոցիալական անապահովությունն է: Ընտանիքի յուրաքանչյուր անդամ ընդգրկվում է սոցիալական խմբերից որևէ մեկում, որին տրվում է հատուկ միավոր: Օրինակ՝ 5 տարեկանից փոքր երեխաներին տրվում է 35 միավոր, հաշմանդամների միավորը, հաշմանդամության աստիճանից կախված, տատանվում է 28-48 միջակայքում, աշխատանք ունեցող չափահասներին տրվում է նվազագույն 18 միավոր, իսկ ԶՊԾ-ում գրանցված գործազուրկներին՝ 22 միավոր: Տնային տնտեսության միջին սոցիալական անապահովության գնահատականն ավելի բարձր է ընտանիքում հաշմանդամի առկայության դեպքում: Երկրորդ չափանիշը տնային տնտեսության միջինացված եկամուտն է, որի գործակիցն է 1.2–0.000033* (մեկ շնչի հաշվով եկամուտ): Բացի այդ, անապահովության աստիճանը որոշելիս հաշվի են առնվում բնակարանային պայմանները և բնակության աշխարհագրական վայրը, որոնց միավորն է 1-1.2: Բանաձևն ունի նաև զտիչներ. տնային տնտեսության անդամներից մեկի ավտոմեքենայի առկայություն, անշարժ գույքի ձեռքբերում, առևտրային ընկերության գրանցում կամ էլեկտրաէներգիայի բարձր սպառում: Այդ զտիչներից որևէ մեկին չբավարարելու դեպքում ընտանիքն ինքնաբերաբար զրկվում է ընտանեկան նպաստի իրավունքից՝ անկախ բանաձևի այլ բաղադրիչներով գնահատականներից¹³:




¹³ Իրավունակության բանաձևի մանրամասն բացատրության համար տե՛ս Karapetyan (2014):

Աղյուսակ 2. Զրոյից բարձր միավորը և գրանցված եկամտով տնային տնտեսությունների միջին թիվը, 2012 թ.

	Թիվ	%	Գրանցված եկամուտ 1 շնչի հաշվով
Ընտանեկան նպաստ	96,867	80%	5,061
Հրատապ դրամական օգնություն	08,996	7%	14,739
Ոչ շահառու	15,566	13%	13,592
Նպաստի դադարեցում	399	0.3%	5,987
Ընդամենը	121,827	100%	5,689

Աղբյուրը՝ ԱՄՀՆ-ի վարչական տվյալներ, հունվար-դեկտեմբեր 2012 թ.:

Պատկեր 27. Գնահատման միավորի բաշխումը ԸՆԾ-ի տվյալների բազայում՝ ըստ շահառուների կարգավիճակի, 2012 թ.




Աղբյուր. ԸՆԾ-ի տվյալների բազա, հուն-դեկտ. 2012.

Աղքատության գծից ցածր գտնվող տնային տնտեսությունների 21 տոկոսը ներկայումս ընդգրկված է ԸՆԾ-ում, ընդ որում 2012 թ. շահառուների մոտ 60 տոկոսը մինչ նպաստ ստանալը աղքատ էր: Ըստ վարչական տվյալների՝ 2012 թ. ԸՆԾ-ում ընդգրկված է եղել միջինը 96,867 տնային տնտեսություն, այսինքն՝ շուրջ 400,000 շահառու: Ինչ վերաբերում է հասցեականությանը, 2012 թ. շահառուների 60 տոկոսը աղքատության գծից ցածր է եղել (պատկեր 30)¹⁴: ՏՏԿԱՀ-ի համաձայն՝ ԸՆԾ-ի շահառուները կազմում են ընդհանուր բնակչության 13.5 տոկոսը, հետտրանսֆերտային ստորին քվինտիլի 36 տոկոսը կամ ազգային աղքատության գծից ցածր ապրողների 24 տոկոսը (պատկեր 29): Թեև բնակչության ծածկույթի առումով ծրագրիը ԵԿԱ-ի տարածաշրջանում առավել ծավալունների շարքում է, հաշվի առնելով Հայաստանում աղքատության ներկա մակարդակը՝ այն պետք է զգալիորեն ավելացվի:


¹⁴ Այս տվյալները վկայում են, 2011 թ. Համեմատ, աղքատության մակարդակի նվազման մասին, երբ շահառուների 60 տոկոսն աղքատ էր: Նման զարգացումը կարող է մասամբ պայմանավորված լինել ծածկույթի ընդլայնմամբ (շահառուների թվի մոտ 10 տոկոս ավելացմամբ) կամ տնտեսության վերականգնման արդյունքում տնային տնտեսությունների մի մասի կենսամակարդակի բարելավմամբ, որն ամփոփապես չի արտացոլվում վերահավաստագրման գործընթացում:

Պատկեր 28. Սոցիալական անապահովության ծրագրերը ԵԿԱ երկրներում և աղքատության մակադակը՝ ըստ գնողունակության հավասարության




Աղբյուրը՝ ECA SPeED (2014): Պատկերում կիրառվել է օրական 2.5\$/ԳՊ աղքատության զիծը: Կենսամակարդակի քվինտիլները հաշվի չեն առնում բոլոր ՍՍ փոխանցումները:
 Նշում: Ծրագրի ծածկույթը յուրաքանչյուր խմբում նպաստ ստացող բնակչության կշիռն է: Վերջինիս հաշվարկը (խմբում անձանց թիվը, որոնք ապրում են այնպիսի տնային տնտեսությունում, որի անդամներից առնվազն մեկը նպաստ է ստանում)/(խմբում ընդգրկված մարդկանց թիվը): Երկրների հապավումները՝ ALB-Ալբանիա, ARM-Հայաստան, BIH-Բոսնիա և Հերցեգովինա, BGR-Բուլղարիա, EST-Էստոնիա, GEO-Վրաստան, HUN-Հունգարիա, KAZ-Ղազախստան, KSV-Կոտավո, KGZ-Դրոգաստան, LVA-Լատվիա, MKD-ՆՀՀ Մակեդոնիա, MDA-Մոլդովա, MNE-Չեռնոգորիա, POL-Լեհաստան, ROU-Ռումինիա, SRB-Սերբիա, UKR-Ուկրաինա:

Պատկեր 29. ԸՆԾ-ի ծածկույթ



Պատկեր 30. ԸՆԾ-ի հասցեականության ճշտություն




Աղբյուրը՝ SSԿԱՀ 2012 թ.:
 Նշում: Կենսամակարդակը որոշվել է մինչ ԸՆԾ-ի նպաստ ստանալը և ներառում է բոլոր այլ նպաստները: Աղքատ համարվում է աղքատության վերին գծից ցածր գտնվող անձը:

Աղքատների թերծածկույթն աշխարհագրական առումով անհավասար է, ընդ որում այն առավել ցածր է աղքատ մարզերում: Քանի որ կարիքավոր տնային տնտեսությունների սոցիալ-տնտեսական բնութագրերն էապես տարբեր են, ծրագրի թերծածկույթն անհամաչափ է: Աղքատության առավել բարձր մակարդակ ունեցող մարզերում (օրինակ՝ Շիրակում և Կոտայքում) ծածկույթը համեմատաբար փոքր ր է, մինչդեռ Վայոց ձորում, որտեղ


աղքատության մակարդակը 2012 թ. ամենացածրն էր, գրանցված է ամենամեծ աղքատության ծածկույթը:

Պատկեր 31. ԸՆԾ-ի ծածկույթը մարզերում




Աղբյուրը՝ հեղինակների հաշվարկները 2012 թ. ՏՏԿԱՀ-ի հիման վրա:

Պատկեր 32. ԸՆԾ-ի տվյալների բազայում չգրանցվելու պատճառները



Պատկեր 33. Պատկերացում ԸՆԾ-ի խոցելի շահառուների մասնաբաժնի մասին



Աղբյուրը՝ հեղինակների հաշվարկները 2011 թ. ՏՏԿԱՀ-ի հիման վրա:

Նշում: Պատկեր 33-ի տվյալները հավաքելու համար հարց է տրվել. «Ձեր կարծիքով՝ ԸՆԾ-ի շահառուների ո՞ր մասն է աղքատ»:


ԸՆԾ-ի փոքր ծածկույթն անբավարար իրազեկության հետևանք չէ, քանի որ բնակչությունը ծրագրի մասին լավատեղյակ է, շատերն են հասկանում իրավունակության համակարգի հիմնական սկզբունքները: ՏՏԿԱՀ-ի հարցման տվյալները վկայում են, որ բնակչությունն ընդհանուր առմամբ իրազեկված է ընտանեկան նպաստի ծրագրի մասին (տե՛ս պատկեր 32) և հարցվողներից որևէ մեկը չի հաղորդել, որ ԸՆԾ-ում ընդգրկված չլինելու պատճառն իր

իրագրված չլինելն էր: Այդ մասին է վկայում նաև ԸՆԾ 216 շահառուների ընտրանքի հետազոտությունը (Rebosio, 2014), ըստ որի՝ տնային տնտեսությունները տեղյակ են ծրագրի իրավունակության հիմնական նախապայմանների, այդ թվում գտիչների (անասուն, ավտոմեքենա, էլեկտրաէներգիա) և առավելություն տվող որոշ սոցիալական պայմանների առկայության (օրինակ՝ բազմազավակ ընտանիք) մասին: Ուստի ծրագրի փոքր ծածկույթը չի կարող բացատրվել հնարավոր շահառուների անբավարար իրագրելությամբ:

Հարցվողների ընդհանուր պատկերացումն այն է, որ ծրագրի իրավունակության նախապայմանները խիստ են, իսկ արդյունքը անորոշ, և միգուցե նույնիսկ չարժի դիմել:

Պատկեր 32-ից երևում է, որ ծրագրում չներառված հարցվողները չեն դիմել ԸՆԾ համակարգում ընդգրկվելու համար, որովհետև ցածր են համարել դրա հավանականությունը. նրանց միայն 17 տոկոսն է դիմել, բայց չի անցել: Պահանջվող փաստաթղթերի բեռը նույնպես դիտվում է որպես խոչընդոտ: Հարցազրույցների արդյունքները հաստատում են այդ եզրակացությունը և վկայում, որ բնակչության կողմից որպես արգելք է դիտվում անհրաժեշտ փաստաթղթերի մեծ ծավալը (պատկեր 32), որը պայմանավորված չէ դրանք ստանալու բարդությամբ, այլ ժամանակի մեծ ծախսատարությամբ, որին ավելանում է դրական արդյունքի ցածր ակնկալիքը բանաձևի բարդության պատճառով:

Պատկեր 34. ԸՆԾ-ի իրավունակություն ձեռքբերման մասին պատկերացումները և իրականացման գործընթացը



Աղբյուրը՝ հեղինակների հաշվարկները 2011 թ. ՏՏԿԱՀ-ի հիման վրա:
Նշում: Հարցազրույցների մասնակիցների տարիքը 15-64 է:

Միաժամանակ շահառու չհանդիսացող անձանց շրջանում կարծիքը ծրագրի հասցեականության մասին, փաստացի արդյունքի համեմատ, այնքան էլ դրական չէ: Թեև հարցվողների մեծ մասը հավանաբար հասկանում է, թե ինչպես է կառուցված ծրագիրը, և կարծում է, որ իրավունակության նախապայմանները բավականին խիստ են, այդուհանդերձ

վերջնական արդյունքի օբյեկտիվության մասին կարծիքները հաճախ չեն համընկնում: Հարցման արդյունքներից երևում է, որ 2011 թ. հարցվողների¹⁵ միայն 40 տոկոսն է եղել այն կարծիքի, որ ԸՆԾ-ի շահառուների մեծ մասն աղքատ է, ինչըը չի համապատասխանում նույն տարվա ընթացքում արձանագրված ծրագրի բարձր հասցեականությանը (տե՛ս պատկեր 33): Ծրագրի հասցեականության մասին պատկերացումները ծայրաստիճան բևեռացված են. հարցվողների 70 տոկոսը կարծում է, որ շահառուների կեսից ավելին աղքատ է, մինչդեռ ոչ շահառուների 70 տոկոսը կարծում է, որ շահառուների կեսից քիչն է աղքատ: Միաժամանակ ծրագրում չընդգրկված աղքատ անձանց (քվինտիլ 1) նվազ, քան մեկ քառորդն է կարծում, որ ծրագիրն օբյեկտիվ է (պատկեր 34):


Ծրագրի ներկա կառուցվածքի իրավունակության բանաձևով շատ աղքատ տնային տնտեսությունների մուտքը ծրագիր արգելակվում է ավտոմատ գտիչների միջոցով, թեև դրանք կարևոր են ոչ աղքատ բնակչությանը ծրագրում չընդգրկելու համար: Ստորև ներկայացվող ԸՆԾ-ի բանաձևի ներառման սխալի վերլուծությունը կատարվել է 2011 թ. ՏՏԿԱՀ-ի տվյալների մոդելավորման հիման վրա,¹⁶ որտեղ յուրաքանչյուր տնային տնտեսության իրավունակությունը որոշվում է ըստ ԸՆԾ-ի բոլոր նախապայմանների: Թեև շահառուների իրավունակության մոդելավորված միավորի սխալի աստիճանը շատ բարձր էր¹⁷, սակայն այն հնարավորություն էր տալիս պատկերացում կազմելու այն գործոնների մասին, որոնք թույլ չեն տալիս ծրագրում ներառել ավելի շատ աղքատ տնային տնտեսություններ: Մոդելավորման արդյունքները վկայում են, որ մուտքի արգելափակման տեսանկյունից երկուական ֆիլտրեր ընդհանուր առմամբ ավելի արդյունավետ են գործում ոչ աղքատ, քան աղքատ աղքատ անձանց նկատմամբ: Սակայն այդ ֆիլտրերը կարող են արգելափակել նաև աղքատների մուտքը, քանի որ, ըստ մոդելավորման արդյունքների, աղքատների 14 տոկոսը ծրագրից դուրս կմնա ֆորմալ եկամուտների, իսկ 13 տոկոսը ավտոմեքենա ունենալու պատճառով (պատկեր 35):

¹⁵ Բացառությամբ նրանց, ովքեր չգիտեն պատասխանը:


¹⁶ Տե՛ս Nikitin (2013):

¹⁷ Հաշվարկված իրավունակության միավորի հիմքում 2011 թ. ՏՏԿԱՀ-ում տնային տնտեսությունների մասին եղած տեղեկատվությունն է, որը սոցիալական աշխատողների կողմից կիրառվող չափանիշներից մեկն է: Ըստ ստացված արդյունքի՝ ծածկույթը կազմում է բնակչության 10.5 տոկոսը (փաստացի 12 տոկոսի դիմաց), և այն հնարավորություն է տալիս ճշտությամբ որոշելու իրական շահառուների 50 տոկոսին: Բացի այդ, մոդելավորված գնահատականի ներառման սխալը նույնպես ավելի բարձր է, քանի որ ԸՆԾ-ի ոչ աղքատների իրական ծածկույթը կազմում է ընդամենը 4 տոկոս, մինչդեռ մոդելավորման արդյունքում այն կազմեց 8 տոկոս:

Պատկեր 35. Ծրագրում աղքատ և ոչ աղքատ բնակչության չընդգրկվելու մոդելավորման արդյունքները



Պատկեր 36. Եկամտի աղբյուրները՝ ըստ տնային տնտեսությունների տեսակի




Աղբյուրը՝ հեղինակների հաշվարկները 2011 թ. ՏՏԿԱՀ-ի հիման վրա:

Բանաձևում որպես գտիչ մեծ դեր է հատկացվում ֆորմալ եկամտի աղբյուրներին, մինչդեռ Հայաստանում աղքատությունը գնահատվում է սպառման տեսանկյունից: Դա բարդացնում է աղքատ բնակչության բացահայտումը: Հայաստանին բնորոշ է եկամտի անհավասարության շատ ցածր մակարդակ, հատկապես՝ բնակչության ստորին կեսում: Ինչպես երևում է պատկեր 37-ից, ֆորմալ եկամուտների (կենսաթոշակ, աշխատավարձ և հաշվարկված գյուղատնտեսական եկամուտ) տարբերությունները, որոնք ձգտում է հաշվի առնել ընտանեկան նպաստի բանաձևը, սպառողական բաշխման առաջին, երկրորդ և երրորդ քվինտիլներում նվազագույն են: Ուստի ֆորմալ եկամտի ցուցանիշի կիրառումը աղքատության բացահայտման համար կարող է համեմատաբար լավ հասցեականություն ապահովել միայն առավել աղքատ տնային տնտեսությունների դեպքում (ստորին 20 տոկոսի):


Բացի այդ, ֆորմալ եկամուտներին տրվող բարձր կշիռը շեղում է հավասարակշռությունը հոգուտ ոչ ֆորմալ եկամտի աղբյուրներ ունեցող կամ արտասահմանից դրամական փոխանցումներ ստացող տնային տնտեսությունների: ԸՆԾ-ի վարչական տվյալների համաձայն՝ տնային տնտեսությունների մեծ մասը եկամտի հիմնական աղբյուր է համարում կենսաթոշակը և գյուղատնտեսական կենդանիներից ու սեփական հողակտորից ակնկալվող եկամուտը (պատկեր 36): Իրականում, սակայն, Հայաստանի տնային տնտեսությունների մի ստվար զնազվածի եկամտի հիմնական աղբյուրը, գյուղատնտեսական ոլորտից բացի, ոչ ֆորմալ աշխատանքն է, որը համակարգում չի արտացոլվում: Փաստորեն, համաձայն ՏՏԿԱՀ-

ի տվյալների՝ ԸՆԾ-ի շահառու տնային տնտեսություններում աշխատանքային եկամտի կշիռն ընդհանուր սպառման ներքո կազմում է 25 տոկոս, որը զգալիորեն զիջում է աղքատ ոչ շահառու տնային տնտեսությունների ցուցանիշին (75 տոկոս), սակայն ավելի մեծ է, քան տվյալների բազայում գրանցված աշխատանքային եկամտի կշիռը: Այդ իսկ պատճառով ծրագրի ծածկույթն անհավասար է հոգուտ ոչ ֆորմալ աշխատողների (գլուխ 1, պատկերներ 6 և 14), ինչն իր հերթին հանգեցնում է աղքատ տնային տնտեսությունների ընդգրկման ավելի փոքր հավանականության ֆորմալ աշխատանքային եկամուտ ունենալու պարագայում: Նույնպիսի, թեև ոչ այդքան ցայտուն, պատկերն առկա է աղքատ մասնավոր դրամական փոխանցումներ ստացող տնային տնտեսությունների պարագայում, որոնց ծածկույթը 6 տոկոսով գերազանցում է մասնավոր դրամական փոխանցումներ չստացող աղքատ տնային տնտեսությունների նույն ցուցանիշը (պատկեր 38): Թեև այդ գործոնների ազդեցությունն այնքան էլ մեծ չէ, ԸՆԾ-ի շահառուների վերլուծությունը (Rebosio, 2014) նաև վկայում է, որ ելնելով բանաձևի ոչ օբյեկտիվ բնույթից եկամտի ֆորմալ աղբյուրների, գյուղատնտեսությունից ստացվող եկամտի և գյուղատնտեսական կենդանիներ ունենալու գործոնների նկատմամբ՝ տնային տնտեսությունները ռազմավարական որոշումներ են կայացնում: Մի շարք հարցվողներ հայտնել են, որ ծրագրում ընդգրկվելու համար վաճառել են իրենց կենդանիներին (դա խարխլում է ընտանիքի երկարաժամկետ եկամտային ներուժը) կամ զերծ են մնում ցածր վարձատրվող ֆորմալ աշխատանքից (այդ մասին ավելի մանրամասն կխոսվի հաջորդ բաժնում): 3-րդ գլխում ներկայացվող տարբեր մոտեցումները քաղաքականության վերաբերյալ կարող են հնարավորություն տալ պահպանելու ներկա կառավարման տեղեկատվական համակարգի (ԿՏՀ) միջոցով հավաքվող տեղեկատվության հասցեականության բարձր աստիճանը և միաժամանակ կրճատելու անճշտությունները:

Պատկեր 37. Միջին տնային տնտեսություն, որի եկամուտը հեշտ է ստուգվում՝ ըստ չափահասի համարժեք սպառման քվինտիլի



Պատկեր 38. Ծածկույթի մակարդակը՝ ըստ չբացահայտված եկամտի աղբյուրների առկայության աղքատ և ոչ աղքատ տնային տնտեսությունների համար



Ընտանեկան նպաստների ծրագրի արդյունքներն ակտիվացման տեսանկյունից


Համալիր ակտիվացման ռազմավարության առանցքային տարրերից մեկը նպաստների կառուցվածքի նպաստելն է արդյունավետ զբաղվածությանը¹⁸: Հաշվի առնելով, որ այսուհետ զբաղվածության նպաստ չի տրամադրվելու, ԸՆԾ-ն մնում է աշխատունակ բնակչությանը հասցեագրված միակ խոշոր նպաստը: Այս բաժնում գնահատվում է շահառուների՝ ինքնաբավության ապահովմանը միտված հնարավոր և փաստացի շարժունությունը վարչական տվյալների բազայի (ՆՈՒԲ) 2008-2013 թթ. անանուն տվյալների հիման վրա: Ներկայացվող վիճակագրական տվյալները 2013 թ. մայիսի դրությամբ են և ներառում են 102,540 տնային տնտեսությունների 430,459 անդամների:

Որքա՞ն մեծ է ընտանեկան նպաստի ծրագրի ակտիվացման ներուժը


ԸՆԾ-ի շահառու հանդիսացող բնակչության շուրջ կեսը գործնականում կարող է համարվել աշխատունակ: Վարչական տվյալների բազայի համաձայն՝ նրանց 49 տոկոսը կամ մոտ 200,000 մարդ կարող է աշխատունակ համարվել, այսինքն՝ աշխատանքային տարիքի է (15–64) և ԸՆ-ի ռեզիստորում գրանցված չէ որպես ցերեկային ուսանող կամ հաշմանդամ: Այդ ցուցանիշը շատ մոտ է 2011 թ. ՏՏԿԱՀ-ի համապատասխան ցուցանիշին (46 տոկոս):

¹⁸ Աշխատուժի առաջարկի խթաններն արդեն իսկ մանրամասն ուսումնասիրվել են (Levin, 2011) 2009 թ. տվյալների հիման վրա, և զգալի տարբերություններ չի նկատվել մոդելավորման շեմի հատման գծերի միջև: Միաժամանակ որոշ տարբերություն է նկատվել ֆորմալության ազդեցության գծով, որը համընկնում է վերը պատկերված պրոֆիլների հետ: Մեթոդաբանության առումով կարևոր է պատկերացնել, որ նպաստի կառուցվածքի հիմքում ընկած լծակները կարող են տարբերվել՝ ըստ ակնկալվող արդյունքի (ֆորմալ զբաղվածություն կամ աշխատուժի ընդհանուր մասնակցություն):

Պատկեր 39. Շահառուի կարգավիճակը՝ ըստ աշխատունակության



Պատկեր 40. ԸՆԾ-ի շահառու տնային տնտեսությունների տիպաբանությունը



Աղբյուրը՝ հեղինակների հաշվարկները ԸՆԾ-ի շահառուների մասին վարչական տվյալների բազայի հիման վրա 2013 թ. մայիսի դրությամբ:


Նշում: Բացարձակ ցուցանիշները վերցված են փակագծերի մեջ:

ԸՆԾ-ի շահառու տնային տնտեսություններն առնվազն մեկ անդամ ունեն, որը կարող է աշխատունակ համարվել, սակայն նրանցից շատերը զբաղված են տնային խնամքի կարևոր պարտականություններով կամ միայնակ ծնողներ են: Նպաստի նախապայմանների շարքում ակտիվացման միջոցառումներ նախատեսելիս ցանկալի է նախապես որոշել, թե ինչ հավանականությամբ տնային տնտեսությունների անդամները կարող են մասնակցել ակտիվացման ծրագրերին: Այդ նպատակով աշխատունակ անդամ ունեցող տնային տնտեսությունները տնային տնտեսության աշխատունակ անձանց խնամքը պահանջող անդամների առկայության տեսանկյունից բաժանվում են երեք խմբի: Որպես խնամարկյալ ենք դիտարկում ծանր հաշմանդամություն ունեցող անձանց (I-ին կամ II-րդ կարգ), 0–5 տարեկան երեխաներին, ինչպես նաև 75 և ավելի բարձր տարիքի անձանց: Նման բաշխվածության դեպքում, ինչպես ներկայացված է պատկեր 40-ում, ԸՆԾ-ի շահառու տնային տնտեսությունների փոքր մասում (17 տոկոս) չկան աշխատանք գտնելու մեծ հնարավորություն ունեցող անձինք, քանի որ այդ տնային տնտեսությունների մեծ մասը նաև խնամքի կարիք ունեցող տարեց անձ կամ հաշմանդամ անդամ ունի: Տնային տնտեսությունների ևս 11 տոկոսը կազմում են առնվազն մեկ խնամարկյալ՝ փոքր երեխա կամ հաշմանդամ անդամ ունեցող միայնակ ծնողները: Մյուս կողմից՝ տնային տնտեսությունների 36 տոկոսն առնվազն մեկ անդամ ունի, որը աշխատունակ է և խնամարկյալ չունի, ևս 36 տոկոսը խնամարկյալ ունեցող երկու աշխատունակ անձինք են (խնամարկյալները հիմնականում փոքր երեխաներ են):

Տեսականորեն ԸՆԾ-ի շահառու հանդիսացող տնային տնտեսությունների գրեթե 72 տոկոսում կարող է լինել ակտիվացման միջոցառումների համար պիտանի առնվազն մեկ մեծահասակ անդամ, եթե հաշվի առնենք նաև տան խնամքի գծով պարտականությունները:

Պատկեր 40-ից հետևում է, որ աշխատաշուկայի ծրագրերում կարող են ընդգրկվել առնվազն երկու չափահաս անդամ ունեցող տնային տնտեսություններ, ինչպես նաև նրանք, որոնք խնամարկյալներ չունեն: Մակայն հարկ է նշել, որ տնային տնտեսությունների նման բաշխման վրա մեծ ազդեցություն կարող է թողնել տան խնամքի սահմանումը: Օրինակ, եթե ենթադրենք, որ մինչև 18 տարեկան երեխաները խնամարկյալներ են, որոնք լուրջ խոչընդոտ են իրենց ծնողների աշխատելու համար, ապա տնային խնամքի պարտականություններ չունեցող տնային տնտեսությունների թիվը 75 տոկոսի փոխարեն կկազմի 25 տոկոս: Բացի այդ, սույն ուսումնասիրության նպատակների համար ենթադրվում է, որ առնվազն մեկ խնամարկյալ ունեցող տնային տնտեսությունը կարիք ունի միայն մեկ աշխատունակ չափահաս անձի կողմից տան խնամքի իրականացման: Դա նշանակում է, որ անկախ խնամարկյալի խնդիրներից (տարիք կամ հաշմանդամություն)՝ տնային տնտեսության խնամող անդամը ֆորմալ աշխատանքի հնարավորություն չի ունենա:

Պատկեր 41. Խնամարկյալներ ունեցող տնային տնտեսությունների կշիռը՝ ըստ տնային տնտեսությունների տեսակների




Աղբյուրը՝ հեղինակների հաշվարկները ԸՆԾ-ի շահառուների մասին վարչական տվյալների բազայի հիման վրա:

Մակայն գործող տեղեկատվական համակարգը չի բացահայտում աշխատունակ անձանց աշխատանքի արտադրողականությունը: Հաշվի առնելով, որ ԸՆԾ-ի տեղեկատվական համակարգը սոցիալական ապահովության համակարգում առկա գրառումների միջոցով ֆորմալ եկամուտն արձանագրում է զուտ եկամտի ստուգման նպատակով, դրա ճշգրտությունը զբաղվածության կարգավիճակի բացահայտման տեսանկյունից սահմանափակ է: Վարչական տվյալների բազայում աշխատունակ անձանց միայն 7 տոկոսն է գրանցված որպես աշխատանք ունեցող: Դա հակասում է ՏՏԿԱՀ-ի հարցման արդյունքներին, որոնք ցույց են տալիս, որ ԸՆԾ-ում ներառված աշխատունակ բնակչության շուրջ կեսն աշխատանք ունի, եթե նույնիսկ այն լրիվ հաստիքով չէ կամ սեզոնային է:


Սոցիալական աջակցության շահառուների շարժունակությունը և ծրագրից դուրս մնալու պատճառները

Վարչական տվյալներից երևում է, որ մինչև 16-րդ ամիսը տնային տնտեսություններն առնվազն 1 անգամ ՇՄ-ից դուրս են մնում: ՏԿԱՀ-ի համաձայն՝ 2011 թ. միջին ՇՄ-ի հասցեատերը ծրագրում ներառված է եղել 6 տարի: Ծրագրում շահառուների պահպանման ավելի խորքային վերլուծության համար կատարել ենք վարչական տվյալների հիման վրա վերլուծություն՝ հետևելով 20 ամիսների ընթացքում 2012 թ. ծրագրում գրանցված 2131 տնային տնտեսությունների¹⁹: Պատկերներ 42 և 43-ում ներկայացված է 2012 թ. հունվարին ծրագրում ընդգրկվելուց հետո մինչև 16-րդ ամիսը (ապրիլ 2013 թ.) տարբեր ժամանակահատվածներում ծրագրից հեռանալու հավանականությունը, որի համաձայն՝ տնային տնտեսությունների մեկ քառորդը ծրագրից դուրս է մնացել առնվազն 4 ամսով: Ծրագրից դուրս մնալու ժամկետը 1 ամիս համարելու դեպքում այդ ցուցանիշը փոքր-ինչ ավելի բարձր է:

Պատկեր 42. ՇՄ-ից նվազագույնը 4 ամիս դուրս մնալու հավանականությունը 1-ին անգամ ընդգրկվածների համար



Պատկեր 43. Ծրագրից ելքի հավանականությունը՝ ըստ մուտքի պահին գնահատված միավորի



Աղբյուրը՝ հեղինակների հաշվարկները ՇՄ-ի շահառուների մասին վարչական տվյալների բազայի հիման վրա:

ՇՄ-ից ելքը հիմնականում պայմանավորված է մուտքի պահին անապահովության գնահատականով, քանի որ տնային տնտեսությունների զգալի մասը դուրս է մնում վարչական պատճառներով, ոչ թե կենսամակարադակի էական բարելավման արդյունքում:


¹⁹ 20 ամիսների ընթացքում տնային տնտեսություններին հետևելու տարբերակը պայմանավորված էր տվյալների առկայությամբ: Քանի որ վարչական տվյալներից չի երևում ծրագրում մասնակցության փաստացի ժամկետը, մենք որպես նոր ընդգրկված դիտարկում ենք այն տնային տնտեսություններին, որոնք գրանցվել են 2012 թ. հունվարին, սակայն շահառու չեն հանդիսացել հասանելի տվյալների նախորդ ժամանակաշրջաններում՝ 2011 թ. հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին, ինչպես նաև 2008, 2009 և 2010 թթ. հոկտեմբեր ամիսներին:

Պատկեր 43-ում ներկայացված է նույն վերլուծությունը, ինչ պատկեր 42-ում, որում տնային տնտեսությունները բաժանված են ըստ գնահատման սանդղակում ընդգրման պահին նրանց զբաղեցրած դիրքի: Ստորին քվինտիլը բաղկացած է իրավունակության շեմին շատ մոտ գտնվող տնային տնտեսություններից (միջին գնահատման միավորը՝ 30): Այդ խմբում ներառված տնային տնտեսությունների 40 տոկոսը, ամենայն հավանականությամբ, ծրագրից դուրս կմնա 20-րդ ամսին, իսկ 6-րդ ամսին նրանց մեկ երրորդը լքել է ծրագիրը²⁰: Չարմանալիորեն, ընդամենը մեկ միավորով այդ շեմը գերազանցող տնային տնտեսությունների ծրագրից դուրս մնալու պատկերը միանգամայն այլ է. նախավերջին քվինտիլի տնային տնտեսությունները (31 միավոր) մինչև 20-րդ ամիսը ծրագրից կհեռանան 15 տոկոս հավանականությամբ: Ի վերջո, ծրագրից դուրս մնալու հավանականությունը վերին երկու քվինտիլներում կազմել է ընդամենը 10 տոկոս: Պատկեր 44-ից հետևում է, որ մուտքի պահին բարձր եկամուտը նույնպես փոխկապված է ելքի բարձր հավանականության հետ, որը հանգեցնում է այն եզրակացության, որ ավելի ցածր անապահովության միավոր ունեցող շահառուները կազմում են ծրագրից հեռացողների հիմնական մասը:


Խնամարկյալ չունեցող տնային տնտեսությունների՝ մուտքից 20 ամիս հետո ծրագրից դուրս մնալու հավանականությունն ավելի մեծ է: Պատկեր 45-ը ներկայացնում է ծրագրից ելքի հավանականության տոկոսները՝ ըստ ներկայացված տնային տնտեսությունների տեսակների: Գծանկարից երևում է, որ աշխատունակ չափահաս անդամներ ունեցող և առանց խնամարկյալների տնային տնտեսությունների գրեթե մեկ երրորդը 20 ամիս հետո կզրկվի շահառուի կարգավիճակից: Իսկ աշխատունակ անդամ չունեցող, ինչպես նաև մեկ եկամուտ վաստակող և մեկ խնամարկյալ ունեցող տնային տնտեսությունների հեռանալու հավանականությունը ծրագրից ավելի փոքր է (22 տոկոս):

²⁰ Թեև տնային տնտեսությունները պարտավոր են 6 ամիսը մեկ վերահաշվառում անցնել, համակարգը նաև կարող է պարբերաբար արդիականացվել՝ համադրումներ կատարելով այլ տվյալների բազաների կամ ժողովրդագրական տվյալների փոփոխությունների հետ (օրինակ՝ անդամների տարիքի), որը ավելացնում է ծրագրից հեռացվելու հավանականությունը ցանկացած ամսին:

Պատկեր 44. Ծրագրից ելքի հավանականությունը՝ ըստ մուտքի պահին եկամտի քվարտիլի



Պատկեր 45. Ծրագրից ելքի հավանականությունը՝ ըստ տնային տնտեսության տեսակի



Աղբյուրը՝ հեղինակների հաշվարկները ԸՆԾ-ի շահառուների մասին վարչական տվյալների բազայի հիման վրա:

Ընդհանուր առմամբ ֆորմալ աշխատանքի անցնելու և հեռանալու շարժունությունը չափազանց սահմանափակ է: Տնային տնտեսությունների աշխատունակ անդամների գրանցված զբաղվածության միջին մակարդակը տարվա ամիսների ընթացքում չի տատանվում, ինչը վկայում է, որ աշխատանքի սեզոնայնությունը չի արտացոլվում: Աղյուսակ 3-ում ներկայացված է միջին հավանականությունը, որ 2011 թ. հոկտեմբերին ծրագրում ներառված աշխատունակ անձը կփոխի իր զբաղվածության կարգավիճակը հետագա կիսամյակներում: Աղյուսակից երևում է, որ ֆորմալ աշխատանքի անցնելու և հեռանալու շարժունությունը 1 տոկոսից ցածր է, և որպես աշխատանք ունեցող գրանցված անձանցից աշխատանքից հեռացել է 3 տոկոսը:

Աղյուսակ 3. Ֆորմալ զբաղվածության կիսամյակային շարժի մատրիցը 5 կիսամյակների համար՝ ըստ աշխատունակ շահառուների

հետագա նախորդ	Ոչ ֆորմալ աշխատող	Ֆորմալ աշխատող	Ընդամենը
Ոչ ֆորմալ աշխատող	99.65	0.35	100
Ֆորմալ աշխատող	3.41	96.59	100
Ընդամենը	93.92	6.08	100

Նշում: Անձի զբաղվածության կարգավիճակի փոփոխության միջին հավանականությունն առաջին 6 ամիսներին և հետագայում 2011 թ. հոկտեմբերից 2013 թ. մայիս ընթացքում: Աղյուսակում ներկայացված են միայն 2011 թ. հոկտեմբերին շահառու հանդիսացող աշխատունակ անձինք:


Աշխատանքային ցածր շարժունությունը մասամբ կարելի է բացատրել նպաստի բանաձևի կառուցվածքով, որը առանց նպաստից զրկվելու աշխատանքային եկամուտ ստանալու քիչ հնարավորություն է ընձեռում: Ներդիր 4-ը մանրամասն ներկայացնում է, թե որքան եկամուտ կարող է վաստակել անձը մինչ ծրագրից հեռացվելը: Առավելագույն աշխատանքային ներուժ

ունեցող շահառու տնային տնտեսությունները նրանք են, որոնք չեն կարող մուտք գործել ֆորմալ աշխատաշուկա՝ չգրկվելով նպաստի իրավունակությունից: Օրինակ՝ առնվազն մեկ աշխատունակ անդամ ունեցող և առանց խնամարկյալների տնային տնտեսությունները, բոլոր մյուս խմբերի համեմատ, շատ ավելի մեծ հավանականությամբ կարող են ունենալ շեմին մոտ 30 միավոր: Միաժամանակ աշխատունակ անդամ չունեցող կամ մեկ եկամուտ վաստակող և բազմաթիվ խնամարկյալներ ունեցող տնային տնտեսությունները հիմնականում բարձր միավոր են ստանում, ուստի նաև առանց ծրագրից հեռացվելու ֆորմալ եկամուտ վաստակելու հնարավորություն են ունենում:

Ներդիր 4. Նպաստների ներկա բանաձևի կառուցվածքը չի նպաստում աշխատանքի վերադառնալու առումով աշխատունակ շահառուների շարժունությանը՝ չվտանգելով նրանց մասնակցությունը ծրագրում:

Ի տարբերություն ԵԿԱ տարաշաճրջանի այլ երաշխավորված նվազագույն եկամտի ծրագրերին՝ ԸՆԾ-ն համարվում է սոցիալական անապահովության ծրագիր, որի հասցեատերերը ցածր եկամուտ ունեն և սոցիալապես անմխիթար վիճակում են, ինչը որոշվում է մուլտիպլիկատիվ բանաձևի միջոցով (մանրամասների համար տե՛ս ներդիր 3): Տնային տնտեսությունը իրավունակ է համարվում այնքան ժամանակ, քանի դեռ նրա միավորը հավասար է կամ գերազանցում է 30-ը, ընդ որում այդքան միավոր հավաքելու համար տնային տնտեսությունը պետք է լինի սոցիալական ապահովության սանդղակի ստորին մասերում, և նրա եկամուտը չպետք է գերազանցի սահմանված շեմը:

Պատկեր 46. Ծրագրի իրավունակության եկամտային շեմը՝ ըստ տնային տնտեսության անապահովության միավորի



Աղբյուրը՝ հեղինակների հաշվարկները ԸՆԾ-ի շահառուների մասին վարչական տվյալների բազայի հիման վրա:


Բանաձևի մյուս գործակիցներն անփոփոխ պահպանելու դեպքում սոցիալական անապահովության միավորը ցույց է տալիս եկամտի առավելագույն չափը, որը տնային տնտեսությունը կարող է

վաստակել՝ առանց վտանգելու իր ներկայությունը ծրագրում: 2014 թ. դեկտեմբեր ամսվա դրությամբ նվազագույն բացառությունները հաշվի չառած²¹ տնային տնտեսությունը իրավունակություն ստանալու համար պետք է վաստակի առնվազն 25 միավոր: Ուստի բացարձակապես գործազուրկ աշխատունակ չափահասներից բաղկացած ընտանիքը, ստանալով սոցիալական անապահովության 22 միավոր, չի կարողանա ընդգրկվել ծրագրում նույնիսկ զրոյական եկամտի պարագայում: Մյուս կողմից՝ թույլատրելի եկամտի մակարդակը բարձրանում է սոցիալական անապահովության մակարդակին գուցահեռ: Օրինակ՝ գործազուրկ ծնողից, տարեց թոշակառուից և մանկատանը գտնվող երեխայից բաղկացած ընտանիքի միավորը կկազմի 37, որի դեպքում մեկ շնչի հաշվով թույլատրելի եկամուտը կազմում է 28,000 ՀՀ դրամ:

Բացի այդ, նպաստի կառուցվածքի և հարկերի համատեղ ազդեցությունը կարող է խոչընդոտել որոշ տնային տնտեսությունների մասնակցությունը հետագա ակտիվացման միջոցառումներին կամ զբաղվածության գործակալության կողմից առաջարկվող ցածր վարձատրվող ֆորմալ աշխատանքին: ՏՀԶԿ-ի կողմից Հայաստանի համար կազմված հարկերի և նպաստների մոդելը գնահատում է տնային տնտեսության անդամի ֆորմալ աշխատանքի անցնելու ծախսը՝ գործազրկության կամ ոչ ֆորմալ աշխատանքի համեմատ, ըստ վարձատրության տարբեր մակարդակների (ներդիր 5): Այս մոդելավորման գործիքը կարող է լույս սփռել սոցիալական աջակցության շահառուների ոչ բացահայտ ծախսերի վրա՝ ցածր վարձատրությամբ (նվազագույն աշխատավարձի սահմաններում) աշխատանքի անցնելու դեպքում: Մոդելից երևում է, որ երկու ծնողից և երեխաներից բաղկացած տնային տնտեսության շահառու անդամներից մեկի ֆորմալ աշխատանքի անցնելու որոշման դեպքում ընտանիքը նպաստի կորստի և վճարվելիք հարկերի հետևանքով կկորցնի լրացուցիչ եկամտի մոտ 80 տոկոսը: Իսկ միակողմանի ծնողազուրկ երեխա ունեցող տնային տնտեսությունների համար (որոնք կազմում են ԸՆԾ-ում ընդգկված տնային տնտեսությունների 33 տոկոսը) ԸՆԾ-ի բանաձևով նախատեսվում է եկամտի ավելի մեծ թույլատրելի չափ: Նման դեպքերում ցածր վարձատրությամբ աշխատանքի անցնելիս աշխատունակ անձի կողմից վճարվելիք հարկը ավելի փոքր է, բացի դրանից, անձը պահպանում է ԸՆԾ-ի իրավունակությունը: Այդուհանդերձ, երեխաների խնամքի լրացուցիչ ծախսը կարող է չեզոքացնել ֆորմալ աշխատանքի անցնելու լծակները:

²¹ Տնային տնտեսությունը կարող է տեսականորեն իրավունակ համարվել նույնիսկ 25 միավորից ցածր ստանալու դեպքում, եթե նրա եկամտի միավորը զրո է, իսկ աշխարհագրական վայրի միավորը հավասար է 1-ի, որը տրվում է միայն անբարենպաստ բնական պայմաններում գտնվող տարածքների դեպքում:


Պատկեր 47. Տնային տնտեսության անադամների սոցիալական կարգավիճակի փոփոխությունը և դրա ազդեցությունը ծրագրից ելքի վրա



Աղբյուրը՝ ԸՆ-ի շահառուների խումբը 2011 թ. մայիսից մինչև 2013 թ. մայիս ընկած ժամանակահատվածներում: Նշում: Արդյունքները ցույց են տալիս տնային տնտեսության անդամների կազմի փոփոխության ազդեցությունը ծրագրից դուրս չմնալու հավանականության վրա յուրաքանչյուր կիսամյակում՝ հաշվի առնելով տնային տնտեսությունների համար սահմանված ազդեցությունները և k-եկամտի գործակիցը:

Պատկեր 48. Տնային տնտեսությունների եկամտի բաշխվածությունը մեկ շնչի հաշվով՝ ըստ շահառության կարգավիճակի

Աղբյուրը՝ հեղինակների հաշվարկները ԸՆ



ԸՆՄ-ի շահառուների մասին վարչական տվյալների բազայի հիման վրա:


Տվյալները վկայում են, որ ֆորմալ աշխատանքի անցնելն ուղղակիորեն ենթադրում է ծրագրից դուրս մնալու ավելի մեծ հավանականություն, թեև ելքից հետո միջին եկամուտը սկզբնականից շատ չի տարբերվում: Վերլուծության արդյունքները մոտ են հարկ-նպաստ մոդելի ցուցանիշներին: Պատկեր 47-ը ցուցադրում է սոցիալական կարգավիճակի փոփոխության ազդեցությունը տնային տնտեսության անդամի վրա՝ հաշվի առնելով տնային տնտեսության առանձնահատուկ հատկանիշները (սահմանված ազդեցությունները) և եկամուտը (K-եկամտի գործակից): Ֆորմալ աշխատանքը մեծացնում է ծրագրից դուրս մնալու հավանականությունը՝ նույնիսկ տնային տնտեսության եկամտի ընդհանուր փոփոխության պարագայում: Այլ կերպ ասած՝ բանաձևի կիրառման արդյունքում տնային տնտեսությունը գրկվում է իրավունակությունից վաստակած եկամտի թույլատրելի մակարդակի դեպքում, ընդ որում սոցիալական գնահատման միավորն էլ ավելի է ազդում իրավունակության վրա ֆորմալ աշխատանքի անցնելու դեպքում: Դա մեծ խնդիր կարող է առաջացնել այն դեպքում, եթե ծրագրից դուրս գալուց հետո տնային տնտեսության եկամուտը շարունակի ցածր մնալ: Պատկեր 48-ը վկայում է հենց այդ մասին, թեև տվյալների բազայում բացակայում են 6 ամիսը մեկ վերահաշվառում չանցած նախկին շահառուների եկամուտների մասին

տեղեկությունները²²: Ինչ վերաբերում է այն անձանց, որոնց տվյալներն առկա են, նրանց տնային տնտեսությունների միջին եկամուտը՝ մեկ շնչի հաշվով, ավելի բարձր է, քան ծրագրի ընթացքում, սակայն տարբերությունը համեմատաբար փոքր է և մեկ շնչի հաշվով կազմում է մոտ 5000 ՀՀ դրամ, ինչը նշանակում է, որ այդ տնային տնտեսությունների տնտեսական պայմաններն էապես չեն փոխվում:

Ծրագրից հեռացվողների շուրջ մեկ երրորդը ստանում է միանվագ դրամական օգնություն: Պատկեր 49-ը ներկայացնում է 2012 թ. հունվարին ծրագիր մուտք գործած տնային տնտեսությունների շահառության կարգավիճակը 20 ամիսների ընթացքում: 20-րդ ամսին տնային տնտեսությունների շուրջ 71 տոկոսը դեռ ստանում էր ընտանեկան նպաստը: Տնային տնտեսությունների մոտ 10 տոկոսն ընդգրկվել էր հրատապ դրամական օգնության համակարգում: Մնացած 19 տոկոսն այլևս շահառու չէր, և նրանց մեծ մասը հաշվառումից հանվել էր: Դա վկայում է, որ սոցիալական աշխատողները կարող են մեղմացնել սոցիալական աջակցություն ստանալու խիստ պայմանները՝ օժանդակություն տրամադրելով տնային տնտեսություններին, որոնք վարչական ընթացակարգով հեռացվել են ծրագրից, բայց շարունակում են անապահով մնալ, քանի որ նրանց ընտանեկան բյուջեն թույլ չի տալիս հոգալ բոլոր այդ կարիքները:

²² Տնային տնտեսության ֆորմալ եկամտի տարբերությունը վերը նշված պատճառներով ոչ միշտ է արտացոլում նրա եկամուտը կամ սպառումը: Բացի այդ, եկամտի տարբերությունը կարող է էլ ավելի ցածր երևալ, քանի որ ծրագրից հեռացված տնային տնտեսություններն այլևս տվյալների բազայում արձանագրված չեն և նրանց եկամուտը չի երևում:

Պատկեր 49. 2012 թ. հունվարին ԸՆԾ-ի շահառու դարձած անձանց կարգավիճակը 20 ամիսների ընթացքում



Աղբյուրը՝ հեղինակների հաշվարկները ԸՆԾ-ի շահառուների մասին վարչական տվյալների բազայի հիման վրա:

Աղյուսակ 4. Հրատապ դրամական օգնության դադարեցումը 12 ամիս հետո

Կարգավիճակը 2012 թ. մայիսին	Կարգավիճակը 2013 թ. մայիսին				
	Ընտանեկան նպաստ	Միանվագ դրամական օգնություն	Ոչ շահառու	Հեռացվել է ԸՆԾ-ից	Ընդամենը
Հրատապ դրամական օգնություն	9.77	49.56	40.49	0.18	100
Հեռացվել է ԸՆԾ-ից	12.24	2.93	84.6	0.23	100

Միանվագ դրամական օգնություն ստացողների կեսի տվյալները շարունակում են երկար ժամանակ պահպանվել համակարգում (մեկ տարի կամ ավելի): Աղյուսակ 4-ը ներկայացնում է 2013 թ. մայիսի դրությամբ 111,000 շահառու տնային տնտեսությունների կարգավիճակը, որոնք 2012 թ. մայիսին ընդգրկվել էին միանվագ դրամական օգնության ծրագրում: Ինչպես

երևում է աղյուսակից, 12 ամիս անց նրանցից կեսը դեռ շարունակում էր հանդիսանալ այդ ծրագրի շահառու: Ավելին, այս նպաստը հավանաբար կիրառվում է որպես նման անձանց ժամանակավոր պաշտպանության միջոց, մինչև որ նրանք կրկին ընդգրկվեն ԸՆԾ-ում (դիտարկվող ժամանակահատվածում ԸՆԾ վերադարձել է նրանց 10 տոկոսը):

Ներդիր 5. Ցածր վարձատրվող անձանց ֆորմալ աշխատանքի անցնելու արժեքի մոդելավորումը ՏՀԶԿ-ի հարկերի-նպաստների մոդելի միջոցով

Հարկերի և նպաստների կանոնների համադրությունը լուրջ արգելք է ֆորմալ աշխատաշուկա որոշ տնային տնտեսությունների մուտք գործելու համար: ՏՀԶԿ-ի հարկեր-նպաստներ մոդելը ցուցադրում է այն ծախսերն ու նպաստները, որոնց առնչվում է անձը ֆորմալ աշխատանքի անցնելու դեպքում Հայաստանի 2012 թ. հարկային և սոցիալական ապահովության օրենսդրության պայմաններում (ամբողջական ենթադրություններն ու բանաձևը ներկայացված են հավելված 3-ում): Հաշվարկված հիմնական ծախսերից են եկամտահարկի գանձման հետևանքով եկամտի կրճատումը²³ և ԸՆԾ-ից հեռացումը: Բացի այդ, մոդելը հաշվի է առնում երեխայի խնամքի գծով առաջացող ծախսերը միայնակ ծնողների և այն ամուսնական զույգերի համար, որոնց ամուսիններից մեկն արդեն աշխատում է, ինչպես նաև եկամտի կորուստը ոչ ֆորմալ աշխատանքից: Վերլուծության նպատակով դիտարկում են միայն ԸՆԾ-ում ընդգրկված շահառուների համար առավել բնորոշ նվազագույն և միջինից ցածր ֆորմալ աշխատանքի անցնելու լծակները: ՏՀԶԿ-ի մոդելը կիրառվում է 4 ստանդարտ տնային տնտեսությունների խմբերի նկատմամբ, որոնք ենթադրում են աշխատունակ չափահաս անդամի առկայություն. (1) ֆորմալ աշխատանքի անցնող մեկ աշխատունակ անդամ ունեցող տնային տնտեսություն, (2) ամուսնական զույգից բաղկացած տնային տնտեսություն, որտեղ ամուսիններից մեկը շարունակում է չաշխատել, իսկ մյուսն անցնում է ֆորմալ աշխատանքի, (3) միայնակ ծնողից և երկու երեխաներից բաղկացած տնային տնտեսություն և (4) երկու աշխատունակ անձանցից ու երկու երեխաներից բաղկացած տնային տնտեսություն, որտեղ աշխատունակ անձանցից մեկն աշխատանք ունի, իսկ մյուսը՝ ոչ: Հայաստանում ընտանեկան նպաստի ծրագրում ընդգրկվելու համար բավարար միավոր կարող են ունենալ միայն իրենց կազմում երեխա ունեցող տնային տնտեսությունները: Նշենք, որ այս մոդելը ենթադրում է, որ տնային տնտեսությունը աշխատանքային եկամտից, ընտանեկան նպաստից և գործազրկության նպաստից բացի, որևէ այլ ֆորմալ եկամտի աղբյուր չունի²⁴:

Հարկերի և ԸՆԾ-ի նախապայմանների ընդհանուր ազդեցության հետևանքով երկու ծնողներից և երեխաներից բաղկացած ընտանիքը, եթե ծնողներից մեկը նվազագույնից փոքր-ինչ բարձր աշխատավարձով ֆորմալ աշխատանքի անցնելու որոշում կայացնի, կկորցնի լրացուցիչ եկամտի մոտ 80 տոկոսը: Առաջին սցենարում հաշվի են առնվում հարկային և նպաստների կանոնները միջին աշխատավարձի (ՄԱ) 33 տոկոսի սահմաններում աշխատանքի անցնելու դեպքում, ինչը համապատասխանում է տարեկան 613,831.7 ՀՀ դրամին կամ 1.1 անգամ 2013 թ. 45,000 ՀՀ դրամ


²³ 2013 թ. սկսած՝ ամսական մինչև 120,000 ՀՀ դրամ աշխատավարձը ենթակա է 24,4 տոկոս միասնական հարկի, որը միավորում է եկամտահարկը և սոցիալական ապահովության վճարը:

²⁴ ԸՆԾ-ի իրավունակության բանաձևում ներառված եկամտի այլ տեսակները, մասնավորապես՝ կենսաթոշակները և գնահատված գյուղատնտեսական եկամուտը հաշվի առնելու դեպքում տնային տնտեսությունը ԸՆԾ-ից կհեռացվի լրացուցիչ եկամտի ավելի ցածր մակարդակի դեպքում, քան ներկայացված է մոդելում: 2013 թ. մայիսին ԸՆԾ-ի շահառու տնային տնտեսությունների կողմից հաղորդված ոչ աշխատանքային եկամուտը ամսական կազմում էր 20,000 ՀՀ դրամ:


նվազագույն ամսական աշխատավարձին (ՆԱ): Երկու երեխայից և երկու աշխատունակ չափահաս անձանցից բաղկացած ընտանիքը, որտեղ ամուսիններից մեկը շարունակում է չաշխատել, իսկ մյուսը աշխատանքի է անցնում ՄԱ-ի 33 տոկոսի աշխատավարձով, կգրկվի ընտանեկան նպաստի իրավունքից: Փաստորեն ֆորմալ աշխատանքից առաջացած ծախսը կգերազանցի 80 տոկոսը: Այլ կերպ ասած՝ 100 ՀՀ դրամ լրացուցիչ եկամտից տնային տնտեսությանն իրականում բաժին է հասնում 20 դրամից քիչ: Նույնպիսի իրավիճակ է ստեղծվում ՄԱ-ի 50 տոկոսի պարագայում: Սակայն այդ դեպքում ավելի բարձր աշխատանքային եկամուտը մասամբ չեզոքացնում է ընտանեկան նպաստի կորուստը, ինչը բացատրվում է ավելի ցածր լրացուցիչ ծախսով:

Միայնակ ծնողից և երեխաներից բաղկացած տնային տնտեսության համար ֆորմալ աշխատանքի անցնելու դեպքում հարկերի և նպաստների գործոններն ավելի փոքր դեր են խաղում, սակայն երեխայի նպաստի գծով ծախսը հաշվի առնելու դեպքում կարելի է կանխատեսել, որ ֆորմալ աշխատանքի անցնելը կարող է հանգեցնել զուտ կորստի: Միայնակ ծնողից և երեխաներից բաղկացած տնային տնտեսության համար աշխատանքի անցնելու հետ կապված լրացուցիչ ծախսը համեմատաբար ցածր է (26.4 տոկոս), քանի որ նույնիսկ 33 տոկոս ՄԱ-ի դեպքում տնային տնտեսությունը ոչ միշտ է գրկվում ընտանեկան նպաստի իրավունակությունից (պատկեր 50): Սակայն այս խմբին պատկանող տնային տնտեսությունները հավանաբար կկրեն երեխայի խնամքի հետ կապված ծախսեր, եթե գրկված լինեն որևէ այլ օգնության հնարավորությունից: Աղյուսակ 5-ից երևում է, որ երեխային մասնավոր մանկապարտեզ ուղարկելու դեպքում նվազագույնից փոքր-ինչ բարձր աշխատավարձով աշխատանքի անցնելիս միայնակ ծնողը ստացած գումարը գրեթե ամբողջությամբ կծախսի մանկապարտեզի վարձը վճարելու համար: Նույնիսկ պետական մանկապարտեզից օգտվելու դեպքում լրացուցիչ ծախսը կկազմի աշխատանքային եկամտի 43 տոկոսը: Երեխայի խնամքի ծախսը, կախված եկամտի մակարդակից, չի փոխվում և բավական մեծ բեռ է ցածր վարձատրվող անձանց համար, ուստի դրա ազդեցությունը ավելի փոքր է այն կանանց պարագայում, որոնք աշխատանքի են անցնում 50 տոկոս ԱՄ-ից փոքր-ինչ բարձր աշխատավարձով:

Պատկեր 50. 33% ՄԱ-ի հարկման հետևանքով ընդհանուր եկամտի կրճատման կշիռը



Պատկեր 51. 50% ՄԱ-ի հարկման հետևանքով ընդհանուր եկամտի կրճատման կշիռը



Աղբյուրը՝ հեղինակների հաշվարկները SSԿԱՀ 2012 թ. հիման վրա:

Աղյուսակ 5. Հարկման հետևանքով ընդհանուր եկամտի կրճատման կշիռը երեխայի խնամքի ծախսի և դրա բացակայության պարագայում

Հարկման և երեխայի խնամքի ծախսի հետևանքով ընդհանուր եկամտի կրճատման կշիռը

1 ծնող 2 երեխա	Չի ուղարկում	Պետական մանկապարտեզ* մանկապարտեզ*	Մասնավոր մանկապարտեզ**
33% ՄԱ ¹ աշխատանք	26.40%	42.50%	93.90%
50% աշխատանք ¹	27%	37.70%	71.50%

Նշում: Հաշվարկում հաշվի չի առնվում գործազրկության նպաստը:

ՄԱ= միջին աշխատավարձ, *տարեկան 49,649 ՀՀ դրամ 1 երեխայի համար, **տարեկան 207,223.2 ՀՀ դրամ 1 երեխայի համար:


Աղբյուրը՝ հեղինակների հաշվարկները SSԿԱՀ 2011թ. հիման վրա:

Մոդելը կարող է նաև ընդգրկել լրացուցիչ սցենարներ, որոնք հաշվի են առնում ֆորմալ աշխատանքի անցնելու դեպքում ոչ ֆորմալ եկամտի կորստի հետ կապված ծախսը (տե՛ս հավելված 3): Որոշ ենթադրություններ կատարելուց հետո անձը, որն ամուսնացած է, ունի երկու երեխա և ընտանեկան նպաստ է ստանում, նպատակահարմար չի գտնի ֆորմալ աշխատանքի անցնել 33 տոկոս ՄԱ-ով, եթե արդյունքում նաև զրկվելու է ոչ ֆորմալ աշխատանքից:

Կարո՞ղ են արդյոք ակտիվացման միջոցառումները նպաստել ծրագրից սոցիալական աջակցության շահառուների հեռացմանը

Ակտիվացման միջոցառումներն աշխատունակ գործազուրկ անդամ ունեցող տնային տնտեսությունների նկատմամբ կիրառելու դեպքում նրանց շուրջ 50 տոկոսը դուրս կմնար ծրագրից առանց տնային տնտեսության նյութական վիճակի զգալի բարելավման: Պատկեր 50-ում ներկայացված է առնվազն մեկ չգրադված աշխատունակ չափահաս անդամ ունեցող տնային տնտեսություններում ակտիվացման միջոցառումների կիրառման ազդեցությունը (երկու կամ ավելի աշխատունակ անդամ ունեցող տնային տնտեսություններ և մեկ աշխատունակ անդամ ունեցող, խնամարկյալներ չունեցող տնային տնտեսություններ): Եթե նման տնային տնտեսությունների (ընդհանուր առմամբ շուրջ 74,000) մեկ անդամին նվազագույն աշխատավարձով ֆորմալ աշխատանք (կամ նվազագույն աշխատավարձով հանրային աշխատանք) առաջարկվեր, որը նա պարտավոր լիներ ընդունել, առաջացող լրացուցիչ եկամտի արդյունքում այդ տնտեսությունների 50 տոկոսն իրավունակության շեմից դուրս կմնար: Ինչպես ներկայացված է հարկերի և նպաստների մոդելում, նման տնային տնտեսությունները ոչ միշտ կհայտնվեին նախկինի համեմատ ավելի բարվոք վիճակում և կարող էին նույնիսկ զուտ եկամտի կորուստ ունենալ, եթե ստիպված լինեին հրաժարվել նախկինում ունեցած ոչ ֆորմալ աշխատանքից: Գլուխ 3-ում կքննարկվեն այլ երկրներում որդեգրված քաղաքական լուծումները, որոնք հնարավորություն են տալիս ցածր վարձատրությամբ աշխատանքի անցնելու դեպքում խուսափել իրավունակության նման կտրուկ կորստից:


Պատկեր 52. Իրավունակության փոփոխությունը երեխայի խնամքի պարտականություններով չգրադված մեկ աշխատունակ անդամ ունեցող տնային տնտեսությունների համար պարտադիր ակտիվացման միջոցառումների կիրառման դեպքում



Աղբյուրը՝ հեղինակների հաշվարկները ԸՆԾ-ի շահառուների մասին վարչական տվյալների բազայի հիման վրա:
 Նշում: Տնային տնտեսությունների ԸՆԾ-ի անապահովության միավորների բաշխումը 2012 թ. մայիսին (գնահատված) և նոր անապահովության միավորի հաշվարկված բաշխումը (eval_sim) տնային տնտեսության մեկ աշխատունակ անդամին նվազագույն աշխատավարձով աշխատանքի անցնելու դեպքում:

Ներկայումս ԸՆԾ-ի աշխատունակ շահառուներից քչերն են գրանցված ԶՊԾ-ում: Ֆորմալ աշխատանք չունեցող անձանց հնարավոր աջակցության տարբերակ է նրանց պարտադրելը գրանցվել ԶՊԾ-ում, ինչպես որ ընդունված է ԵԿԱ երկրների մեծ մասի սոցիալական անապահովության ծրագրերում: Մակայն տեղեկատվական համակարգի տվյալների համաձայն՝ 2012 թ. որպես գործազուրկ գրանցված 186,000 աշխատունակ անձանցից քչերն էին հաշվառման կանգնել զբաղվածության ծառայությունում (տե՛ս պատկեր 51): Այդ անձանց մի մասը կարող էր ենթադրաբար զբաղված լինել գյուղատնտեսության ոլորտում և հետևաբար շահագրգռված չլինել այլ աշխատանքի անցնել: Իրոք, զբաղվածության ծառայությունում հաշվառման կանգնած և գյուղատնտեսական եկամուտ չունեցող տնային տնտեսությունները կազմում են 10 տոկոս, մինչդեռ գյուղատնտեսական ակտիվներ ունեցող տնային տնտեսությունների հաշվառումը կազմում է ընդամենը 2 տոկոս: Ուշագրավ է, որ կանայք ավելի շատ են օգտվում զբաղվածության ծառայություններից, քան տղամարդիկ: Իրականում, սակայն, ներկա իրավունակության բանաձևը չի շահագրգռում տնային տնտեսությունների անդամներին գրանցվել զբաղվածության կենտրոններում: Այն տնային տնտեսությունները, որոնք, առանց իրենց աշխատունակ անդամներին ԶՊԾ-ում գրանցելու, բավարար միավոր են կուտակում ԸՆԾ-ում, 2% փոխարկվելու համար, ԶՊԾ-ի ծրագրերում մասնակցելու համար որևէ լծակ չունեն:

Պատկեր 53. Որպես գործազուրկ գրանցված աշխատունակ շահառուները




Աղբյուրը՝ հեղինակների հաշվարկները ՏՏԿԱՀ 2012 թ. հիման վրա:
 Նշում: 2013 թ. մայիսին որպես գործազուրկ գրանցված աշխատունակ շահառուներ: Անձը համարվում է գրանցված գործազուրկ, եթե ստացել է սոցիալական անապահովության համապատասխան միավորը:

Ներկա պահին ԱՇԱԾ-ներում սահմանափակ թափուր տեղերի պատճառով ԶՊԾ-ն հնարավորություն չունի ակտիվացման միջոցառումներում ներառել յուրաքանչյուր տնային տնտեսության մեկ անդամի: Մեկ ամսվա ընթացքում թիրախային խմբի գրանցված

գործազուրկների միայն 3 տոկոսն է մասնագիտական ուսուցում ստացել: Մակայն գրանցված գործազուրկների մոտ 30 տոկոսը հայտնել է, որ կուզենար մասնակցել տեխնիկական վերապատրաստման և սեփական բիզնեսի հիմնադրման գծով ուսուցմանը: ԶՊԾԳ-ի միջոցով 2012 թ. լրացվել է 11,538 թափուր աշխատատեղ²⁵: Թեև ներկայիս աշխատաշուկայի պայմաններում այդ ցուցանիշը բավականին տպավորիչ է, ընդհանուր գրանցվածների թվի համեմատ (62,000 2012թ.)՝ այն մեծ չէ: Այն դեպքում, եթե ԸՆԾ-ի բոլոր աշխատունակ շահառուները (186,000) կամ նույնիսկ յուրաքանչյուր տնային տնտեսությունից (85,000) մեկը պարտադրված լիներ գրանցվել ԶՉԾ-ներում, առաջարկվող ծառայությունների ծածկույթը նույնիսկ ավելի սահմանափակ կլիներ:

Պատկեր 54. Մասնագիտական ուսուցման ծածկույթը՝ ըստ շահառուների կարգավիճակի



Աղբյուրը՝ հեղինակների հաշվարկները ԳՈՐԾ տեղեկատվական համակարգում 2013 թ. հոկտեմբերի դրությամբ գրանցված գործազուրկների մասին տվյալների հիման վրա:

Ընդհանուր բնակչության համեմատ՝ ԶՉԾ-ում գրանցված ԸՆԾ-ի շահառուների մասնակցության հավանականությունը ԱՇԱԾ-ներում ավելի մեծ է: ԸՆԾ-ի շահառուները և ոչ շահառուները մասնագիտական ուսուցմանը կարող են մասնակցել հավասար հավանականությամբ, սակայն ԸՆԾ-ի շահառուների շրջանում պահանջարկն ավելի մեծ է: Մասնագիտական ուսուցում է ցանկանում ստանալ ԸՆԾ-ի շահառու չհանդիսացող անձանց 27 տոկոսը, իսկ ԸՆԾ-ի շահառուների դեպքում այդ ցուցանիշը կազմում է 34 տոկոս (տե՛ս Պատկեր 54): Դա վկայում է, որ ԸՆԾ-ի շահառուները լավ են պատկերացնում աշխատանքի առաջարկություններ ստանալու համար մասնագիտական ուսուցման կարևորությունը և ցանկանում են դիմել այդ քայլին, ընդ որում նրանցից շատերը հավանաբար ծանրաբեռնող չեն համարում փոխադարձ պարտավորությունների համակարգը, եթե ծառայությունները օգտակար բնույթ ունեն:

²⁵ Ըստ 2013 թ. ԶՊԾԳ-ի պաշտոնական տվյալների:

Արդյունքները ցույց են տալիս, որ սահմանափակ առաջարկի խնդրի լուծման և ուսուցման արդյունավետության բարձրացման նպատակով շահառուների ընտրության հասցեականությունը բարձրացնելու խնդիրը լուծելու համար պետք է բարելավել պրոֆիլավորումը: Առաջարկի սահմանափակ լինելն անմիջապես հարց է առաջացնում, թե ով պետք է առաջինը ուսուցում անցնի: Կարելի է ենթադրել, որ նախ ուսուցում պետք է ստանան անհապաղ կարիք ունեցող անձինք, որոնք որոշվում են ըստ անապահովության ռիսկի աստիճանի: Կարելի է նաև ենթադրել, որ առաջին հերթին ուսուցում պետք է ստանան այն անձինք, որոնց համար այն ավելի կմեծացնի աշխատանք գտնելու հավանականությունը: Այդ երկու փաստարկները միմյանց չեն բացառում, սակայն առաջինը կարևորում է արդարության, իսկ երկրորդը՝ արդյունավետության սկզբունքը: Անկախ նրանից, թե ինչ կորոշեն քաղաքականություն մշակողները, ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է մշակել մասնագիտական ուսուցում ապահովող կառուցակարգ: Դա իրականացնելու համար ՀԶԾ-ները պետք է ստեղծեն պրոֆիլավորման գործիքներ և գնահատեն ստացված տեղեկատվության որակը (քննարկվում է գլուխ 3-ում):

Գլուխ 3. Նոր ակտիվացման համակարգի առաջնայնությունները

Հիմնական ուղերձները

ՄՊ ծախսերի ազդեցությունը աղքատության և ներառման վրա կարելի է հասցնել առավելագույնի ծրագրային և համակարգային մակարդակում բարելավումների շնորհիվ:

- Պետք է բարեփոխել ՄԱ նպաստների շահառուների ընտրության համակարգը՝ հասցեագրելով նպաստները աղքատ բնակչությանը, բարելավել տարատեսակ ծրագրերի կոորդինացումը և ֆորմալ աշխատանքի անցնելու լծակները:
- Հայաստանի տնտեսության կառուցվածքից երևում է, որ անապահովության միավորի անուղղակի եղանակով գնահատման (ԱՄԱԳ) բանաձևը հնարավորություն կտա ավելի լավ բացահայտելու սպառողական աղքատներին և արդյունքում կրճատելու ներառման սխալը:
- ԱՄԱԳ-ի բանաձևի շնորհիվ հնարավոր կլինի նաև կազմել տվյալների բազա՝ տարատեսակ նպաստների հասցեականությունը՝ ըստ կենսամակարդակի տարբեր շեմերի սահմանելու համար, համախմբելով բոլոր ծրագրերը միասնական համակարգում:
- Ոչ դրամական ծառայությունների մատուցման առումով սոցիալական ծառայությունների համալիր կենտրոնների ստեղծման և շահագործման արդյունքում էական քայլեր են ձեռնարկվել սոցիալական ծառայությունների ինտեգրման ուղղությամբ:
- Հաջորդ փուլում կառավարությունը պետք է ապահովի տարբեր ծրագրերի կառուցվածքի փոխադարձ շահավետությունն ու համադրելիությունը, որպեսզի միասնական համակարգող մարմնի միջոցով հնարավոր լինի գնահատել տնային տնտեսությունների անդամների կարիքները և կոորդինացնել մասնագիտացված գործակալությունների միջամտությունները:

Նպաստների համակարգը կարող է խթանել աշխատունակ անձանց աշխատանքի տեղավորումը, սակայն դա կպահանջի մասնագիտացված ծառայությունների զգալի ընդլայնում և ուժեղ պրոֆիլավորման համակարգ:

- Աշխատունակ շահառուների ակտիվացման ծրագրերը միավորում են անհատներին ԱՇ-ում ինտեգրմանը միտված ֆինանսական աջակցությունը, ծառայությունները և պատասխանատվության միջոցները:
- Հայաստանում բոլոր աշխատունակ անձանց համար նախապայմանների կիրառումը պետք է իրականացվի *միայն հետևյալ համակարգային մակարդակի* բարելավումներից

հետո. (i) գործող ծառայություններից օգտվելու լծակների ուժեղացում, (ii) մեծ թվով աշխատունակ շահառուների սպասարկելու նպատակով ՀԶԾ-ների թափուր աշխատատեղերի և ԱՇԱԾ-ների ապահովման առումով կարողությունների հզորացում և (iii) նպաստների բանաձևի արդիականացում, որը հնարավորություն կտա վերացնելու ցածր վարձատրվող ֆորմալ աշխատանքի տեղավորվելու ապախթանիչները: Մոտ ապագայում ակտիվացման շեշտադրումը պետք է դրվի ծառայությունների ակտիվ առաջարկի և դրանցից օգտվելու շահադրդման, ոչ թե նոր պարտավորությունների սահմանման վրա:

- Բացի այդ, տրամադրվող ծառայությունները պետք է համապատասխանեցվեն շահառուների կարիքներին, որպեսզի նախապայմանները դառնան կիրարկելի և արդար: Այդ ծառայությունները պետք է նպաստեն կանանց՝ տնային խնամքի հետ կապված հոգսերի թեթևացմանը, նախատեսեն ինքնազբաղվածության տարբերակներ՝ հաշվի առնելով բազմաթիվ թիրախային ոլորտներում աշխատավարձերի ցածր մակարդակը, նաև հատուկ աշխատանքային հմտությունների զարգացմանը զուգահեռ անդրադառնան որոշ մասնակիցների բազային հմտությունների բացերի վերացմանը:
- Հաշվի առնելով սահմանափակ կարողությունները՝ ուժեղ պրոֆիլավորման համակարգը կօգնի սոցիալական գործերի կառավարիչներին ծառայությունների հասանելիության ապահովման հարցում:


Երեխաների մարդկային կապիտալի պահպանման և զարգացման նպատակով կարելի է կիրառել նաև նախապայմաններ

- Սոցիալական աջակցության միջոցով կարելի է խթանել երեխաների մարդկային կապիտալի զարգացումը, նպաստել միջսերնդային աղքատության հաղթահարմանը և ապագայում նվազեցնել կախվածությունը մասնավոր դրամական փոխանցումներից:
- Ոչ պայմանային դրամական փոխանցումները (ՈՊԴՓ) ինքնին զգալի դրական ազդեցություն են թողնում երեխաների առողջության և կրթության վրա: Սակայն նպաստի տրամադրումը հատկապես մարդկային կապիտալի զարգացմանը նպաստող ծառայություններից օգտվելով պայմանավորելը, երբ այլապես դրանցից օգտվելու մակարդակը ցածր կլիներ, կարող է բարձրացնել այդ ներդրումների արդյունավետությունը:
- Մարդկային կապիտալի ձևավորմանը միտված նախապայմանները կարող են նպաստել միջնակարգ դպրոցն ավարտելու խթանմանը կամ երեխաների թերսնուցման նկատմամբ հսկողության սահմանմանը և վերացմանը միտված առողջապահական ծառայություններից օգտվելուն: Նշված բոլոր ոլորտներում անապահով երեխաների վիճակը բարվոք չէ:

Ներածություն

Նախորդ գլխում մանրամասն ուսումնասիրվել են ՍԱ համակարգի ուժեղ և թույլ կողմերը՝ մարդկանց ժամանակավոր ցնցումներից պաշտպանության և աղքատության մեղմացման գործառույթների իրականացման, ինչպես նաև աշխատունակ բնակչությանը արտադրողական աշխատանքի անցնելու տեսանկյունից: Գնահատման արդյունքում պարզվել է, որ ծրագրի, ենթակառուցվածքների և ռեսուրսների առումով համակարգին արդեն իսկ բնորոշ են մի շարք առավելություններ, որոնց վրա կարելի է հիմնվել, ինչպես ամփոփ ներկայացված է պատկեր 55-ում: Սակայն սոցիալական ծախսերի ազդեցությունը աշխատունակ բնակչության և նրանց տնային տնտեսությունների վրա կարելի է էլ ավելի ուժեղացնել ծրագրի և համակարգի հետագա բարելավումների միջոցով:

Պատկեր 55. Պաշտպանության և ակտիվացման նվաճում



Մասնավորապես, ըստ սույն վերլուծության եզրակացությունների, սոցիալապես անապահով խմբերի ակտիվացումը կարող է խթանել գործողությունների հետևյալ երեք ուղղությունները.

- (i) Մշակել նոր հասցեական համակարգ՝ ծրագրի ազդեցությունը աղքատության վրա մեծացնելու և լծակները ակտիվացման նպատակների հետ կապակցելու համար:
- (ii) Միասնական գործառական մոդելի, պրոֆիլավորման մեթոդաբանության և ծառայությունների ընդլայնման միջոցով ստեղծել ակտիվացման սոցիալական ծառայություններ:
- (iii) Բարելավել սոցիալական ապահովագրության ծրագրերի կառուցվածքը՝ աշխատունակ անձանց և ապագա աշխատուժի զբաղվածությունը խրախուսելու համար:


Վերափոխել հասցեականության համակարգը ծածկույթի պակասի կրճատման և կորոդինացման բարելավման համար

ԸՆԾ-ի հասցեականության բանաձևը պատշաճ ձևով արտացոլում է ծրագրում սոցիալապես խոցելի անձանց ընդգրկելու միտվածությունը: Սակայն, ինչպես ներկայացվել է 2-րդ բաժնում, ներկա համակարգին բնորոշ է երկու հիմնական թերություն. (1) ծրագրի ծածկույթի շեղումները նպաստավոր են տնային տնտեսությունների որոշ կատեգորիաների համար (օրինակ՝ ոչ ֆորմալ քաղաքաբնակ աշխատողների և մասնավոր փոխանցումներ ստացողների) և (2) խուսափումը ցածր վարձատրությամբ ֆորմալ աշխատանքի անցնելուց կամ ԱՇԱԾ-ում ընդգրկվելուց՝ պայմանավորված ներկա ծրագրի իրավունակությունը կորցնելու մտավախությամբ: Նպաստները՝ փոքր լինելու պատճառով աշխատուժի ընդհանուր մասնակցության համար արգելք չեն հանդիսանում:

Որոշ բարձր եկամուտ ունեցող երկրներում փորձել են նման արգելքների խնդիրը լուծել՝ բարձրացնելով չհարկվող աշխատանքային եկամտի շեմը կամ հատուկ հարկային արտոնություններ սահմանելով սոցիալական աջակցության շահառուների համար: Այլ կերպ ասած՝ շահառուներին թույլատրվում է ծրագրում ընդգրկված լինելու ընթացքում ավելի շատ գումար վաստակել, քան ծրագրում ընդգրկվելու պահին: Օրինակ՝ Ֆրանսիայում շահառուները շարունակում են ստանալ նվազագույն եկամտի նպաստը տարեկան մինչև 750 ժամ վճարովի աշխատաք կատարելու դեպքում (մինչև 12 ամիս), Նիդեռլանդներում երիտասարդ գործազուրկների եռամսյա աշակերտության ծրագրով նախատեսված 450 եվրո միանվագ վճարը չի ազդում շահառուների գործազրկության նպաստի վրա: Ուրիշ երկրներ, օրինակ՝ ԱՄՆ-ն, մշտական հարկային արտոնություններ են սահմանում ցածր եկամուտ ունեցող աշխատողների համար: Սակայն այդ միջոցառումները հարկաբյուջետային տեսանկյունից ավելի ծախսատար են, քան այլ տարբերակները, եթե եկամտի հարկերից ազատումը ժամանակավոր բնույթ չի կրում: Բացի այդ, բարձր եկամուտ ունեցող երկրներում որպես նպաստի տրամադրման նախապայման գործում է փոխադարձ պարտավորությունների համակարգը՝ ապահովելով, որ շահառուները ջանքեր գործադրեն բավարար վարձատրվող աշխատանք գտնելու համար, ինչպես նաև թույլ չտան ոչ կարիքավոր դիմողների մուտքը ծրագիր (այդ հարցը կքննարկվի հաջորդ բաժնում):

Մի շարք միջին եկամուտ ունեցող երկրներում սոցիալական ապահովության ծրագրերի հասցեականության խնդիրը լուծվում է ԱՄՄԳ-ի սկզբունքով, որը ներքուստ այդքան զգայուն չէ ֆորմալ եկամտի փոփոխության նկատմամբ: ԸԱՄ-ը լայնորեն կիրառվում է մի շարք միջին եկամուտ ունեցող երկրներում, օրինակ՝ Ալբանիայում, Վրաստանում և Կոստվոյում (որտեղ բաղադրյալ բանաձևով ընտանիքի փաստացի անապահովության և անապահովության չափանիշների հիման վրա հաշվարկվում է միասնական միավորը), ինչպես նաև խոշոր ծրագրերի շրջանակներում, այդ թվում՝ Մեքսիկայի «Oportunidades» կամ Պերուի «Juntos» ծրագրերում: Թեև այս մոտեցումն ավելի նվազ չափով է կիրառվում ԵԿԱ երկրներում, յուրաքանչյուր մոտեցում ունի իր ուժեղ և թույլ կողմերը, որոնք ակտիվորեն քննարկվում են տնտեսագետների, քաղաքականություն մշակողների և զարգացման կազմակերպությունների, այդ թվում՝ Համաշխարհային բանկի կողմից (Grosh and Baker, 1995; Tesliuc et al., 2014): Այդ իսկ պատճառով մենք այս աշխատանքում նպատակ չենք հետապնդում դիտարկել յուրաքանչյուր մոտեցման առավելություններն ու թերությունները, այլ ուղղակի ընդգծում ենք հասցեականության ապահովման տարբեր եղանակներից ակնկալվող օգուտներն ու ծախսերը՝ հաշվի առնելով ԸՆԾ-ի ներկա կարիքները: Այդ ծրագրերի մի մասը, մասնավորապես՝ Վրաստանում և Կոստվոյում, համեմատաբար բարձր արդյունքի են հանգեցրել հասցեականության առումով՝ միաժամանակ պահպանելով ստորին քվինտիլի բարձր ծածկույթը, ինչպես որ Հայաստանում է (տե՛ս պատկեր 56):

Պատկեր 56. ԵԿԱ տարածաշրջանի երկրներում ծածկույթն ու հասցեականությունը



Բանաձևը տեղեկություններ է ներառում տնային տնտեսության ակտիվների, կազմի, գրանցված ծախսերի (օրինակ՝ կոմունալ ծառայությունների) և եկամտի (դրամական փոխանցումներ, աշխատավարձ) մասին, որոնց հիման վրա վիճակագրական մեթոդաբանության օգնությամբ հաշվարկվում է տնային տնտեսության սպառման հավանական մակարդակը: Ընդհանուր առմամբ ԸԱՄ-ն ուղղակի արգելքներ չի առաջացնում, որպեսզի իրավունակության շեմին մոտ գտնվող տնային տնտեսությունները խուսափեն ֆորմալ աշխատանքից, քանի որ աշխատանքային վարձատրությունն իրավունակության

հաշվարկման մեջ հաշվի առնվող գործոններից միայն մեկն է և վերջնական գտիչի դեր չի խաղում: Տնային տնտեսությունները կորցնում են նպաստի իրավունակությունն այն պահից, երբ նրանց ընդհանուր տնտեսական իրավիճակը բարելավվում է, որի մասի վկայում են կուտակված ակտիվները:


Գրականության մեջ, որպես կանոն, ընդգծվում է ԸԱՄ ծրագրերի չնչին ազդեցությունը շահառուների աշխատուժի առաջարկի վրա: Ընդհանուր առմամբ տեղեկատվությունն այդ հարցի վերաբերյալ բավականին սահմանափակ է և վերջերս ամփոփվել է (Tesliuc et al., 2014): «PROGRESA» ծրագրի դեպքում Alzúa et al. (2012) ուսումնասիրության հեղինակները փոքր դրական ազդեցություն են բացահայտել կին շահառուների աշխատանքի ժամերի ավելացման առումով, իսկ Skoufias and Di Maro-ն (2008) նույն ծրագրի որևէ նշանակալի ազդեցություն չեն նկատել: Նիկարագուայի և Հոնդուրասի ծրագրերի ուսումնասիրությամբ նույնպես որևէ էական ազդեցություն չի բացահայտվել (Alzúa et al., 2012): Վրաստանում անցկացված վերջին գահատումը (Kits et al, 2014) ցույց է տվել, որ հասցեական սոցիալական աջակցությունից օգտվող տնային տնտեսությունների երիտասարդ կանանց մասնակցության մակարդակը զգալիորեն զիջում է իրավունակության շեմից փոքր-ինչ բարձր գտնվող կանանց ցուցանիշին:

Ներդիր 6. ԱՄԱԳ-ի բանաձևի միջոցով նպաստների բաշխումը. 2013 թ. ՏՏԿԱՀ-ի հիման վրա. նախնական նմանակում

Անապահովության միավորի անուղղակի գնահատման բանաձևը կմիավորի տնային տնտեսությունների ակտիվների, կազմի, գրանցված ծախսերի (օրինակ՝ կոմունալ ծառայությունների համար վճարի) և եկամտի (դրամական փոխանցումներ, ֆորմալ աշխատանք) մասին տեղեկությունը, և դրա հիման վրա կորոշվի տնային տնտեսության որոշակի եկամտային մակարդակում գտնվելու հավանականությունը: Բանաձևը կկազմվի այնպիսի տվյալների հիման վրա, որոնք կարող են ստուգվել սոցիալական աշխատողների կողմից Հայաստանում արդեն իսկ առկա հարուստ տեղեկատվական բազայի և տնային տնտեսություններ կատարվող այցերի միջոցով: Բանաձևը կարելի է նախապես փորձարկել՝ անապահովության տարբեր մակարդակներում գտնվող տնային տնտեսությունների որոշման ճշտությունը ստուգելու համար: Պատկեր 57-ում ներկայացված է անապահովության աստիճանի յուրաքանչյուր քվինտիլում բաշխված անապահով անձանց տեսակարար կշիռը: Մասնավորապես բանաձևի միջոցով բարձր ճշգրտությամբ կարելի է բացահայտել սանդղակի ստորին քվինտիլի աղքատ տնային տնտեսությունները: Փաստացի ԸՆԾ-ի համեմատ՝ լավագույն ԱՄԱԳ-ի մոդելը (որտեղ յուրաքանչյուր մարզի համար կիրառվող գործակիցները տարբեր են) հնարավորություն կտա ավելացնելու ստորին քվինտիլի ծածկույթը՝ ներկայիս 33 տոկոսի հասցնելով 47 տոկոսի, իսկ աղքատների ծածկույթը՝ 23 տոկոսից 33 տոկոսի: Մոդելավորման դրական արդյունքները հիմնված են տնային տնտեսությունների հետազոտության մեթոդաբանությամբ իրականացվող տվյալների հավաքման և ստուգման վրա:

ԸՆԾ ներկա

Պատկեր 57. Մոդելավորված ԱՄԱԳ-ի և ներկա ԸՆԾ համակարգի շահառուների բաշխումը



Աղբյուրը՝ հեղինակների հաշվարկները ՏՏԿԱՀ 2012 թ. հիման վրա:

Բացի այդ, շատ երկրներում ծրագրից տնային տնտեսության հեռանալու եկամտային շեմը ավելի բարձր է սահմանվում, քան մուտք գործելու շեմը, որը լծակներ է ստեղծում ծրագրում գտնվելիս եկամուտ ստեղծելու համար: Գլուխ 2-ում ընդգծվել է, որ ԸՆԾ-ում ընդգրկված տնային տնտեսությունների ծրագրից հեռանալը հիմնականում պայմանավորված է ընդգրկման պահին նրանց՝ իրավունակության շեմին չափազանց մոտ լինելու հանգամանքով, թեպետ նույնիսկ ծրագրից դուրս մնալուց հետո նրանց գրանցված եկամտի մակարդակը շատ չի փոխվում: Բացի այդ, տնային տնտեսությունների համար ծրագրից դուրս հայտնվելն անկանխատեսելի է, որից խուսափելու համար նրանք ի վիճակի չեն քայլեր ձեռնարկելու, ուստի շատերը չեն փորձում ֆորմալ աշխատանք գտնել, քանի որ դա ինքնաբերաբար կարող է հանգեցնել ծրագրից հեռացման: Միաժամանակ մի շարք այլ երկրների խոշոր ծրագրերը, այդ թվում՝ «*Oportunidades*»-ը Մեքսիկայում և «*Bolsa Familia*»-ն Բրազիլիայում նախատեսում են ծրագրից աստիճանաբար ելք հետևյալ գործընթացի միջոցով. (1) ծրագրում ընդգրկվելու համեմատ՝ ծրագրի ելքի ավելի բարձր շեմ, որի շնորհիվ շահառուն կգրկվի նպաստից միայն այն դեպքում, երբ կհասնի աղքատությունից դուրս գալու համար անհրաժեշտ կայուն կենսամակարդակի, ոչ թե եկամտի ցանկացած ժամանակավոր աճի դեպքում, (2) նախօրոք՝ մի քանի ամիս առաջ ծանուցում շահառուին նպաստից զրկելու մասին, եթե նույնիսկ նա արդեն գերազանցել է շեմը, ինչը հնարավորություն կտա նրան նախապատրաստվելու և այլևս չերկմտելու նոր աշխատանք փնտրելու հարցում, (3) ծրագրից աստիճանաբար հեռանալու գործընթացը մեղմացնելու նպատակով օգնության փաթեթի տրամադրում, որը փոքր է ամենաաղքատ տնային տնտեսություններին տրվող հիմնական սոցիալական աջակցության փաթեթից: Բացի այդ, ինչպես կներկայացվի հաջորդ բաժիններում, նման ծրագրերում, որպես կանոն, դրամական օգնությունը զուգորդվում է մարդկային կապիտալի զարգացման ուղղությամբ ձեռնարկվող այլ միջոցառումներով, որոնք միտված են աղքատության հաղթահարմանը երկար ժամետում՝ վերացնելով նաև աղքատության ոչ ֆինանսական գործոնները:

Հայաստանում նոր ԱՄԱԳ-ի բանաձևը հնարավորություն կտա բարձրացնելու սոցիալական աջակցության հասցեականության աստիճանը և կնպաստի իրավունակության էլ ավելի ճկուն որոշմանը՝ ավելի շատ հաշվի առնելով թիրախային խմբերի կարիքները և սահմանելով ծրագրի ելքի տարբեր շեմեր: *Նախնական* հաշվարկները ցույց են տալիս, որ ԱՄԱԳ-ի բանաձևը Հայաստանում հնարավորություն կտա նվազեցնելու սոցիալական աջակցության հասցեատերերի որոշման հարցում անճշտության աստիճանը՝ ապահովելով ավելի մեծ թվով անապահով մարդկանց ընդգրկումը ծրագրերում նույն չափի բյուջեի պայմաններում (տե՛ս ներդիր 6): Ճկուն բանաձևի առակայությունը հնարավորություն կտա եկամտի տարբեր շեմերից կախված տարատեսակ նպաստներ սահմանել, որոնց մի մասը նախատեսված կլինի նվազագույն կենսամակարդակի ապահովմանը, մի մասն էլ կնպաստի այլևս ոչ աղքատ տնային տնտեսությունների հեռացմանը սոցիալական աջակցության ծրագրից՝ կրճատելով առաջացող լրացուցիչ ծախսերը նախկին շահառուների համար: Հասցեականության տեսանկյունից, ներկայիս բանաձևի համեմատ, ԱՄԱԳ-ի

առավելությունն այն է, որ ԸՆԾ-ն ներկայումս կարող է ընդգրկել սոցիալապես խոցելի այն անձանց, որոնք կարող են եկամտի իրական պակաս չունենալ: Ուստի բանաձևի վերանայման շնորհիվ հնարավորություն կստեղծվի այլ եղանակներով առաջնահերթություն տալու իրոք սոցիալապես խոցելի խմբերին, մասնավորապես՝ ծնողազուրկ երեխաներին և միայնակ ծնողներին, ինչը ներկա ԸՆԾ-ով նախատեսված է: Բացի այդ, քանի որ ԱՄԱԳ-ի միավորը լիարժեք չի բացահայտում աշխատանքային եկամտի ժամանակավոր կորստի պատճառով աղքատության մեջ հայտնված տնային տնտեսությունները, զուգահեռաբար աշխատանքը կորցրած մարդկանց համար ճկուն սոցիալական ապահովության ծրագրերի նախատեսումը կպահպանի իր կարևորությունը, ընդ որում Հայաստանում այդ գործառույթը կարելի է իրականացնել առկա միանվագ հրատապ դրամական օգնության միջոցով, թեև անհրաժեշտ կլինի ապահովել պատշաճ հաշվառում, ինչպես նաև շահառուների ժամանակավոր խնդիրների լուծման համար նրանց և սոցիալական աշխատողների համատեղ քայլեր:

Կատարելագործել ծրագրի կառուցվածքը, որը հնարավորություն կտա բարելավելու աշխատունակ անձանց զբաղվածության հեռանկարները և ապագա աշխատուժի մարդկային կապիտալը


Հայաստանի բնակչությունը հավասարաչափ բաժանված է ԸՆԾ-ի ներկա կառուցվածքի ծածկույթի ընդլայնման կողմնակիցների և հակառակորդների: 2013 թ. «Հարավային Կովկասի բարոմետրի» ծրագրով պարբերաբար անցկացվող բնակչության կարծիքի ուսումնասիրության հարցաշարը (ՀՌԿԿ 2014 թ.) լրացվեց նոր հարցերով, որոնք պետք է հնարավորություն տային պարզելու, թե Հայաստանի բնակչության կարծիքով ինչպիսին պետք է լինի սոցիալական ապահովության ցանցի կառուցվածքն ու ծածկույթը:

Հարցվողներին տրված առաջին հարցն այն էր, թե արդյոք կուզենային, որ հարկաբյուջետաին անփոփոխ պայմաններում (կամ նույնիսկ ավելի բարձր հարկերի կամ այլ սոցիալական ծառայությունների կրճատման հաշվին) ԸՆԾ-ում ընդգրկվեին ավելի մեծ թվով կարիքավոր ընտանիքներ²⁶: Պատկեր 58-ը ցույց է տալիս, որ հանրությունն անվերապահորեն կողմ չի արտահայտվում ներկա տեսքով ԸՆԾ-ի ընդլայնմանը: Հարցվողների շուրջ 42 տոկոսը լրիվ կամ մասամբ կողմ է ծածկույթի ավելացմանը, սակայն դեմ արտահայտվողների մասնաբաժինը նույնքան մեծ է:

²⁶ Հարցվողներին առաջարկվել է արտահայտել իրենց կարծիքը հետևյալ երկու տարբերակների վերաբերյալ: Տարբերակ 1. ՄԱ-ն պետք է ներառի ավելի քիչ թվով աղքատ ընտանիքներ, քան այսօր, իսկ տնտեսված միջոցները պետք է ծախսվեն այլ պետական ծառայությունների համար կամ ուղղվեն հարկերի կրճատմանը: Տարբերակ 2. պետք է ներառի ավելի մեծ թվով աղքատ ընտանիքներ, քան այսօր, եթե նույնիսկ դա հանգեցնի հանրային այլ ծառայությունների կրճատման կամ հարկերի բարձրացման:

Աղքատ բնակչության պաշտպանությունը սոցիալական ծրագրերի ավելացման միջոցով ապահովելու հարցն ավելի շատ մտահոգում է բարձր եկամուտ ունեցող բնակչությանը: Բարձր եկամուտ ունեցող տնային տնտեսությունների 52 տոկոսը կողմ է ծածկույթի ընդլայնմանը: Զարմանալիորեն հոգուտ ծրագրի ընդլայնմանն արտայատվել են ավելի քիչ թվով միջին և ցածր եկամուտ ունեցող տնային տնտեսություններ, միգուցե այն մտավախության պատճառով, որ դրանից կտուժեն մյուս կարևոր ծառայությունները, որոնք ներկայումս մատուցվում են ամբողջ բնակչությանը, մինչդեռ ծածկույթի ընդլայնումը չի երաշխավորի, որ իրականում կարիքավոր տնային տնտեսությունները շահառու կդառնան:


Պատկեր 58. Աջակցությունը ԸՆԾ-ի ծածկույթի ընդլայնմանը ներկա տեսքով



Աղբյուրը՝ հեղինակների հաշվարկներ ՀՌԿԿ-ի 2013 թ. «Հարավային Կովկասի բարոմետր» հետազոտության հիման վրա:

Այդուհանդերձ, ԸՆԾ-ում աղքատների ծածկույթի ավելացման աջակցությունը զգալիորեն կավելանա, եթե նպաստները հատկացվեն այն պայմանով, որ շահառուները ներգրավվեն մարդկային կապիտալի զարգացման գործողություններում: Սոցիալական ցանցերի ավելացման հարցում Հայաստանի բնակչության հակասական վերաբերմունքը կփոխվի, եթե այդ ծրագրերն ուղեկցվեն մարդկային կապիտալի զարգացմանը միտված որոշ նախապայմաններով, օրինակ՝ դպրոց հաճախելու կամ աշխատանք փնտրելու պահանջներով (պատկեր 59): Հարցվողների շուրջ 65 տոկոսը կողմ է ծածկույթի ընդլայնմանը, նույնսիկ այլ ծառայությունների կրճատման կամ հարկերի բարձրացման հաշվին, այն դեպքում, եթե հնարավոր շահառուներին առաջարկվի մասնակցել նոր միջոցառումներին: Ընդ որում ավելի նեղ ծածկույթին կողմ արտահայտվող անձանց թիվը 44 տոկոսից իջնում է 16-ի: Թեև նախապայմանների կիրառումը նպաստում է բնակչության տարբեր խմբերի կողմից աջակցության ավելացմանը, ուշագրավ է, որ նոր քաղաքականության սցենարին սատարողների թվի առավել բարձր աճ արձանագրվել է ցածր և միջին եկամուտ ունեցող տնային տնտեսություններում: Նման նախապայմանների առկայությունը կարևոր դեր է խաղում գործող սոցիալական ապահովության ծրագրերի ընդլայնման կամ պահպանման հարցում հանրության աջակցությունը ձեռք բերելու համար, ինչպես որ եղել է Լատինական Ամերիկայում, նաև՝ այլ կերպ Եվրոպայում և Միացյալ Նահանգներում:

Պատկեր 59. Աջակցություն ԸՆԾ-ի ընդլայնմանը, եթե նպաստների հատկացման համար սահմանվեն նախապայմաններ



Աղբյուրը՝ հեղինակների հաշվարկները ՀՌԿԿ-ի 2013 թ. «Հարավային Կովկասի բարոմետր» հետազոտության հիման վրա:
 Նշում: Հարցվողներին հարցրել են. «Որքանով եք կողմ կամ դեմ ԸՆԾ-ում ընդգրկված աղքատ ընտանիքների թվի ավելացմանը՝ փոխարենը առաջարկելով նրանց մասնակցել որոշ միջոցառումների, օրինակ՝ աշխատանք փնտրել կամ երեխաներին դպրոց ուղարկել»:

Հայաստանի քաղաքացիների դիրքորոշումները համահունչ են փոխադարձ պարտավորություններ նախատեսող նվազագույն եկամտի ծրագրերի նկատմամբ միջին և բարձր եկամտով երկրների բնակչության դիրքորոշումներին: Նպաստ ստանալու

նախապայմանների օգտին արտահայտվող հարցվողներին նաև հարց են տվել, թե իրենց կարծիքով ինչ նախապայմաններ պետք է կիրառվեն, օրինակ՝ աշխատանք փնտրել, պարտադիր առողջական վիճակի ստուգումներ անցնել, մասնակցել հանրային աշխատանքներին կամ ապահովել երեխաների դպրոց հաճախելը²⁷: «Հարավային Կովկասի բարոմետր» հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ այդ միջոցառումները վայելում են ընդհանուր հանրության և մասնավորապես աղքատ բնակչության աջակցությունը: Դա վկայում է, որ սոցիալական ծրագրերի հնարավոր շահառուները պատրաստ են մասնակցել ավելի խիստ պայմաններով ծրագրերի, եթե առաջարկվող նախապայմաններն իրոք օգտավետ լինեն իրենց համար:

Հաջորդ բաժիններում դիտարկվում են ծրագրային մակարդակով փոփոխությունների երկու տարբերակները, որոնք կարող են կիրառվել Հայաստանում և բարելավել նպաստների համակարգը նախապայմանների շնորհիվ: Այդպիսի ծրագրերի առաջին խումբը լայն կիրառում է գտել SՀԶԿ երկրներում (որոնք մենք անվանում են ակտիվացման ծրագրեր): Այդ ծրագրերի հասցեատերերն աշխատունակ անձինք են, իսկ ծրագրերը միտված են այնպիսի ծառայությունների պահանջարկի ավելացմանը, որոնք կօգնեն մարդկանց աշխատանք գտնել կամ անցնել նոր ավելի արտադրողական աշխատանքի: Ծրագրերի երկրորդ խումբը (որը հայտնի է որպես «Պայմանային դրամական փոխանցումներ»՝ ՊԴՓ) չափազանց տարածված է Լատինական Ամերիկայի միջին եկամուտ ունեցող երկրներում և ներկայումս սկսում է նաև կիրառվել Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի մի շարք երկրներում: Դրանց նպատակն է բարելավել խնամարկյալների, հատկապես՝ ապագա աշխատուժի մարդկային կապիտալը:

²⁷ Նախապայմանների հիմքում համաշխարհային լավագույն փորձն է:

Ակտիվացման ծրագրեր աշխատունակ շահառուներին աշխատաշուկայում ներգրավելու համար

Ակտիվացման ծրագրերը սկիզբ են առել ՏՀԶԿ երկրներում և ուղղված են աշխատունակ սոցիալական աջակցություն ստացողների զբաղվածության ավելացմանը, այդպիսով նաև՝ նպաստներից կախվածության կրճատմանը: Արևմտյան Եվրոպայում հիմնական բարեփոխումները, որոնք կոչվում էին «Աշխատաշուկայում արդի ծառայությունների կիրառում» (Գերմանիայում դրանք հայտնի էին որպես «Հարթցի բարեփոխումներ», իսկ Միացյալ Թագավորությունում «Նոր պայմանավորվածություն»), տեղի են ունեցել 2003–2005 թթ.: Գրեթե նույն ժամանակահատվածում նման բարեփոխումներ են կատարվել Սկանդինավյան երկրներում, մասնավորապես՝ Դանիայում և Նորվեգիայում (Almeida et al. 2012; Eichhorst and Konle-Seidl 2008; Van Berkel and Borghi 2008): Այդ ծրագրերը հիմնված են փոխադարձ պարտավորությունների սկզբունքի վրա, համարվում են նախապայմանային ծրագրեր, որոնց միջոցով պետությունը ներդրումներ է կատարում ծառայությունների հատկացման ուղղությամբ (ինչպիսիք են խորհրդատվությունը, ուսուցումը և աշխատանքային պրակտիկան): Դրանց դիմաց շահառուները պարտավորվում են առավել արդյունավետ օգտվել նոր հասանելի ծառայություններից: Առավել հաջող ակտիվացման ծրագրերի բաղադրիչների անվանումները հաճախ արտացոլում են դրանց լծակները և ԱՇ-ում ընդգրկվելուց բխող օգուտը: Օրինակ՝ Միացյալ Թագավորության «Նոր պայմանավորվածություն» ծրագրի ներքո դրանք կոչվում են «Աշխատանք փնտրողների նպաստ», «Եկամտային աջակցություն» և «Զբաղվածության օժանդակության նպաստ»:

Որպես կանոն, այդ ծրագրերի պահանջը ՀԶՕ-ներում գրանցվելն է և պարտադիր մասնակցությունը աշխատաշուկայի ակտիվ ծրագրերին կամ, ըստ անհրաժեշտության, ընդգրկումը սոցիալական ծառայություններում: Հավելված 1-ում ներկայացված են տարբեր երկրներում սոցիալական նպաստ ստացող շահառուների համար վարվելակերպի սահմանված պահանջները: Գլխավոր պահանջը, որը Հայաստանի դեպքում պարտադիր բնույթ չունի, բոլոր աշխատունակ անձանց գրանցումն է պետական զբաղվածության գրասենյակներում: Ծրագրերը մեծ մասամբ նախատեսում են նաև աշխատանք փնտրելու և, անհրաժեշտության դեպքում, սոցիալական ինտեգրացման գործողություններին մասնակցելու հստակ պարտականություն: Նման գործողություններին մասնակցելուց հրաժարվելը հանգեցնում է նպաստի ժամանակավոր դադարեցման:

Աշխատաշուկայի ինտեգրման հարցում մարտահրավերների բազմազանությունը, որ ներկայացվել էր 1-ին գլխում, պահանջում է սոցիալապես անապահով աշխատանք փնտրողների կարիքներին համահունչ տարատեսակ ծրագրերի մշակում: Վերլուծության մեջ նշված առանցքային խնդիրներից մեկը գենդերային հարթությունում է: Կանանց ընդգրկվածությունը ԱՇ-ում ավելի փոքր է, քան տղամարդկանց, ինչը պայմանավորված է տնտեսական և սոցիալական գործոններով, որոնք անհրաժեշտ է լուծել կանանց

զբաղվածության խրախուսմանը միտված նպատակային միջամտություններով: Հետևաբար ծրագրերը պետք է լրացուցիչ հնարավորություններ ընձեռեն, որպեսզի կանայք կարողանան ժամանակ հատկացնել ուսմանը և օրական մի քանի ժամով ազատվել տնային խնամքի հոգսերից: Ավելին, տնային տնտեսության մակարդակով խոչընդոտների առկայության պարագայում կարիք կարող է առաջանալ, որ սոցիալական միջնորդներն օգնեն տնային տնտեսություններին հասնելու այնպիսի պայմանավորվածության, որի պարագայում կնոջ աշխատանքը շահավետ լինի ընտանիքի բոլոր անդամների համար: Երկրորդ ակնառու խնդիրը զբաղվածության պրոֆիլի առումով գյուղ/քաղաք տարբերությունն է, որը նույնպես ենթադրում է ծառայությունների տարբերակման անհրաժեշտություն: Ինքնազբաղված գյուղական բնակչությանն անհրաժեշտ է աջակցություն՝ արտադրողականության բարձրացման և եկամտի աղբյուրների բազմազանեցման համար, իսկ քաղաք տեղափոխվելու դեպքում նրանց համար շահեկան կարող է լինել նաև միջնորդությունը աշխատանք գտնելու հարցում և տեղափոխման գնի փոխհատուցումը: Քաղաքային աշխատողների համար ակտիվացման ծառայությունները կարող են ներառել միջնորդություն և ուսուցում, որը կարող է նաև դրական անդրադաժնալ շահառուների վարձատրության վրա: Այն անձանց համար, որոնք առաջին անգամ են աշխատանք փնտրում, անհրաժեշտ են ծրագրեր, որոնք կօգնեն նրանց աշխատանքի տեղավորվել, իսկ գործարարությամբ զբաղվելու գծով նպատակային ուսուցումն ու ֆինանսավորումը կարող է խթանել նոր բիզնեսների զարգացումը և ստեղծել լրացուցիչ աշխատատեղեր: ԶՊԾԳ-ն որոշ չափով արդեն իսկ ներգրավված է ԱՇԱԾ-ների դիֆերենցման աշխատանքներում, և հետագա առաջընթացի նախապայմանը գնահատման արդյունավետ համակարգի կայացումն է, որը կարող է օգնել նաև հետագա արդյունավետ մոտեցումների ընտրության հարցում:

Ակտիվացման ծրագրերը պահանջում են սոցիալական գործերի արհեստավարժ կառավարիչներ (սոցիալական և աշխատանքային հարցերով), ինչպես նաև այնպիսի ծառայությունների փաթեթ, որը կանդրադաժնալ շահառուներին և նրանց հոգեբանական կարիքներին, ինչպես նաև տնային խնամքի պարտականություններին: Քանի որ ԱՇ մուտք գործելու հարցում ՄԱ ստացողները հաճախ բազմաթիվ խոչընդոտների են հանդիպում, ակտիվացման հարցում օգտակար են նաև լրացուցիչ ծառայությունները (երեխաների խնամք, ընտանեկան բռնությունից պաշտպանվելու խորհրդատվություն, հոգեբանական աջակցություն), որոնք օգնում են վերացնել աշխատելու խոչընդոտները: Լրացուցիչ ծառայությունների որակը չափազանց կարևոր է: Գործնականում ՏՀԶԿ-ի ծրագրերի մեծ մասի հիմքում սոցիալական գործերի կառավարումն է: Գործի կառավարիչը սոցիալական աշխատող է, որն ուսուցում է անցել. (1) շահառուների նկատմամբ անհատական մոտեցում դրսևորելու, ելնելով իրավիճակից և առկա հնարավորություններից, (2) որոշելու ակտիվացման տեսանկյունից լավագույն ծառայությունները, (3) իրականացնելու ակտիվ սոցիալական միջնորդություն, (4) հետևելու շահառուների առաջընթացին և անհրաժեշտության դեպքում ձեռնարկելու շտկիչ քայլեր: Սոցիալական գործերի լավ կառավարիչը վայելում է շահառուների վստահությունն ու ապահովում նրանց ներգրավումը

ծրագրի ավարտի անձնական պլանի մշակման և իրականացման գործում: Խնդիրներ ունեցող շահառուների պարագայում կարևորվում է մշտական կապի պահպանումը և սոցիալական օժանդակության տրամադրումը:

SZՁԿ երկրներում արձանագրված արդյունքների համեմատ` Հայաստանում պարտադիր ակտիվացման կիրառման շահավետության հարցում զգուշավոր լավատեսության որոշակի հիմքեր կան: Ինչպես վկայում է առկա փորձը (բարձր եկամուտ ունեցող երկրների), ակտիվացման պայմանների կիրառումը զգալի ազդեցություն է թողնում սոցիալական ծրագրերի շահառուների աշխատաշուկա վերադառնալու հարցում (Almeida et al. 2012; Eichhorst and Konle-Seidl 2008): Սակայն կարևոր է նշել, որ SZՁԿ երկրներում բարեփոխումներն իրականացվել են ընդհանուր բարձր կենսամակարդակի պայմաններում, մինդեռ ԸՆԾ-ի չափերը (որոնք բնակչության ստորին քվինտիլի սպառման 60 տոկոսից ցածր են) թույլ չեն տալիս ապրուստը պահպանել միայն դրանց հաշվին և դժվար թե ինքնին խթան հանդիսանան աշխատուժի առաջարկի ավելացման համար: Դա նշանակում է, որ Հայաստանում ակտիվացման հաջողությունն ավելի շատ կախված է որակյալ ծառայությունների առկայությունից, քան աշխատանք փնտրելու լծակների փոփոխությունից: Երկրորդ` համաշխարհային փորձը վկայում է, որ աշխատուժի բարձր պահանջարկի առկայությունը առանցքային դեր է խաղում ԱՇԱԾ-ների հաջող իրականացման համար (Betcherman et al. 2007; Betcherman et al. 2004), ինչպես նաև սոցիալական աջակցության ծրագրերից հեռանալու հարցում (Cappellari and Jenkins 2008): Հետևաբար ակտիվացման ազդեցությունը Հայաստանում նաև կախված է այդ գործոններից: Այդուհանդերձ, հուսադրող է այն փաստը, որ այլ երկրներում աշխատանք փնտրելու լծակների և ծառայությունների կիրառումը կարող է զբաղվածության առումով շոշափելի արդյունքների հանգեցնել նույնիսկ ոչ գործուն աշխատաշուկայի պարագայում, ինչպես, օրինակ` տեղի ունեցավ Պորտուգալիայում տնտեսական ճգնաժամի տարիներին (Martins and Costa 2014):

Ակտիվացումը Հայաստանում պետք է իրականացվի աստիճանաբար` չվտանգելով գործող ծրագրերից բխող օգուտները: Քանի որ Հայաստանում սոցիալական ծրագրերը մեծ դեր ունեն աղքատության կրճատման հարցում, չափազանց կարևոր է, որ *ցանկացած նախապայմանի կիրառումը գույճորդվի նոր հաճախորդների սպասարկման համար անհրաժեշտ կարողություններով և մատուցվող ծառայությունների արդյունավետությամբ:* Հակառակ դեպքում սահմանափակ պետական միջոցները վատնելու, նույնիսկ տնային տնտեսությունները եկամտի կարևոր աղբյուրից զրկելու վտանգ կառաջանա: Ներկայումս դադարեցված գործազրկության նպաստի ծրագրի արդյունքում Հայաստանի ՀՋԾ-ները լավատեղյակ են սոցիալական աջակցության շահառուների նկատմամբ տարբեր երկրներում կիրառվող վարվելակերպի նախապայմաններին: Հարցն այն է, թե նման վարվելակերպի պահանջները կարո՞ղ են նաև փորձարկվել աշխատունակ ՄԱ շահառուների պարագայում, որոնց թիվը շատ ավելի մեծ է (շուրջ 200,000), և որոնց խնդիրներն ավելի շատ են, քան գործազրկության նպաստի շահառուներինը (շուրջ 12 հազար 2012 թ.): Նոր ծրագրի փուլային

իրականացման դեպքում նախ և առաջ կարելի է վարվելակերպի թեթև պահանջներ սահմանել յուրաքանչյուր տնային տնտեսության մեկ աշխատունակ անդամի համար (շուրջ 85,000 մարդ), հատկապես նրանց, ովքեր մոտ են ծրագրից հեռանալու շեմին, և նախապես իրականացնել ընտանիքի բոլոր անդամների պրոֆիլավորում ու ընտրել նրանց, ովքեր աշխատելու ներուժ ունեն, սակայն չեն աշխատում: Մեկ այլ տարբերակի պարագայում այդ մոտեցումը կարելի է նախ փորձարկել անչափահաս խնամարկյալներ չունեցող տնային տնտեսություններում (նոր «սոցիալական նպաստի» շահառուների շրջանում), որոնք կազմում են տնային տնտեսությունների ընդհանուր թվի մոտ մեկ երրորդը (տե՛ս գլուխ 2) և հավանաբար ավելի քիչ խնդիրների առջև կկանգնեն ակտիվ միջոցառումներին մասնակցելիս:

Մինչ ԱՇԱԾ-ների և թափուր աշխատատեղերի առաջարկը շարունակում է աճել, նոր աշխատանք փնտրողների հոսքում առավել կարիքավորների առանձնացման համար անհրաժեշտ է ուժեղ պրոֆիլավորման համակարգ: Ինչպես ներկայացված է գլուխ 2-ում, ԱՇԱԾ-ների և թափուր աշխատատեղերի ներկա պաշարը կազմում է Հայաստանի ՀԶԾ-ներում գրանցված հաճախորդների սուկ փոքր մասը: Աշխատողների պրոֆիլավորման համակարգն օգտագործվում է աճող թվով ՏՀԶԿ երկրներում գործազուրկ հաճախորդների ուժեղ և թույլ կողմերի գնահատման, աշխատանք գտնելու նրանց հնարավորությունների հաշվարկի և համապատասխան միջամտությունների ռազմավարությունների մշակման համար: Պրոֆիլավորման համակարգի առկայությունն առավել կարևորվում է այնպիսի երկրներում, ինչպիսին Հայաստանն է, որտեղ առկա ծրագրերի հնարավորությունները անհամատեղելի են հնարավոր շահառուների թվի հետ: Սովորաբար ծառայություններն ավելի մեծ ինտենսիվությամբ են տրամադրվում աշխատանք գտնելու հարցում լուրջ խնդիրներ ունեցող անձանց:

Հայաստանի նման երկրում առաջնահերթությունը կարող է որոշվել վիճակագրական պրոֆիլավորման մոդելի միջոցով, որը կկիրառվի բոլոր նոր գրանցված ՀԶԾ-ների շահառուների նկատմամբ: Loxha and Morgandi (2014) աշխատանքում ներկայացվում է ՏՀԶԿ երկրներում աշխատանք փնտրող անձանց պրոֆիլավորման մոտեցումների տիպաբանությունը: Պարզ պրոֆիլավորման եղանակներով աշխատանք փնտրող անձինք բաժանվում են առանձին խմբերի՝ ըստ իրենց և սոցիալական գործերի կառավարիչների ընտրության կամ վարչական կանոններին համապատասխան (օրինակ՝ ըստ գործազրկության տևողության կամ տարիքային խմբերի): Ավելի կատարելագործված պրոֆիլավորման եղանակները հիմնվում են տվյալների խորքային ուսումնասիրության վրա, որի միջոցով որոշվում են պրոֆիլավորման կատեգորիաները: Օրինակ՝ Գերմանիայում կամ Դանիայում աշխատանք գտնելու հարցում խնդիրների առջև կանգնող անձանց բացահայտման համար սոցիալական գործերի կառավարիչները դիմում են համակարգչային ծրագրերի, ինչպես նաև հարցազրույցների օգնությանը: Նման բարդ գործընթացը պահանջում է սոցիալական աշխատողների բարձր որակավորում, որպեսզի հավոր

պատշաճի կազմված և անցկացված հարցազրույցների միջոցով կարողանան վերցնել պահանջվող տեղեկությունները աշխատանք փնտրող անձանցից և համադրեն ստացված արդյունքներն այլ վստահելի աղբյուրներից քաղած տեղեկությունների հետ՝ անհատական գնահատում անցկացնելու համար:

Ներդիր 7. Վիճակագրական պրոֆիլավորման մոդելի փորձարկումը Հայաստանի զբաղվածության ծառայություններում

Համաշխարհային բանկը Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության հետ համատեղ անց է կացրել վիճակագրական պրոֆիլավորում ԱՎԾ-ի «ԳՈՐԾ» տեղեկատվական համակարգի միջոցով: 2013 թ. դրությամբ համակարգում գրանցված նախկին և ներկա աշխատանք փնտրողների անանուն տվյալների հիման վրա (270,304 մարդ) կազմվել է 2-ական մոդել, որոնք հնարավորություն են տալիս կանխատեսելու անհատներին հաշվառումից հանելու հավանականությունը 6, 12 և 18 ամիս հետո, ընդ որում այդ փուլերը կարող են դիտվել որպես երկարաժամկետ գործազրկության (ԵԺԳ) տարբեր ժամկետներ: Գործազրկության տևողության վրա մեծ ազդեցություն են թողնում մի շարք գործոններ, այդ թվում անձի իգական սեռը, տարիքը, հաշմանդամությունը, տարրական և հետբուհական կրթական մակարդակը, գործազրկության նպաստ ստանալը և զբաղվածության գործակալությունում գրանցված լինելու տևողությունը, մինչդեռ ձեռներեցությամբ զբաղվելու ցանկությունը և ԱՇԱԾ-ներում ներգրավումը դրական արդյունք ունեն:

Աղյուսակ 6-ում ներկայացված է գրանցվելուց 12 ամիս հետո հաշվառումից հանվելու կանխատեսվող հավանականությունն այն անձանց համար, որոնք հաշվառման են վերցվել 2012 թ. ապրիլ-հունիս ընկած ժամանակահատվածում: 80 տոկոս հատման գծի պարագայում (այսինքն՝ ԵԺԳ-ի կանխատեսվող հավանականության բաշխման վերին և ստորին 20 տոկոս անձանց շրջանում), ըստ կանխատեսման ԵԺԳ-ում հայտնվելու ենթակա անձանց 97 տոկոսը 12 ամիս անց իրոք հայտնվեց ԵԺԳ-ում, իսկ 67 տոկոսը, որ ըստ կանխատեսման՝ պետք է հաշվառումից դուրս գար, իրականում հաշվառումից դուրս եկավ մինչև 12-րդ ամիսը: Միաժամանակ տնտեսական լճացման տարիներին գրանցված գործազուրկների շարժի համեմատ՝ մոդելի կանխատեսման հնարավորություններն ավելի մեծ եղան 2012 թ. գրանցված գործազուրկների շարժի պարագայում, երբ 2009-2010 թթ. խորը տնտեսական ճգնաժամից հետո Հայաստանում տեղի էր ունենում տնտեսական վերականգնում: Մոդելի կանխատեսման ճշգրտությունը համեմատելի է այնպիսի երկրների ցուցանիշների հետ, ինչպիսիք են, օրինակ՝ Իռլանդիան (50 տոկոս հատման գծի պարագայում):

Աղյուսակ 6. Կանխատեսման ճշտությունը 2012 թ. ապրիլ-հունիս ամիսներին գրանցված արական սեռի ներկայացուցիչների համար

Հատման գիծ	0.5	0.6	0.7	0.8
2012 թ. ապրիլ-հունիս ամիսներին գրանցված անձինք	2,492	1,952	1,410	623
12 ամիս հետո ճիշտ կանխատեսումը	1,814	1,522	1,180	561
Ճիշտ կանխատեսման տոկոսը	0.73	0.78	0.84	0.9
Հաշվառումը պահպանած անձանց ճիշտ կանխատեսումը	0.82	0.89	0.95	0.97
Հաշվառումից հանված անձանց ճիշտ կանխատեսումը	0.58	0.58	0.58	0.67

Աղբյուրը՝ Nagler, Morgandi, and Dahlen (2014). Building a Statistical Profiling Model for Registered Unemployed in a middle-income country. Հետազոտություն ՀՀ ԱՎԾ-ի «ԳՈՐԾ» տեղեկատվական համակարգի օգնությամբ:

Միաժամանակ վիճակագրական պրոֆիլավորման մեթոդներն ինքնաշխատ են և ոչ աշխատատար: Այս դեպքում նոր գրանցվող անձանց տրվում է «գնահատական»՝ ըստ գրանցման պահին վերցված տվյալների: Դրա հիման վրա դիմողները բաժանվում են խմբերի, որոնք, ըստ էության, արտացոլում են նրանց երկարաժամկետ գործազրկության հավանականությունը: Այդ ամենը հնարավորություն է տալիս որոշակիորեն կանխորոշելու նրանց տրամադրվելիք ծառայությունները: Ընդհանուր առմամբ երկարաժամկետ գործազուրկ դառնալու բարձր հավանականություն ունեցող անձանց նկատմամբ կարող են անմիջապես կիրառվել ակտիվացման և օժանդակության միջոցառումներ (ինչպես ներկայումս Շվեդիայում է), իսկ այն անձանց, որոնք կկարողանան ինքնուրույն աշխատանք գտնել, առաջարկվում է ինքնասպասարկում և աշխատանքի ինքնուրույն որոնում: Իռլանդիայում պրոֆիլավորման գործիքն օգտագործվել է որոշելու համար սոցիալական գործերի կառավարչի հետ առաջին խորքային հարցազրույցի օրը (մանրամասները տե՛ս Loxha and Morgandi 2014): Վերջերս Համաշխարհային բանկը ԶՊԾԳ-ի հետ համատեղ «ԳՈՐԾ» համակարգի միջոցով Հայաստանում անցկացրել է վիճակագրական պրոֆիլավորման մոդելի ստեղծման հնարավորության ուսումնասիրություն (տե՛ս ներդիր 7), որի արդյունքները հուսադրող են:

Ապագա սերնդի մարդկային կապիտալի կուտակմանը նպաստելու նախապայմանները

Ոչ պայմանային դրամական փոխանցումները, ինչպիսին ԸՆԾ-ն է, ինքնին զգալի դրական ազդեցություն են թողնում աղքատ տնային տնտեսությունների երիտասարդ անդամների առողջության և կրթության արդյունքների վրա: Որոշ պայմաններում լրացուցիչ նախապայմաններ չնախատեսող դրամական փոխանցումները բավարար են աղքատ տնտեսությունների անդամների, հատկապես՝ երեխաների առողջապահական և կրթական վիճակի բարելավման համար: Դա հատկապես տեղի է ունենում այն դեպքերում, երբ. (i) ծառայությունների առաջարկը, օրինակ՝ դպրոցների և բուժհաստատությունների, բավարար է և (ii) տնային տնտեսությունները բնական նախընտրություն (պահանջարկ) ունեն օգտվելու այդ ծառայություններից, եթե դրանք մատչելի լինեն նրանց համար և միակ սահմանափակումը դրամի պակասն է, որը կարող է թույլ չտալ նրանց դա անել: Նման համատեքստում դրամական փոխանցումները նպաստում են խնամարկյալների մարդկային կապիտալի կուտակմանը (օրինակ՝ դպրոց հաճախելուն) նոր եկամտի առաջացման, ինչպես նաև եկամտային պակասուրդի շրջաններում սպառման հարթեցման շնորհիվ:

Թեև հետազոտությունների մեծ մասն անդրադառնում է պայմանային դրամի փոխանցման (ՊԴՓ) ծրագրերին, որոնք առավել տարածված են զարգացող երկրներում, մի քանի հետազոտություններում անց է կացվել նաև ոչ պայմանային ծրագրերի ազդեցության վերլուծություն, որի արդյունքները վկայում են, որ տնային տնտեսություններում հիմնական արգելքը հաճախ ֆինանսների բացակայությունն է (տե՛ս ներդիր 8): Առողջապահական և

կրթական համատարած ծառայությունների ավանդույթներով հարուստ Հայաստանում մեծ է հավանականությունը, որ աղքատ տնային տնտեսությունները ֆինանսական հնարավորություններ ունենալու դեպքում կձգտեն բարելավել երեխաների կրթությունն ու ապահովել նրանց պատշաճ առողջապահությունը: Սակայն այդ տեսակետը հաստատելու համար անհրաժեշտ են լրացուցիչ ուսումնասիրություններ: Նման համատեքստում կարևոր դեր է խաղում կանխիկ դրամի առկայությունը:

Միաժամանակ փաստեր կան, որ սպառման հարթեցման բավարար մեխանիզմների բացակայության պայմաններում Հայաստանի տնային տնտեսությունները ստիպված են եղել կրճատել մի շարք առաջնային ծախսեր, այդ թվում՝ աննդամթերքի, երեխաներին դպրոց ուղարկելու և առողջապահական ծախսերը (Makaryan and Zatikyan 2012): Նման ցնցումներն անդառնալի հետևանքներ են թողնում երեխաների զարգացման վրա և երկարաժամկետ ծախսեր են առաջացնում հասարակության համար: Այդ պատճառով դրամական տեսքով հատկացվող ներկայիս սոցիալական նպաստները պետք է դիտվեն որպես պահպանման ենթակա կարևոր հանրային ներդրում և հնարավորության դեպքում ընդլայնվեն աղքատների ծածկույթը բարելավելու համար:

Գալիք սերնդի մարդկային կապիտալի ավելացումը նպաստում է հետագայում տնային տնտեսության եկամտի ավելացմանը՝ կրճատելով կախվածությունը ՄԱ-ից: Փաստացի տվյալները դեռ քիչ են, ինչպես և երկարաժամկետ արդյունքների ուսումնասիրության համար անհրաժեշտ ժամկետով իրականացված ՊԴՓ ծրագրերը: Այնուամենայնիվ «PROGRESA» ծրագրի փորձը վկայում է, որ կրթության ոլորտում իրականացված ներդրումները հետագայում հանգեցնում են շահառուների ավելի բարձր վարձատրության: «PROGRESA» ծրագրի երկարաժամկետ արդյունքները վկայում են կրթությունը շարունակելու պատճառով երիտասարդների աշխատանքի տևողության կրճատման, երիտասարդ աղջիկներին աշխատաշուկայում ներգրավման, ինչպես նաև, գյուղատնտեսական ոլորտից բացի, տնտեսության այլ ոլորտներում աշխատանք գտնելու միտումների մասին (Berhman et al. 2011):

Հայաստանում կրթության ոլորտին վերաբերող նախապայմանները կարող են նախատեսել ընտանեկան նպաստի տրամադրում ավագ դպրոց երեխաների հաճախելու դեպքում: Նախապայմանների շնորհիվ դրամական փոխանցումների արդյունքը կարող է էլ ավելի բարձր լինել, եթե դրանք խթանեն մարդկային կապիտալի կուտակումն այն ոլորտներում, որտեղ ծառայությունների պահանջարկն այլապես ցածր կլինի: Հայաստանի պարագայում ավագ դպրոց հաճախելու պահանջարկը պետք է խթանել: 2012 թ. ՏՏԿԱՀ-ից երևում է, որ անապահով տնային տնտեսություններում միջնակարգ դպրոցի շրջանավարտ աշակերտների տոկոսը զգալիորեն զիջում է ավելի բարձր կենսամակարդակ ունեցող ընտանիքների ցուցանիշներին, ընդ որում միջնակարգ կրթության նոր բարեփոխման պարագայում այդ ցուցանիշները կարող են էլ ավելի վատթարանալ այն դեպքում, եթե

դպրոցական ուսուցման լրացուցիչ տարիները չընկալվեն որպես արժեքավոր²⁸: 2012 թ. SSԿԱՀ-ի հիման վրա կատարված վերջին հաշվարկներից հետևում է, որ միջնակարգ կրթության բարձր դասարանները չավարտելը համարժեք է երիտասարդների ողջ աշխատանքային շրջանում վաստակվող աշխատավարձի 22 տոկոսի կորստի, իսկ աղջիկների պարագայում՝ 29 տոկոսի (բազային կրթության պարագայում), եթե միջնակարգ դպրոցի ավագ դասարանների վկայականները միջնակարգ դպրոցն ավարտելու պարտադիր պայման լինեն (World Bank 2014c, 56): Աղյուսակ 7-ում ներկայացված են տարբեր երկրներում իրականացվող տարատեսակ ՊԴՓ ծրագրերը, որոնք ազդում են շրջանավարտ շահառուների տոկոսի վրա: ԵԿԱ երկրներում միջնակարգ կրթությանը միտված նման ծրագրերից կարելի է բերել Մակեդոնիայի օրինակը, որտեղ սոցիալական ֆինանսական աջակցություն ստանալը պայմանավորված է միջնակարգ դպրոց այդ տարիքի երեխաների կանոնավոր հաճախելով, որի շնորհիվ երեխաների դպրոցներում ընդգրկումը աճել է 10 տոկոսային կետով, ինչպես նաև կրճատվել են մինչ ավարտելը դպրոցից հեռանալու դեպքերը:

Ներդիր 8. Վերջին տեղեկությունները պայմանային և ոչ պայմանային դրամական փոխանցումների մասին

Նախապայմանների հիման վրա հատկացվող նպաստների և ոչ պայմանային նպաստների ազդեցությունների առանձնացված ուսումնասիրությունները հազվադեպ են: Այդուհանդերձ նման վերլուծությունների արդյունքներից երևում է, որ նախապայմանների կիրառումը ոչ միշտ է անհրաժեշտ, կամ դրանց փոխարեն կարելի է անցկացնել որոշակի վարվելակերպի շահավետության մասին տեղեկատվական քարոզարշավներ: Դպրոց հաճախելու նախապայմանը վերջերս փորձարկվել է Մարոկկոյում: Փորձարկումն է անց է կացվել երկու թիրախային ենթախմբերում, որոնցից մեկի շահառուներին հատկացվել է փոքր գումար աղքատ գյուղական համայնքներում դպրոցական տարիքի երեխաներին դպրոց տեղափոխելու համար: Նպաստի հատկացումը դպրոց հաճախելու պայման չէր նախատեսում, սակայն անվանվում էր կրթության աջակցության ծրագիր: Երկրորդ խմբին հատկացվում էր պետական պայմանային նպաստ՝ սովորական ՊԴՓ: Վերլուծությունը ցույց տվեց, որ նախապայմանի կիրառման և նպաստը միայն մայրերին տրամադրելու արդյունքում դպրոց հաճախելու առումով գրեթե փոփոխություն չարձանագրվեց (Benhassine et al. 2013): Երկրորդ օրինակը Մալավիում անցկացված փորձարկումն էր, որի նպատակը երիտասարդ աղջիկների դպրոցական ուսումը անավարտ չթողնելու խրախուսումն էր (Baird et al. 2012): Շահառուների մեկ խմբին տրվում էր ամսական կրթաթոշակ՝ դպրոց հաճախելու պայմանով (ՊԴՓ), իսկ մյուս խմբին գումարը տրվում էր առանց որևէ նախապայմանի (ՈՊԴՓ): Պարզվեց, որ վերահսկվող խմբի համեմատ, որտեղ ընդգրկված կանանց դրամական նպաստ չէր հատկացվում, ինչպես պայմանային, այնպես էլ ոչ պայմանային նպաստ ստացողների խմբերում ընդգրկված կանանց ուսումն անավարտ թողնելու դեպքերն ավելի հազվադեպ էին: Միաժամանակ նպաստառու երկու խմբերից պայմանային նպաստ ստացողների

²⁸ Դա կարող է պայմանավորված լինել մի շարք հանգամանքներով, մասնավորապես՝ կրկնուսուցման բարձր արժեքով, լրացուցիչ դիպլոմից մեծ անկնկալիքներ չունենալով կամ կրթության որակի վերաբերյալ թերահավատությամբ:

խմբում ուսումն անավարտ թողնելու դեպքերն ավելի քիչ էին: Մյուս կողմից՝ ՈՊՓ-ի շահառուների ցուցանիշներն ավելի բարձր էին ամուսնության և հղիության հետաձգման առումով (Baird et al. 2012):

Միջազգային մակարդակով ավելի շատ տվյալներ կան ՊՐՓ ծրագրերի վերաբերյալ, որոնցից կարելի է առանձնացնել վերջերս անցկացված նման ուսումնասիրությունների համապարփակ վերլուծությունը: Դպրոց ընդունվելու և հաճախելու նախապայմանով ՊՐՓ ծրագրերը լավ արդյունքների են հանգեցնում (Fiszbein and Schady 2009; Saavedra and Garcia 2012): Բացի այդ, ՊՐՓ ծրագրերը դրական են ազդում երեխաների զարգացման այլ ոլորտների վրա (ոչ միայն նախապայմանների, այլև ավելի շուտ եկամտի ավելացման շնորհիվ): Մեքսիկայում տնային տնտեսություններին տրվող նպաստների ընդհանուր գումարի ավելացումը բարելավել է երեխաների զարգացման ցուցանիշները տարբեր տեսանկյուններից՝ ֆիզիկական, սննդառության, ճանաչողական (կոգնիտիվ) և լեզվի զարգացման (Fernald et al. 2008): Ինչ վերաբերում է կրթական առաջընթացին (դպրոց հաճախելուց զատ), իրավիճակն ավելի նրբերանգ է: Այսպես, Կամբոջայում շահառուների մոտ հանրահաշվի կամ լեզվի իմացության բարելավման տեսանկյունից փոփոխություններ չեն արձանագրվել: Դրա բացատրություններից մեկը կարող է լինել այն, որ նախապայմաններով նպաստները տրվում են հիմնականում ցածր առաջադիմություն ունեցող աշակերտներին, որոնց ուսման արդյունքների բարելավումն այնքան էլ իրատեսական չէ (Filmer and Schady 2009): Մինչդեռ Թուրքիայում դրական արդյունք է արձանագրվել կարիքավոր ընտանիքների բազային կրթության աշակերտների առաջադիմության առումով (Ahmed et al. 2007):

Աղյուսակ 7. Դրամական փոխանցումների ազդեցության օրինակները միջնակարգ կրթության վրա

Երկիր	Ծրագրի անվանում	Շահառուներ	Նախապայման	Ծրագրի ազդեցություն
Մակեդոնիա	Սոցիալական ֆինանսական աջակցություն	Միջնակարգ դպրոցի աշակերտներ	միջնակարգ դպրոց հաճախում	Ընդգրկման աճ 10 տոկոսային կետով
Կոլումբիա	«Familias en Accion»	8–17 տարեկան երեխաներ	դպրոց հաճախելու օրերի > 80% ըստ ուսուցչի վկայության	Դպրոց հաճախելու աճ 5.5 տոկոսային կետով
Ջամայկա	Կրթության և առողջապահության բարելավման ծրագիր (PATH)	7–17 տարեկան երեխաներ	դպրոց հաճախելու օրերի > 85% ըստ ուսուցչի վկայության	Դպրոց հաճախելու բարձր մակարդակ
Մեքսիկա	Oportunidades (գյուղաբնակ երիտասարդներ)	0–9 դասարանցիներ	դպրոց հաճախելու օրերի > 85% ըստ ուսուցչի վկայության	Հաճախելու ցուցանիշը չի փոխվել, փոքր-ինչ ավելացել է միջին դասարաններն ավարտողների թիվը (+4.4%)
Թուրքիա	Սոցիալական ռիսկերի մեղմացման ծրագիր	Բազային և միջնակարգ դպրոցի աշակերտներ	Աշակերտների դպրոց և պարբերաբար բուժհիմնարկներ	Ընդգրկման աճ 10 տոկոսային կետով, հաճախելու աճ 5 տոկոսային կետով

Երկիր	Ծրագրի անվանում	Շահառուներ	Նախապայման	Ծրագրի ազդեցություն
			հաճախում	

Աղբյուրը՝ Attanasio et al. (2005); Levy and Ohls (2007); Ahmed et al. (2007); World Bank (2013a).

Ծրագրի բավարար ընդլայնման դեպքում նախակրթարան հաճախելու պայմանը հնարավորություն կտար բարելավելու ինչպես կանանց աշխատանքի տեղավորման, այնպես էլ երեխաների շարունակական ուսման արդյունքները: Վաղ մանկական զարգացման հետազոտությունների ընդհանուր եզրահանգումն այն է, որ վաղ տարիքում մարդկային կապիտալի կուտակման արդյունքները գերազանցում են կյանքի հետագա բոլոր փուլերում այդ ուղղությամբ կատարվող քայլերի արդյունքները: Ուստի նախադպրոցական կրթության մեջ ներդրումը չափազանց կարևոր է Հայաստանում ապագա աշխատուժի ձևավորման համար: Միաժամանակ դա կարող է նպաստել կանանց ակտիվացմանը, եթե նկատի առնենք տանը մնալու և երեխաների խնամքով զբաղվելու հարցում նրանց վրա գործադրվող ուժեղ սոցիալական ճնշումը (տե՛ս գլուխ 1): Սակայն որպեսզի այդ նախապայմանն արդյունավետ գործի, կառավարությունը պետք է ապահովի նախակրթարանների անհրաժեշտ քանակը՝ հարմարեցնելով դրանց աշխատանքային ժամերը կանանց կարիքներին, որպեսզի կանայք կարողանան համատեղել ընտանեան հոգսերն ու աշխատանքը:

Երեխաների թերսնման դեմ պայքարի կամ ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման նպատակով կարող են կիրառվել նաև առողջապահության ծառայություններից օգտվելու նախապայմաններ: Երեխաների և հղի կանանց կարիքներին միտված նման նախապայմաններ նախատեսող ծրագրերի արդյունքները հուսադրող են: Լատինական Ամերիկայի երկրներում երեխաների առողջության ստուգում նախատեսող ՊԴՓ ծրագրերը, օրինակ՝ «*Red de Proteccion Social*»-ը (Նիկարագուա) և «*Familias en Accion*»-ը (Կոլումբիա) դրական արդյունքներ են արձանագրում առողջապահական ծրագրերից ավելի շատ օգտվելու (Attanasio et al. 2005), ինչպես նաև բնակչության պատվաստումների մակարդակի աճի առումով: Թեև Հայաստանում պատվաստումների մակարդակը բարձր է, վերջին «Ժողովրդագրական և առողջության հարցերի հետազոտությունը» ցույց տվեց, որ 0-5 տարեկան երեխաների թերսնման ցուցանիշը հասնում է 20 տոկոսի, և այդ առումով երկիրը գտնվում է առավել վատ ցուցանիշներ ունեցող երկրների ցուցակում՝ զիջելով միայն Տաջիկստանին և Վրաստանին: Թերսնման պատճառները յուրաքանչյուր երկրում տարբեր և տարատեսակ են, ընդ որում դրանց ուսումնասիրությունն այս աշխատանքում նախատեսված չէ, սակայն միջազգային փորձը ցույց է տալիս, որ որոշ (թեև ոչ բոլոր) սոցիալական ծրագրերը հնարավորություն են տվել կրճատելու սննդառության պակասի խնդիրը կյանքի կրիտիկական կարևորություն ունեցող առաջին 1000 օրերի ընթացքում՝ շնորհիվ համայնքային մակարդակով տնային տնտեսություններին մատուցվող ծառայությունների: Ազդեցությունների գնահատման արդյունքները կարևորության տեսանկյունից ընդգծում են (i) ամենաաղքատների վրա կենտրոնացումը և (ii) ծրագրերի երկարատևությունը

անտրոպոմետրիկ միջոցառումների արդյունքները տեսնելու համար (Ruel et al, 2013): Այդ ծառայությունները կարող են նախատեսել նաև երեխայի աճի մշտադիտարկում և սննդառության գործելակերպի վերաբերյալ բժշկական խորհրդատվություն, իսկ անհրաժեշտության դեպքում՝ սնուցիչների տրամադրում: Մյուս կողմից՝ միջազգային փորձը զգուշացնում է նպաստների տրամադրումը պայմանավորել անմիջականորեն երեխաների սնման արդյունքներով, քանի որ դա կարող է շահառու ծնողների մոտ սխալ լծակներ առաջացնել: Այլ ավելի փորձնական բնույթ կրող ծրագրերի շրջանակներում փորձ է արվել պայքարել չափահաս անձանց ոչ վարակիչ հիվանդությունների դեմ՝ տեղեկատվական զրույցներում կամ կանխարգելիչ առողջապահական միջոցառումներում ներգրավման միջոցով: Օրինակ՝ ԱՄՆ-ում փորձեր են արվել ֆինանսապես խրախուսել շահառուներին ֆիզիկական քաշի կորստի համար (Finklestein et al. 2007; Cawley and Price 2011):

Ներդիր 9. «Solidario» ծրագիրը Չիլիում

«Solidario» ծրագիրը Չիլիում կառավարման մոդել էր, որը պետք է կոորդինացնէր երկրում սոցիալական ծառայություններ մատուցող բոլոր կազմակերպությունների աշխատանքը, որոնց շահառուների թիվը կազմում էր Չիլիի 17 միլիոն բնակչության մոտ 5 տոկոսը (շուրջ 225,000 առավել աղքատ ընտանիքներ): Ծրագրի նպատակն էր ապահովել, որ այդ տնային տնտեսությունները հասնեն նվազագույն կենսամակարդակի 53 ցուցանիշներին 7 չափայնություններով, այն է՝ անհատական և գույքի հաշվառում, առողջություն, կրթություն, ընտանեկան դինամիկա, բնակարան, աշխատանք և եկամուտ: Դա համարվում է ծայրահեղ աղքատ ընտանիքների աջակցության համապարփակ և եզակի ծրագիր: Համապատասխան վերապատրաստում անցած խորհրդատուներն իրականացնում են յուրաքանչյուր շահառու տնային տնտեսության, դրա ակտիվների, խնդիրների և նպատակների անհատական վերլուծություն, որի արդյունքում օգնում են նրանց կազմել համապատասխան ծրագիր, որին ընտանիքը պարտավորվում է հետևել նշված 7 չափայնություններով սահմանված թիրախներին հասնելու համար: Սոցիալական աշխատողները հետևում են ընտանիքներին և օգնում նրանց հասնելու նպատակներին՝ տրամադրելով խորհրդատվություն և միջնորդելով նրանց համար տարատեսակ ծառայությունների տրամադրումը, այդ թվում՝ առողջապահական, կրթական, հոգեբանական աջակցության, միկրովարկերի և պետական զբաղվածության ծառայությունների գծով: Դրամական նպաստները հատկացվում են անհատական պայմանագիր ստորագրելուց հետո, ընդ որում դրանց ժամկետը չի գերազանցում 2 տարին, որի ընթացքում նպաստների մեծությունն աստիճանաբար նվազում է: Ամբողջ ընտանիքի համար նպաստը տրվում է կանանց, իսկ պայմանները չկատարելու դեպքում կիրառվում են պատժամիջոցներ:

Զբաղվածության հարցում բազմաթիվ արգելքների հաղթահարման խնդրի առջև կանգնած «Solidario» ծրագրի շահառուներին սպասարկելու համար Չիլիում անցկացվեց պետական ծառայության բարեփոխում: Դրա շրջանակներում ներառվեցին ակտիվացման տարրեր, օրինակ՝ աշխատանքի տեղավորման հնարավորությունների բարելավում մեծահասակների համար նախատեսված գրագիտության դասընթացների շնորհիվ, ուսուցում և հմտությունների զարգացում: Վերապատրաստում անցան նաև զբաղվածության գծով խորհրդատուները, որպեսզի ակտիվորեն օգնեն այն հաճախորդներին, որոնց կապը աշխատաշուկայի հետ թույլ էր:

Աղբյուրը՝ Gotcheva 2014., Camacho et al. 2014.

Հաջողությամբ պսակված աղքատության կրճատման ծրագրերի շրջանակներում նաև փորձարկվել են տնային տնտեսության կենտրոնացման մոտեցումները, որոնց ներքո սոցիալական գործերի կառավարիչների նախաձեռնությամբ կիրառվում են տարատեսակ միջամտություններ: Մինչ այժմ այս բաժնում քննարկվել է հատուկ նախապայմանների կիրառումը որոշակի թիրախային խմբերի նկատմամբ, սակայն իրականում արդի սոցիալական քաղաքականության բազմաթիվ ծրագրեր կիրառում են այդ սկզբունքը տնային տնտեսության մակարդակով, ընդ որում ծրագիրը կազմվում է տնային տնտեսության մակարդակով բազմաչափ մոտեցմամբ: Նման մոտեցմամբ իրականացվում է տնային տնտեսության տարբեր անդամների կարիքների և խնդիրների վերլուծություն, անհատական

ընտանեկան ծրագրի կազմում (ուղղակիորեն աշխատաշուկայի հետ չառնչվող ծրագրերն ու ծառայությունները նույնպես կարևոր են), տրվում են տարբեր մասնագիտների դիմելու առաջարկություններ, կատարվում է ծառայությունների ինտեգրում, խորհրդատվություն և այնուհետև մշտադիտարկում: Նման մոտեցման մեկ այլ բնորոշ հատկանիշը տարբեր գործակալությունների հաճախակի և անհատականացված միջամտություններն են: Նման ծրագրի վառ օրինակ է «Solidario» ծրագիրը Չիլիում (ներդիր 9), որն իրականացրել է այդ համալիր մոտեցումը ծայրահեղ անապահով տնային տնտեսությունների աղքատությունը նվազեցնելու համար և տարբեր գնահատումներով արժանացել գովասանքի աղքատության հաղթահարման տեսանկյունից:

Վերոնջյալ միջազգային փորձը կարող է Հայաստանում ինտեգրացման նոր գործառնային

մոդելի անկյունաքարը դառնալ : Հայաստանում արդեն իսկ մեծ ջանքեր են գործադրվել սոցիալական ծառայությունները մեկ պատուհանի սկզբունքով միավորման ուղղությամբ, որի հիման վրա իրականացվում է սոցիալական պաշտպանության ծառայությունների համախմբումը²⁹: Որպես հաջորդ քայլ՝ այդ գործառնային ինտեգրումը կապահովի տարբեր ծրագրերի լծակների և կառուցվածքի փոխադարձ համալրումն ու համադրելիությունը: Հետագա ինտեգրացման համար անհրաժեշտ է աղքատության հաղթահարման ամբողջական ծրագրի մշակում, որի հիմնասյունը կլինեն տնային տնտեսությունը և զանազան միջամտություններ նախաձեռնող սոցիալական գործերի կառավարիչները: Սոցիալական գործերի կառավարիչները ծրագրի մուտքի և ելքի իրավունակության չափանիշները սահմանելիս կարող են ուղղորդվել քանակական թիրախավորման համակարգով, որի նկարագրությունը տրվել էր այս աշխատանքում:

²⁹ ՄՊԿԾ I և նրան հաջորդող ՄՊԿԾ II ծրագրերի շրջանակներում ՀՀ կառավարությունը ներդրում է կատարել երկրի ամբողջ տարածքում սոցիալական պաշտպանության բոլոր գործառնայինների համախմբման համար, բարելավելով և արդիականացնելով համակարգերը, ստեղծելով համալիր կառավարման տեղեկատվական համակարգ, գործադրելով սոցիալական գործերի կառավարման նոր ընթացակարգեր և իրականացնելով նորարարական միջամտություններ (երկու նոր պետական զբաղվածության ծրագրեր և մասնագիտական կողմնորոշման ծառայություն):

Օգտագործված գրականություն

- Ahmed, A., M. Adato, A. Kudat, D. Gilligan, and R. Colasan. 2007. "Impact evaluation of the conditional cash transfer program in Turkey: Final report." International Food Policy Research Institute, Washington, DC.
